



Հայկական գիտահետազոտական հանգույց  
Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Մտեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

891.99

U - 82



ԱՐԱՅԻ

06 DEC 2010

3

ԵՐԵՎԱՆԻ ԳՐԱԳՐԱԿԱՆԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆ

ՄԵՏՆԱՏ  
ՅԵՐԵՎԱՆ  
1-9-3 ~ 1



891.99  
Կ-82

01 JAN 2009

891.99

Q-89

Ա. Բ. Ա. Զ. Ի

այ.

15

ԼՈՒՅՍԵՐԸ

ՊՍՏՄՎԱԹՔՆԵՐ

517

ԵՏԶՐԱՏ

1931

ՅԵՐԵՎԱՆ

27327

1 FEB 2012

### ԿԱՐՄԻՐ ՀԱՐՍՆԱՑՈՒՆ

190... ԹՎԻ ամառը ուսանող Փանյանը աջտորվել էր Մոսկվայից, վերադես հեղափոխական և ապրում էր ռուսիկանություն հսկողություն տակ:

Յերկու շաբաթ անգործ ու անփող թափառելուց հետո, գտել էր մի մասնավոր դաս և նրա հույսով արձեղ սենյակ քաղաքի հեռ ընկած թաղում: Սենյակի իսկ պատուհանը նայում էր նեղ ու ծուռ փողոցին, ով հորիզոնը ծածկում էր դիմացի հին տունը, փորի տար-ծծված յերկար տարիների խռնավությունը, վառուց էր կորցրել էր յերբեմնի սվաղը, բացելով հին ձևի պլանների շարքերը: Սենյակն այնքան փոքր էր, փոր ա մեջ զգալի տեղ էլին գրավում ուսանողի գրքերը:

Տանտիրուհին-հին սովորություններով մեծացած է կլին, յերկյուղ էր զգում այդ հասարակությունից, ու մեկ պատերին կայցրած յերկար մազերով պատկերներից: Այց ամենից շատ նրան անհանդուստացնում էր ուսանողի «անգործությունը» նա ամբողջ որը նստած գրքեր կարդում: Յերեք որ դիտելուց հետո՝ նա ասաց իր բուսնուն, փորը ճոթեղենի վաճառական էր.

— Գիտե՞ս ես մեր նոր կենտրոն ուրիշ տեսակ մարդ յերնում, մի գլուխ գրքեր ա կարդում ու պատերին կայցրել է յերկար մազերով «Փարիսառների» պատրաներ:

ՊԵՏՏՐՈՑԻ ՏՊԱՐԱՆ  
ԳԼԱՎԼԻՏ. 0573 (Բ)  
ՀՐԱՏ 1781  
ՊԱՏՎԵՐ 8719  
ՏՐՈՒՄ 4000



3717  
38

— Հիմի ասելը ի՞նչ ա. վախում ես յես ել. Ֆարմա- սիոն դառնա՞մ :

— Չե, են եյի ուզում ասել, վար անդործ ա յերե- վում. ինչո՞վ պետք ա սենյակի քրեհը տա :

— Հեր սինսած, յեքա տղայա, մի հինը մանեկի չի՞ ճարի վոր տա :

Տանտիրուհին հանդատացավ : նկատելով վոր ամու- սինը չի շարանում իր արած սխալի համար : Բայց նրա հետաքրքրութունը զրգուում եր ուսանողի տարրինակ կյանքը, ուստի և շարունակ խուզարկու հայացքով հե- տեվում եր նրան :

Ամեն անգամ, յերբ ծառան աշխուժ շարժումներով մաքրում եր ուսանողի սենյակը, տանտիրուհին ներս եր մտնում, իբր թե սգներու համար, բայց իսկապես նրան տանողը կանացի հետաքրքրութունն եր, նո ուչի ու- չով զննում եր ուսանողի սեփականութունը :

Սեղանի վրա մի հաստ գիրք կար. ո՞վ գիտե, «դա- կոն» եր, ավետարա՞ն թե մի ուրիշ, ավելի խորհրդա- վոր բան... Մի որ ել չհամբերեց, կանչեց հարեանի փոքր տղային ու ցույց տալով գիրքը հարցրեց.

— Յերվանդ, ես ի՞նչ գիրք ա :

— Վրեն կապիտալ ա դրած :

— Կապիտալը ինչ ա :

— Ռուսերեն ա, չգիտեմ :

Ամբողջ սրբ տանտիրուհին կրկնում եր մտքում «կապիտալը»-ը խառնելով «կապիտոնի» հետ : Յերբ յե- րեկոյան վերադարձավ ամուսինը՝ նա հարցրեց.

— Մերգո, կապիտալը ի՞նչ բան ա :

— Բա վաճառականի կնիկ ես ու կապիտալը չես իմանում-կապիտալը փողն ա ելի...

Փողը... ինչ խելոք տղա ա ելի մեր նոր կենողը, մի գիրք ունի վրեն կապիտալ ա դրած, միչոտ են ա կար- դում :

— Յերեկ ուզում ա հարստանա. ի՞նչ կա վոր հիմի ամենը գիշեր ցերեկ հարստանալու մասին են մտա- ծում :

«Սելոք տղեն» այդ որվանից նստեց տանտիրուհու մտքում : Շուտով նա ավելի ամբացավ այդ համոզմուն- քի մեջ յերբ իմացավ, վոր Փանյանը մասնավոր դաս ունի : Այժմ աշակերտը ինքն եր դալիս պարապելու ու- սանողի մոտ :

Յեվ քանի վոր տանտիրուհին մի անբժ շիլիլի հիվան- դութուն ուներ՝ իր բարեկամներին ու ծանոթներին ա- տմանացներու հիվանդությունը, ուստի այդ տեսակե- տից ել սկսեց մոտենալ և Փանյանին :

«Սելոք տղա յա, ուչք ու մըաքը փողի վրա... ես- պես տղին կազի մեր Նատալիյեն... Մեղք ա քուրս, աղջիկը հասել ա, չի խմանում վո՞նց ճամբու զնի»...

Յեվ ահա այդ մեծ հարցը սկսվեց քննության ան- վիկ յերկու քույրերի մեջ : Տանտիրուհին հայտնում եր քրոջը իր դիտողութունները ուսանողի մասին, մա- սամբ, ծածկելով թերի կողմերը :

Մրադիրն իրագործելու համար տանտիրուհին յեր- բեմն հրավիրում եր ուսանողին թեյի կամ սուրճի, հյուրասիրում քաղցրավենիներով, թխվածքներով ու զգուշութամբ հարցեր տալիս, նոր «հանդամանքներ» իմանալու համար :

— Վոր ուսումն՝ ավարտեք, ի՞նչ պետք ե պառնաք :

— Աղբակատ եմ լինելու :

— Լավ գործ ա, Ասլանովի պես սեփական տուն, սեփական կառք կունենաք:

— Հա, ի հարկե, համաձայնում եր Փանյանը, ժպտալով:

— Բայց մենակությունը լավ չի... ինչի՞ չեք պըսակլում:

— Յես վոչ թե աղվակատ, այլ վարչապետ պեաք ե դանամ, — կատակով պատասխանում եր Փանյանը:

— Ձե համաքը դենը, յեթե մի լավ նամուսով աղջիկ ըլի, — որինավոր ընտանիքից, բաժինքով, չեք ուզի՞ր...

Ուսանողն դգաց, վոր «ցանց» ե պատրաստվում, բայց իրեն չհասկանալու տվեց:

— Հա, յեթե մի ենպես աղջիկ պատահի, — հարուստ, գեղեցիկ սեփաչյա կամար հոնքերով են ժամանակ կմտածեմ...

Տանտիրուհին ժպտում եր, հյուրասիրում բազմատեսակ մուրաբաներով ու մտքում ասում:

— Կամաց-կամաց կկակղես... մի որ ել վտոդ թեկ կկապենք...

\*\*\*

Ամառվա արեվը մայր մտնելու մոտ եր: Բաղաքի փողոցները, տները, կարծես մեծ հրդեհից հետո անգրաշարձնում եյին կուտակած տաքությունը, ջերմ ալիքներով վողոզում անցորդներին:

Ուսանող Փանյանը վերջացրել եր իր դասը, մի ժամ ել կարդացել Բեռտովի գրքերից-պատմական մատերիալից մասին ու դուրս յեկել փողոց:

Վերջերս նրան տանից դուրս վանողը իր վողրալի

Ֆինանսական վիճակն եր. յերկու որ ե, չեք ճաշել, իսկ այսոր հավաքել եր թամբաքվի վերջին փշրանքները ու հաղիվ մի անգամ ծխել: Սենյակի վարձն ել պայմանավորվել եր սկզբից վճարել, սակայն բացի խոստումներից դեռ վոչինչ չի տվել: Լավ ե, տանտիրուհին, նրկատի առնելով, վոր ուսանողը փեսացու յե, շատ քաղաքավարի ե փափուկ ձեփով եր հիշեցնում, թե չե այս կողմից ել դրությունը վողբերդական կլիներ:

Միակ հույսը մասանվոր դասն եր, բայց սա ել թարավել եր. ամեն որ մտադրվում եր փողն ուղել, բայց հենց վոր մոտենում եր ասելու ընպին, հետաճրգում եր մյուս սրվան: Ուրեմն մնում եր պարտք անելը, բայց ո՞ւմից... բոլոր աղքատները արդեն սպառված եյին: Այնուամենայնիվ նա դուրս եր գալիս փողոց, հուսալով, վոր կհանդիպի փորձվե ընկերոջ կամ ծանոթի ե կիրկվի այս դրությունից:

Նրա արտաքինի վրա աղքատ ուսանողի դրոջմ կար հագած եր ուռական ձեփի կապույտ բլուզ, ու վրան կապել փնջավոր, բարակ քամար: Շայվարը մաշված եր, օվաղված ու «հայելի» դարձած. ուսանողական պլխարիք խուճացել եր կապույտից կանաչի փոխվել, իսկ կոշիկները բավականաչափ կարկատաններ տունյին:

Փանյանի դեմքը իր խոժոռած, խիտ հոնքերով, ակնոցների տակից նայող ըննական հարձակողական հայացքով «ժխտողական» արտահայտություն ուներ: Մեջը վխտացող նոր գաղափարներից թեմալորված, նա պահանջ եր զգում վիճելու, նոր հավատի բերելու ամենքին, տապալելու բուրժուական ամբությունները:

Փողոցի անկույնում նա կանգ առավ, վորոչելու

համար, թե ո՞ւր պիտի գնա, ո՞ւմ պիտի դիմի պարզ անեղու համար, բայց զրա փոխարեն հիշեց նոր կարգացած գիրքը:

— «Թեղիս, անտիթեղիս, սինթեզիս» կրկնում եր նա մտքում նոր կարգացած գրքի ազդեցութեան տակ, ձեռնաիրատով խփելով գետին: «Ամեն ինչ, վոր գոյութեան ունի խելացի յե... իմ անփողութեանն ել գոյութեան ունի,— ուրեմն— խելացի յե...»

Ասանելի շոգից ամեն քայլի հետ քրտիքնը վրա յեր տալիս: Նեղ փողոցների ծանր, դարչահոտ ողբ ճնշում եր չնչառութեանը: Հասնելով փոքր հրապարակին, Փանյանը հանկարծ ցնցվեց.— «Նլի ես կողմովն անցա... գրողը տանի, չե՞ վոր վճռել եյի դեսը չգալ,...

Նրա շփոթութեան պատճառը պատահանից նայող որիորդն եր, իր տանտիրուհու քրոջ աղջիկը: Որվա վոր ժամին ել անցնելիք, կանանելիք նրան հրապարակի կողմի պատահանից դիտելիս: Նայում եր աչքի տակով, բայց նկատում ամեն ինչ, կարծես լուսանկարում եր անցորդներին:

Ամեն անգամ, յերբ Փանյանն անցնում եր այս տան առաջից, նա ընկնում եր շփոթութեան մեջ: Այնպես եր թվում, թե որիորդը նկատում ե նրա արտաքինի վրա ինչ վոր ծիծաղելի բան,— թվում եր, թե շորն ե պատուված (մանավանդ շարվարը, վորն արդեն հոգեվարքի մեջ եր), կամ մի բան թարս ե հագել, բլուզի տակից շաղիկն ե յերեվում, և այլն և այլն. յերեվակայութեանը պատկերացնում եր մի շարք այսպիսի պատահարներ:

Հենց վոր որիորդը նկատում եր ուսանողին, նա մի առանձին հետաքրքրութեամբ սեղեռում եր նրա վրա

իր դալուկ դեմքը և աչքերը չուժ ազահությամբ, ասես վախենալով, վոր կարող ե մի բան բաց թողնել ասանց նկատելու:

Ու ամեն անգամ իրար տեսնելիս, նրանց մեջ լուսկրծվում եր մի տարրերնակ լուս խոսակցութեան, վորն այս անգամ կարելի յեր թարգմանել այսպես.

Որիորդը— Ի՞նչ ես ավարտ ման դալիս— սոցիալիստութեան անում... պատկվիր հետս... փող, բաժինք կրերեմ, տուն կղնես-կհարստանաս...

Ուսանողը— Քո բաժինքի հետ դու կրերես և քո սահմանափակ, քաղքենի ուղեղը...

Որիորդը— Ի՞նչ ես շատ յերեվակայում— տես կոչիկդ պատուվել ե, սպիտակ դուլպան յերեվում ե... (աչքերը չոսած դիտում ե ուսանողի կոշիկները):

Ուսանողը— (չփոթվում ե, կարմրում մինչև վիզը) փո՛ւհ, մոռացա, վոր կոչիկս պատուված ե... դո՛նե թանաքով սեվացնելի սպիտակը...

... «Պետք ե վերջ տալ այս կոմեդիային», ասաց ինքն Փանյանը, անցնելով որիորդի «քաղարանից»: Սակայն նա միշտ այսպես վճռում եր ու հետո մոռանում, իսկ տանտիրուհին շարունակում եր հարսնախոսութեանը, չնկատելով ուսանողի գտնելու անվերաբերմունքը:

Որիորդը արդեն գիտեր հարսնախոսութեան մասին: Ամեն որ մայր ու աղջիկ կռաղատում եյին ուսանողին, մեկ վոգեվորվելով նրա ապագա դիրքով, մեկ կասկածելով: Սակայն զրահանը միշտ հաղթում եր բացատրականին, և Փանյանն որ որի վրա ամբանում եր փեսայի դիրքում:

Նեղ փողոցից դուրս գալով, Փանյանն ընկավ խանութների շարքը: Վաճառականները նոր դարձած հեռուստա քնից, նստել ելին խանութների առաջ ու թմբած աչքերով նայում ելին դիմացը, թույլ ծուլ հովհարելով թաշկինակներով բաց կրծքերը: Պիղժակները հանած, ժիլեաների կոճակներն արձակած, նրանք գերադասեցում ելին իրար փքված փորերով, կախ ընկած թշերով ու հաստ, արյունակալած վզերով: Յերբեմն նրանցից մեկն ու մեկը կոպիտ ձայնով կանչում եր դորձակատարին, ապսպրում դավարար խմիչքներ, ու բերելուն պես խմում ուղղակի շշերից:

Փանյանն անցնում եր, թունոտ հայացքներ ձգելով ճարպակալած դեմքերին, ու խորհրդածոճում եր— «ա՛խ, հեղափոխությունը, ո՞ւր ես մի դուրս շարտես այս գիշատիչներին իրենց վորջերից»...

Մինչդեռ նա անցնում եր այսպես խորհրդածելով, հանկարծ նկատեց, վոր իր շուրջը իրարանցում ե ընկել: Վաճառականները շտապ-շտապ, վեր ելին թրուչում, հազնում պիղժակները ու կանգնում խանութների առաջ:

Ուսանողը հետ նայեց: Հայտնի հարուստ Թարխանյանն եր դալիս: Սյուրր նա բավական ուշ եր վերադառնում իր գրասենյակից, յերեվի մի անակընկալ լուր եր ստացել:

Նրան ուղեկցում ելին մի խումբ աչքի ընկնող վաճառականներ, վորոնք սովորաբար միանում ելին չքախմբին իրենց խանութներից: Համբարձում Գերասիմիչին մեծարելու, նրա աչքը քաղցրացնելու համար:

Թարխանյանը դալիս եր ծանր, նշանակալից քայ-

լերով, ու քայլերի հետ զուգընթաց կանոնավոր շեշտով խփում եր գետնին իր արծաթազլուխ ձեռնափայտը: Միահեծան իշխանի նման նա ծանրացնում եր իր ամեն մի շարժումը և թունոտ հաճույքով ընդունում եր իր վրա դարձրած հպատակիող հայացքները: Նրա զոռոզ, դեմքը— իր խոթոռած հոնքերով ջղուռ կնճիռներով ու գազազած աչքերով մի ձգտում եր ցուցադրում— ընկճելու, ստորացնելու մարդկանց: Խանութների առաջ շարված վաճառականները խորը գլուխ ելին սալիս, բայց Թարխանյանը՝ ձեվացնում եր, իբր չեր նկատում: Իր շուրջը պատած վաճառականները, մեկ մեկու առաջ կտրելով, խոսում ելին հեռը, ամեն կերպ աշխատելով իրենց վրա դարձնել ուշադրությունը, բայց նա չչսելու յեր տալիս ու աջ ու ձախ դարձնելով դեմքը, մեքենաբար հարցնում եր.

— Հը՞.

Ոոսողը նորից եր կրկնում իր ասածը, բայց Թարխանյանը իր արհամարհող բարձրությունից վողորմության պես ուշադրության մի փշրանքն եր ձգում ու համարյա մեքենաբար կրկնում.

— Հա՞...

Ու այս «հը՞» և «հա՞»-ի մեջ նա գիրիթյորի նման դեկավարում եր շրջապատի թմնող յերթճշտությունը:

Մի բոպե Թարխանյանի և ուսանողի հայացքներն իրար հանդիպեցին Թարխանյանի մեջ մի անախորժ պզացում անցավ Փանյանի չխտարհվող դեմքից, վորը նրա աչքի համար անսովոր ու խորթ եր:

— Ես վարժապետի սիլաթին մտիկ, ասաց նա իր կողքի վաճառականին, հենց իմանաս վեկսիլը «պրոտեստ» ե դնացել...

— Գաղցած ստուգենա ե յերեվում, Ժպտարով ուզողեց վաճառականը:

— Հաշիվը մեկ աս, մագերը յերկար, չեբը՝ դատարի...

Ուսանողը կանգնել եր հստարս ու ձիգ և հեզնող ժպիտը դեմքին, շեշտակի նայում եր Թարխանյանին ու ասում մտքում.

— Պատմութեան դիտելիտիկան քս գերեզմանն ե փորում որ ու վիշեր...

Թարխանյանի շքախումբն արդէն անցել եր, բայց ֆանյանը մի քանի ըտպե դեռ նայում եր յետեվից: Աստա սթապիւնով, նա ամուր խփեց դետինն ձեռնափայտով, ու շարունակեց իր ճամբեն:

\*\*\*

Մեծ հրապարակի անկյունում նորից ֆանյանի աչքին ընկավ «Պարիկմտիեր Ժորժ»-ի ցուցանակը: Բացի ճակատի մեծ ցուցանակից, կար և մի փոքրը վարսավիրանոցի անկյունի ուղղութեամբ: Քամին ծոել եր ցուցանակը և «պարիկ-մտիերի» տեղ թողել միայն «մտիերը» բայց ինչպես յերեվում եր Ժորժը (կամ Ղազարիցի Մուքելը) դրա մասին իսկի չեր ել մտածում:

Ուսանողը ներս մտավ վարսավիրանոց: Նրա առաջ բացվեց մի հոյակապ տեսարան— մեծ հայելու առաջ, գլուխը մարմարե սեղանին հենած, քնել եր Ժորժը ու խոմփացնում եր իր մեծ ըխով այնպես ուժգին, վոր հայելիները գողգողում ելին: Մի առանձնահատուկ վարսավիրային անուշահոտութուն եր տիրում ներսը, վորից այդ չոզ պահին կարելի չի ուշաթափվել:

Ուսանողը մտադիր եր հիմնովին սարքելու մորու-

քըն ու րեխերը, դեմքը փոփոխելու նպատակով, վորովհետեւ յերեկոյան պիտի դնար բանվորական Ժորժովի: Բայց Ժորժի ջունը այնքան համոզիչ եր, վոր նա սիրտ չարավ դարթեցնելու, մանավանդ վոր ապառիկ պիտի սափրվեր:

— Ո՛վ սուրբ անդորրութուն... — Ահա մի մարդ, վորին հեղափոխութուն չի հարկավոր, ասաց Փանյանը, ինքն իրեն ու Ժպտարով դուրս յեկավ վարսավիրանոցից:

Անցնելով բուլվարը, նա ըստ սովորութեան կանգ առավ դրախանութի առաջ, նոր լույս տեսած գրքերին աչք անելու համար: Յերբ ուզում եր անցնել վիտրինայի յերրորդ մասը, հանկարծ նկատեց աջ կողմից մի մարդ, վորը կասկածելի թվաց. թեպետ հագել եր բանվորի հասարակ շորեր, բայց յերեվում եր, ինտելիգենտ եր բայց իրեն բանվորի յեր ձեմպացնում:

Նրան մատնում ելին իր դազանի հայացքները, վոր նա մեկ-մեկ աչքի տակով դարձնում եր ուսանողի վրա ու շինծու անտարբերութունը, — իբր թե իսկի յել չեր քնտաքըքրվում Փանյանի դոյութեամբ և միայն գըրքերն եր նայում:

«Գազանի վոստիկան ե» անցավ Փանյանի մտքով. նա մի քանի ըտպե դիտմամբ կանգնեց վիտրինի առաջ, իբր թե չի նկատում վոչինչ, ապա հեռացավ դանդաղ քայլերով վորպեսզի կասկած չը հարուցի, մինչև վոր հասավ դեպի աջ թեքվող փողոցին:

Այստեղ նա մտանեց իր անխորձութունը— թեպետ դիտեր, վոր չպետք ե հետ նայել բայց չհամբերեց հետ նայեց: Գազանի վոստիկանը դարձյալ կանգնած եր վիտրինի առաջ և աչքի տակով հետևում ե ուսանողին:

Մտերով ճամբեն դեպի աջ, Փանյանն արագացրեց քայլերը. շատ չանցած, նա ընկավ նեղ փողոցներիցանցը ու պտույտ տարով նորից դուրս յեկավ քաղաքի կենտրոնը:

«Սա յեւ մի բան չէր, մտածեց նա. — փոխանակ հեռանալու կենտրոնից, նորից յեկա այստեղ»:

Նա ներս մտավ ժորժի վարսավիրանոցը և սավիւր-վելուց հետո՝ շտապեց դեպի քաղաքային փողերիկ այգին, վորտեղ պիտի հանդիպեր բանվոր Մարգարին:

II

Մի փոքրիկ այգի յեր, այնքան փոքր, վոր միայն անճարացած քաղաքացին կարող էր նրան այգի համարել: Մի քանի շիթիված ծառեր, մի քանի մարգեր, նստարաններ: Շրջապատի փողոցների փոշին ու աղ-մուկը ազատ մուտք ունեյին այնտեղ, այնպես վոր կարելի յեր նույնիսկ հարց տալ, ինչո՞վ է զանազանվում այգին փողոցից: Կարճ ասած, — փոքրիկ այգին այն Ֆիքցիաներից էր, վորոնց մարդիկ հավաստում են, ուստի և նա լավ էր կատարում իր դերը:

Ամառվա յերեկոներն այստեղ եյին հավաքվում համեստ կարողության և համեստ յերեվակայության տեր մարդիկ — մանր տնտեսներ, յերեսուճ-քառասուն ստացող ծառայողներ, կոտոր ընկած վաճառականներ, հանգստացող ծերունիներ:

Կար մի խումբ, վորը համարյա ամեն յերեկո գալիս էր, գրավում միեւնոյն նստարանն ու զրուցում, սկսելով յեղանակից, սպա անցնում արտաքին քաղաքականության, կրկնելով քաղաքի փոքրիկ լրագրի փոքրիկ դատողութունները Անդլիայի, Ֆրանսիայի ու Գերմանիայի մասին:

Այնուհետեւ պատմում էյին պատերազմներից, հին-հին բաներից ու վերջը գալիս, կանգ առնում հարուստների վրա, խոսում նրանց նիստ ու կացի բնավորությունների, թողած կտակների մասին:

Զրուցում էյին հանգիստ տոնով, առանց շտապելու ու մեջ-մեջ բարձր ձայնով հորանջում: Այնպիսի անդորրություն էր տիրում, ասես վաղուց սահմանված կարգով մի հին սրբապորձված պատմություն էյին կարդում:

Ու ամեն յերեկո, նույնպես վորոչ կարգով գալիս կանգնում էր յերկնքում, այդու դիմաց, Մեծ Արջի համաստեղությունն, ու ժպտալով նայում էր ներքեւ իր յոթն աչքերով, կարծես ուրախանալով, վոր յերկրի վրա յեւ կան համաստեղություններ, նույնպես հաստատուն և կանոնավոր ընթացքով:

Ներս մտնելով այգին, Փանյանը յերկու անգամ պտույտ արավ, բայց չհանդիպեց բանվոր Մարգարին: Մտուղիյով անցնելիս՝ նա հանկարծ դիպավ իր ընկերոջ, — Միքայելյանին:

— Բարեւ, Աշոտ:

Միքայելյանը կարծես վեր թռավ:

— Փանյան, դու յե՞ս հարցրեց խանձված ձայնով:

— Հը՞ վո՞նց ես... բեր մի ծխեմ. ետր յերջանիկ դրության մեջ եմ — վոչ ճաշել եմ, վոչ կարգին ծխել:

Միքայելյանը հանելով դրպանից ծխախոտի տուփը — ապա մի թղթադրամ ու դրեց Փանյանի ձեռքին:

— Ուրի՞չ ինչ կա, հարցրեց Փանյանը մեծ բավականությամբ ներս քաշելով թամբաքվի ծուխը:

— Նույն դրությունը շարունակվում է, տխուր պատասխանեց Միայելյանը:

— Յերեմի աշնքան ես տարված, վոր ել ուրիշ բաների մասին չես մտածում. կարդացի՞ր են... հարցրեց նա ցած ձայնով:

— Կարդացի, բայց ուշքս վրես չեր. դիտես Լեվոն, սրբոց կասեմ— ինձանից սոցիալիստ չի դուրս գալ. թեկուզ գլուխս սոցիալիստ դառնա, մարմինս կմնա բուրժուա...:

— Ուրեմն դեռ ելի վատով-գլխով տարված ես:

— Ե՛հ ի՞նչ ասեմ, — հառաչանքի տոնով պատասխանեց Միքայելյանը, ձեռքը հուսահատորեն շարժելով վերեվից ներքեվ:

— Դե՛հ, ցտեսություն, — ասաց փանյանը չուզե՛նալով խանդարել նրա միայնությունը:

Միքայելյանը հազիվ լսելի ձայնով հրաժեշտ ավեց ու շարունակեց հեռ ու առաջ քայլել:

Արդեն մի շաբաթից ավել եր, Միքայելյանը այնքան հաճախ եր գալիս աշատեղ, վոր համարյա իր տունն եր դարձրել այս փոքրիկ այգին:

Նրա գաղտնիքն այն եր, վոր սիրահարվել եր դիմացի տանն ապրող որիորդի վրա, բայց նրա ծնողները, իրենց «լայկո» չտեսնելով Միքայելյանին, խստիվ արգելել էին որիորդին տեսնվել նրա հետ, նույնիսկ վերջերս տանից դուրս չեյին թողնում:

Ամեն յերեկո մի քանի անգամ որիորդը յերեվում եր այդու դիմացի պատշգամբում, կանգնում եր լազաների մոտ վորպեսզի «Նա» տեսնի ու իր լուսնի նման սպիտակ, թախճոտ դեմքը դարձնում եր դեպի այգին:

Նույն բոպեյին ուսանալն ել դուրս եր գալիս այգուց ու կանգնում փողոցի լապտերի տակ, վորպեսզի

«Նա»-ն տեսնի, ու սիրաբարբոք հայացք եր նետում դեպի պատշգամբը, մրմնջալով սիրային խոսքեր:

Այսպես նայում էին իրար, մինչև վոր որիորդը հիշում եր մոր խստությունը ու ներս մտնում սենյակը:

«Լուսինը» մայր եր մտնում և Միքայելյանը սըրտակոտոր վերադառնում եր այգին ու շարունակում եր քայլերը մինչև ուշ դիշեր, լցնելով ծառուղին իր ախ ու վիշով ու թամբաքվի քուլա քուլա ծխով:




Բաժանվելով Միքայելյանից՝ փանյանը տխուր մտածմունքներով մեջ ընկավ. — Ահա կանգնեն որեր, ասում եր ինքնիրեն, որիորդի ծնողները կհաչալվեն, Միքայելյանն ել կավարտի, կամուսնանա ու կդառնա մի գոնտիկավոր քաղցեհի... Այո, նա ել այնտեղ նըստած «համաստեղությանն» ե պատկանում, դուր եմ տալիս այն գրքերը...:

Իսկ «համաստեղությունն» արդեն հավաքվել եր, բազմել նստարանի վրա: Բայց այսօրվա խոսակցության մեջ ինչ վոր անհանգստություն եր նկատվում ու ձայներն ել սովորականից բարձր էլին հնչում:

Խոսում եր տնատեր Բուդաղյանը:

— Այսպե՛ր, յես ասել եմ, և կասեմ— որենքը պետք ա ենպես պինդ ըլի, վոր ես ձամբից դուրս յեկած մարդկանց հախիցը դա: Հմի խոսքս ի՞նչի վրա ա, — իմ տունը, կարելի ա տեսած ըլեք— լավ տուն ա, Ե՛հ լավ կենդանի ել շատ եմ ունեցել: Բայց հիմի մի բան— վոր ա ապրում ներքեվի սենյակում, — ի՞նչ ասեմ, թամամ աստծու կրակ ա... Առանձվա ժամանակը ո՞վ կլսեր բանվորի կամ արհեստավորի ձենը: Սա մի ուրիշ բան ա. ել դադար չի տալիս:

28  
21X2



— Ի՞նչ ա ուզում, հարցրեց կողքին նստող «նախկին» վաճառականը:

— Ինչ ա ուզո՞ւմ դալմադալ ա ուզում. մեկ ասում ա. տունդ խոնավ ա, ի՞նչի առաջուց իմաց չարիք, մի՞թամ յես խաբել եմ...: Են որն ել կանգնել ե թե տունդ ճեղքված ա, պետք ա կամխտա կանչել տամ, վոր քնե՛ն, տեսնեն: Մեկն ասի— առաջինը՝ իմ տունը քանդվելու ի՞նչ ունի, դրանից ել լավ տո՞ւմ... վրա յերկուսն ել ապրանքը իմը չի՞, հավանում չե՞ս,— դնա ուրիշ տեղ, թող իմ խոնավ սենյակը ինձ մնա...

Հանկարծ նստարանի առաջ պայթեց մի անսովոր, ուժեղ ձայն, վորը բոլորովին խորթ եր համաստեղության կարգերին:

— Մտի հերն անիծած, թե քո տունը չի քանդվում: Բուզադյանը վեր թռավ տեղից.

— Եստեղ ել դադար չես տալի՞ս. գրգռված պատասխանեց նա, ի՞նչ քո գործն ա թե ում տունն ինչպես ա, չես ուզում դնա ենտեղ վորտեղից յեկել ես:

— Չեմ դնա, մինչև գլխիդ կամխաա չբերեմ. ինձ վոր խաբեցիր, խոնավ տունդ «սաղացրիր» բա քեզ կմարսեցնե՞մ:

— Ապրանքը իմը չի՞... դնա ելի, թե չես ուզում:

— Ի՞նչ ապրանք, եդ վորտեղի՞ց ա, ապրանքը քո ձեռքով ա չինված. թե՞ ինձ պեսների:

— Եդ խաբարները դնա քու համփսոններին ասա. եստեղ քու ուզած մարդը չկա:

— Գնա ելի, «են թավուրների» ականջներին փրսա, կարելի ա փող ել տան, լավ փեշակ ա...

— Խաթա յես գլխա. ի՞նչ ես կուպրի նման կպել. յես դիտամ, դու ուզում ես իմ տան գլխին խաթա բե-

րես, համա ներողություն կանես,— հենց դուրս անել տամ քեզ, վոր իմանաս թե որենքը վորտեղ ա:

— Ո՞ւմ դուրս անե, մի փորձի տեսնեմ...

— Ախպեր, դնանք, եստեղ ել չեն թողնում մարդ հանգստանա...

Ու արագ քայլերով դուրս դնաց այգուց: Նրան հետևելիցին համաստեղության մյուս անդամները, վախենալով վորեւե անկարգությունից:

\*\*\*

Փանյանը հենց սկզբից նկատեց, վոր խոսողը բանավոր Մարգարն եր: Յերբ Բուզադյանը դուրս գնաց այգուց, նա մտտեցավ Մարգարին ու թեվքից քաշեց:

— Ես ո՞ւր ես, չերեվացիր ժամանակին:

— Գո՞ւ յես կելոն... չճանաչեցի: Գնանք խոսելով:

Նրանք դուրս յեկան այգուց և կանգ առան մոտակա վոչ բանուկ մի փողոցում: Խոսում էլին ցածր ձայնով:

— Ժողովը հետաձգեցինք վաղվան, նույն ժամին: Եսոր չհաջողվեց:

— Ես ի՞նչ կովի մեջ ելի:

— Վոր իմանաս, թե ինչ ապագակ մարդ ա իմ տան տերը, չես դարմանալ, եդ լիրբը դնացել ա մատենել, թե մեր տանը ժողովներ ենք անում: Լավ ե առաջուց իմացա (թե ինչպես, հետո կասեմ) թե չե կարող էլինք խաթի մեջ ընկնել: Յեկան խուզարկեցին, բան չգտան, դե իհարկե, առաջուց մաքրել էլի:

— Հա, մի քիչ անդգուչ էլի իոտում:

— Բայց ասեմ— ենպես կատաղած էլի եդ անիծածի վրա, վոր հենց նրա ազուպի ձեռը լսեցի թե չե ել

չկարողացա համբերեմ, վոր կախաղան ել տանե՞լին,  
ելի կասելի: Ա՛խ, մի դրա դատաստունն ինձ տան, յես  
գիտամ, թե ի՞նչ կանեմ:

— Բայց ես յերեկո նրանց «դատուն» խանդարե-  
ցիր:

— Հա, լավ են իրար գտել, սրանք վոր կան— են  
մեծ բուրժուաների մանր մունր տականքներն են, բայց  
նրանցից ավելի յին հարահարաց անում: Մոցեալխանե-  
րի գործադուլի մասին, վոր լուռ են, ենպես են խել-  
քները կորցնում, հենց իմանա ահեղ դատաստանն ա  
զալիս: Սրանք հեչ, ավելի մեծերը, ուժեղները կան—  
նրանք են մեր գլխավոր թշնամիները...

— Ուրիշ, ընկերները վո՞նց են.

— Լավ են. հետեզհետե գործադուլի արամադրու-  
թյուն ե ստեղծվում: Ե՛հ, պետք ե ուժեղացնենք կու-  
վը, միշտ պատրաստ պահենք մեր զենքերը... Ընկ.  
Լեվոն, ճիշտ ե, մենք տանջվում ենք, բանտարկվում,  
աքսորվում, բայց վերջը կհաղթենք, ես ձեռքը վկա,  
կհաղթենք... Ասաց ու բուռնցքը ուժեղ թափահարեց:

Տիրեց բուսեյական լուռթյուն: Մարդարը ուշա-  
գրությամբ նայում եր փողոցի ուղղությամբ:

— Տենո՞ւմ ես Լեվոն, ասաց նա հրեն մեկը են  
անկյունից մեզ հետեվում ա կամ ինձանից ա կպել կամ  
քեզանից. ասենք դու «նորընծա» յես դժվար թե չուտ  
նկատես:

«Նոր ընծա» խոսքից ուսանողը կարմրեց, ինչպես  
յերբեմն կարմրում եր, յերբ ասում ելին— «բեխերդ  
նոր են դուրս յեկել»: Չնայած, վոր նա նոր եր հեղա-  
փոխության ասպարեղ իջել, բայց իրեն փորձված հե-  
ղախոխական եր հաշվում:

— Եսոր մեկն ել ինձ եր հետեվում:

— Դե, ցրվենք, թե չե կկպչի: Յը, ուրեմն վաղը,  
ելի նույն տեղը ժամի 9-ին: Դու աջ զնա յես՝ ձախ:

Մարդարը հեռացավ արագ քայլերով, իսկ ուսա-  
նողը մի քանի փողոց անցնելով, մտավ առաջին պա-  
տահած կաթնատունը, շտապ շտապ կերավ մի բաժակ  
ժածուռ, դնեց ծխախոտ ու քայլերն ուղղեց դեպի  
տունը:

Լուսինը դուրս յեկավ, մի առանձին խորհրդավո-  
րություն ե քնքշություն փոռելով ամեն ինչի վրա: Ու-  
սանողը գնում եր տունը ամայի փողոցներով, ճիւղում  
եր ու խորհրդածում: Այսուհետեվ իր կյանքի նպատա-  
կը թվում եր վորոշ—նա պիտի արթնացներ ժամանա-  
կիս հսկային— պրոլետարին, ու ցույց տար նրան իր  
պատմական ուղին: Նա իրեն կոչված եր համարում մի  
մեծ, բայց չարքաշ գործի համար, ե պզու՞մ եր, վոր  
այդ գործը նախ ե առաջ պահանջում ե անձնապահու-  
թյուն: Ու յերբ մտածում եր անձնապահության մասին՝  
թեթեվ ամպի նման մի տխրություն եր իջնում. թվում  
եր թե կասկածում ե իր ուժերի վրա ու հարց եր տա-  
լիս ինքն իրեն, արդո՞ք պատրա՞ստ ես գոհվելու...

Տխուր ամպը դալիս ե, անցնում... Իհարկե, նա  
պատրաստ ե գոհվելու այդ մեծ նույնիսկ մեծագույն  
գործի համար... ինքնասիրությունը չոչլում եր, վոր  
վաղվանից պիտի ուժեղացնի իր գործունեությունը:

Լուսինը նայում եր վերելից ու թվում եր, ավելի  
յեր վեհացնում հավերժացնում նրա մտքերը: Յերե-  
վակայությունը թռչում եր հեռու, ու մեկը մյուսից  
ավելի գրավիչ պատկերներ ստեղծում...

Ահա ընդհանուր գործադուլ ե.— Ընկեր Լեվոնի

դեկավարութեամբ խմբվել և քաղաքի հակայական բան-  
վորութիւնը... Հանկարծ նա նկատում է, վոր զորքը  
չըջապատել է իրենց. այն վճռական մոմենտն է,  
յերբ զորքը սխալի համազարկ տա, ու նա, ընկեր Լե-  
վոնը, մի բարձր տեղից զինում և զինվորներին.

— Ընկեր զինվորներ. յեթե ձեր մեջ չի ցամաքել  
պրոլետարական արյունը, դարձրե՛ք ձեր գեները մեր  
ընդհանուր թշնամու դեմ...

Յեւ հանկարծ... զինվորները ձգում են գեները  
ու դրկախառնվում բանվորներին հետ... հեղափոխու-  
թիւնը հաղթանակում է ու ընկեր Լեվոնը հայտարա-  
րում է բանվորական դիկտատուրա...

Տարված յերեվակայութեամբ՝ Փանյանը չէր նկա-  
տել, վոր իր բնակարանից առաջ է անցել: Նա կանգ  
առավ մի փակուղու առաջ ու հետ դարձավ:

Նորից մտավ իր փոքր սենյակը ու նորից վողջու-  
նեցին նրան Մարքսը, Պլեխանովն ու Լենինը:

Կարդում էր ու յերբեմն կանգ առնում. թվում էր,  
թե մի ձայն կանչում է հեռվից — մենք կհաղթենք...  
ես ձեռքը վկա, մենք կհաղթենք...

### III

Ժողովը քողարկելու նպատակով բանվոր Արամը  
սեղան էր սարքել, դրել էր մի քանի շիշ գինի, յերշիկ,  
պանիր, կանաչի, սեղանի մեջտեղն էլ բազմեցրել էր  
մեծ հեշտայեռ:

Դրտում նա կանգնեցրել էր իր տասյերկու տարե-  
կան տղային, վորպեսզի վոստիկան կամ ուրիշ կասկա-  
ծելի մարդ տեսնելուն պես՝ իմաց անի:

Ժողովականներից արդեն վեց հոգի յեկել էին:

Վերջապես յեկավ և յոթերորդը— Պետրոսը, գունատ  
դեմքով բեխերը ցած թողած ու մի աչքը շիւ արած:

— Բոլորդ հավաքվե՛լ եք.

— Քեզ ենք սպասում, ասաց Մարգարը:

— Հը, դուրսը կասկածելի մարդ հո չտեսա՞ր.

— Չկար: Յեւ հենց դիտամք ուչ յեկա, վոր մի  
լավ աչք ածեմ:

— Եդ չները, ինչպես յերեվում է, դործադուլի  
հոտն առել են, ել դիշեր ցերեկ դադար չեն տալիս:

— Եդ նրանից ա, Մարգար, վոր մենք պառավ նանի  
նման մի գլուխ զրից ենք անում ու հետաձգում դործա-  
դուլը, — ասաց բանվոր Ստեփանը, վորն ամենից ջա-  
հեղն էր նրանց մեջ. խփենք դնա, դործադուլ ենք ա-  
նում — անենք. ել ի՞նչ ենք մի ամիս փիլիսոփայու-  
թիւն անում:

Նա վեր կացավ ու ձեռքերը դրպանում սկսեց քայ-  
լել սենյակում. լիքը թմբկիկ մարմինը դղրդում էր  
քայլերից.

— Դու յել հենց թո ձին ես քչում, — պատասխա-  
նեց Արամը, քառասունի մոտ բանվոր, մորուքի ու բե-  
խերի մեջ կորած դեմքով. մի չորս կողմդ ել նայի, տես  
ինքան անդիտակից ընկերներ ունենք. առանց պատ-  
րաստելու չի կարելի սկսել գործը.

— Ե՛հ, դուք ել միշտ հին յերգն եք յերգում, ա-  
րաց Ստեփանը կանգնելով Արամի դիմաց. — պա՛րաստ  
չեն... Եդ վաղուց ենք լսել. իսկ յես ասում եմ, պատ-  
րաստ չեն լինիլ. դու պետք է թո հետեւից քաշես նրանց:

— Քաշելուն կտրվել ել կա. պիտի ամուր կապենք  
հետներս.

— Զարմանքի յա, ինչո՞ւ ամուսնացած բանվորնե-  
րը եղպես կամաց եք շարժվում :

Բանվոր Մարգարը մոտեցավ Ստեփանի յետեվից  
ու նրա ախանջից քաշեց .

— Դե, դե քաջ Ստեփան, շատ մի բուրթալ . դու  
դեռ ժամգարմի ու բանտի յերես չես տեսել և լավ կա-  
նես քո փորձված ընկերներին հետեվես . շտապողին  
տղա չի ըլել :

— Իսկ կամաց գնացողին իսկի աղջիկ ել չի վնիլ :

— Դե Ստեփան, բազար մի չաղացնի, ասաց բան-  
վոր Արամը, ընկերներ սկսենք, առաջարկում են նա-  
խագահ՝ ընկեր Մարգարին :

Մյուսները համաձայնվեցին և Մարգարը նստեց  
սեղանի մոտ :

Ուսանող Փանյանը նստել էր թախտի վրա ու հեծ-  
ված մութաքին, մտքում կրկնում էր զեկուցման սկիզբը  
զանազան վարիանտներով :

— Խոսքը Ձերն ե, ընկեր Լեվոն, ասաց Մարգարը :

Փանյանը յերկու անգամ հազաց, դսպելով իր շը-  
փոթությունը ու սկսեց, բայց վոչ այնպես ինչպես ին-  
քը յենթադրում էր : Մի քանի բոպեյից հետո շփոթու-  
թյունն անցավ և զեկուցումն ընկավ իր բնական հունը :  
Նրա վոզեվորությունը հետզհետե աճում էր, բերած  
սրինակները մեկ մյուսից պերճախոս ապացուցում էին  
նրա տեսակեար :

Ունեխդիները հետաքրքրությունը լարած լուսմ  
եյին ու վարակվում նրա վոզեվորությամբ : Պրոլետա-  
րիատի անցած գործադուլները, անցած արյունոտ կը-  
սիվները մշուշապատ հեռվից հանձնարարում էյին շա-  
րունակել պայքարը, մինչև վերջնական հաղթանակը :

Մեջները կուտակված դժգոհությունը բռնկվում էր ու  
պահանջում— «Պետք է կովել, պետք է գործադուլ  
հայտարարել— այս է մեր ճամբեն» . . .

Փանյանը վերջացրեց իր զեկուցումը կոմունիստա-  
կան մանիֆեստի խոսքերով— «Պրոլետարները վաչինչ  
չեն կորցնի, բացի իրենց շղթաներից» : Ու քրտինքի  
մեջ կորած կանգ առավ :

Վերջացնելուն պես բանվոր Ստեփանը վեր կացավ  
տեղից ու Փանյանի ձեռքը պինդ սեղմելով, սկսեց թո-  
փահարել :

— Ընկեր Լեվոն, շնորհավորում եմ . տղամարդի  
պես խոսեցիր . . .

Բանվոր Պետրոսը ձայն ինդրեց Մարգարից :

— Ընկերներ, յես կարծում եմ, վոր մենք այսպի-  
սի մանրամասն զեկուցում լսելուց հետո՝ ել հարցերով  
չգրադեցնենք ընկեր Լեվոնին, այլ անցնենք գործնական  
ինդեկրեներին :

— Ուղղակի խոսենք գործադուլի մասին, միջա-  
մայ Ստեփանը :

Այդ ժամանակ հանկարծ ներս մտավ Արամի տղան  
ու շնչասպառ ասաց .

— Մեր կողմը սրվիցա ա դալիս . . .

Բոլորը վեր թռան :

— Լավ տեսա՞ր, հարցրեց Արամը :

— Հա . յերեք հոգի էյին :

— Ընկերներ, պետք է ցրվել, ասաց Մարգարը .

— Գուցե ավելի լավ է, նստենք իբր թե զեֆ ենք  
անում, առաջարկեց Արամը .— միևնույնն է, արդեն  
ուշ է, փողոցում առաջներս կկտրեն ու կսնտոտեն .

— Ձե, եղպես կարող ենք բոլորս թալալն ընկնել .

ասաց Մարգարը թող յերկուսը մեզանից դուրս գան, տեսնեն պոլիցիան վորտեղ է, հետո յեկ գնան մնացածները:

Ուսանողը և բանվորը Պետրոսը Արամի տղայի--- Սուրենի հետ դուրս յեկան դալիթ: Սուրենին ուղարկեցին հետախուզելու: Նա լուր բերեց, թե պոլիցիականները հարեվան տան մոտ կանգնած դռնապանին են կանչում:

— Դե, Սուրեն գնա ասա, վոր բոլորը դուրս գան շուտով, սպասարեց Պետրոսը, իսկ ինքը ուսանողի հետ դուրս յեկավ փողոց:

— Դու առաջ գնա, պատվիրեց նա ֆանյանին:

Մի քանի րոպե առաջ գնալով, ֆանյանը առանց յերկար մտածելու, ճամբեն ծուկ դեպի կողքի փողոցը, բայց շուտով նկատեց, վոր առաջը փակուղի յե: Յետ դառնալը վտանգավոր համարելով, նա ուղղակի ներս մտավ դիմացի տան դալիթը: Նրա բախտից տուներ մուտք ունեւր և մյուս փողոցի կողմից: Արագ բայրիբով ֆանյանը դուրս ընկավ փողոց, ուշադրություն չդարձնելով շան հաջոցի վրա:

Լուսինը դեռ չեր ծագել: Փողոցը մութն եր ու խորթ ու բորթ: Շտապելուց նրա վտար փոսն ընկավ, և հավասարակշռությունը կորցնելով, փուկեց փողոցի խիտ փոշու մեջ: Իսկույն վեր կացավ, շտապ-շտապ թափ տվեց շորերը ու շարունակեց ճամբան:

Վերջապես հոգնած ու քրտինքի մեջ կորած նա հասավ իր բնակարանը:

\*\*\*

Տուն վերադառնալով, ֆանյանը նկատեց սանդուխների և պատշգամբի վրա արտակարգ լուսավորու-

թյուն: Տան տիրուհու բնակարանից անսովոր ձայներ էլին լսվում. ըստ յերեւոյթին հյուրեր կային:

Մտնելով սենյակը, ուսանողը մեկնվեց մահճակալի վրա ու մտածում եր. իր ընկերների մասին--- թե արդե՞ր կարողացա՞ն ազատվել: Մտածում եր նույնպէս թե վորտեղ անցկացնի այս գիշեր, թե գուցե կարելի յե մի այլեւի ապահով տեղ գտնել:

Դուռը ծեծեցին: Նա վեր թռավ, կարծելով, թե փոստիկանությունն է իր հետեւից յեկել, բայց դուռը բացելով, տեսավ տանտիրուհուն:

— Ես ո՞ւր ես, ինչքան ժամանակ սպասում եմ. հասցեք մեզ զմոտ, հյուրեր ունեմ:

— Շնորհակալ եմ. գլուխս ցավում է, չեմ կարող:

— Եհ, ջահել տղեն կասի՞, թե գլուխս ցավում է... ա՛րի, ա՛րի, դնանք որիորդներ չեա ծանոթացնեմ:

— Շնորհակալ եմ, — նորից կրկնեց ֆանյանը:

— Ձե, չե անպատճառ պետք է գաս. ես ի՞նչ է վերես ընկե՞լ, ինչու յեն շորերդ կեղտոտվել:

— Ձե, փողոցով կառք եր անցնում, նեղ տեղն ընկա, պատին քսվեցի:

— Դե— արի գնանք:

— Լավ, մի քիչ կարգի բերեմ շորերս ու կգամ:

«Սա լավ առիթ է» մտածեց ֆանյանը, տանտիրուհու դուրս գնալուց հետո. «պետք է բուրժուական կյանքով ապրել, հեղատխտական գործունեյությունը քողարկելու համար թե չե վոստիկանության տեսակետից յես կասկածելի կյանք եմ վարում»:

Շորերն ու կոշիկները մաքրելուց հետո՝ նա գննեց ամեն ինչ լամպի մոտ, վորպեսզի «չխայտառակվի» վորեւ պատուածից:

Յերբ նա ներս մտավ, դահլիճում արդեն հավաքվել էին մոտ տասնհինգ հոգի: Բոլորը հանկարծ լռեցին, հետաքրքիր հայացքները դարձնելով Փանյանի վրա:

Ուսանողի բնական շփոթութունը կրկնապատկվեց, յերբ հյուրերի մեջ նկատեց տանտիրուհու քրոջ աղջկան:

— Խնդրեմ, ծանոթանաք, — ասաց տանտիրուհին — քրոջ աղջիկն է, որիորդ Նատալիան:

Փանյանը կարմրած մտանցավ որիորդին ու առանց նայելու նրա դեմքին, ձեռքը մեկնեց: Ապա տանտիրուհին մոտ տարավ նրան բոլոր հյուրերին ու ծանոթացրեց:

Յերկու որիորդ էլին հրավիրել, սեվուկ ու տղեղ, — որիորդ Նատալիային «Փոն» տալու համար, վորպեսզի նա աղեղի դեղեցիկ յերեվար: Կային տիկիներ, դիմնազիտներ, մի զինվորական դպրոցի ուսանող ու տանտիրոջ խանութի դործակատարը:

Որիորդ Նատալիան նստած էր մի առանձին լարված, ձգված պողպատի, կարծես մի դեր էլին հանձնել նրան և շարունակ կասկածում էր — կարո՞ղ է արդյոք կատարել այդ դերը: Կարճ մարմինը կորստի մեջ ճնշվում էր, շնչառութունն արգելում: Շփոթութունից կարմրում էր ու քողարկում իր բնական դալուսթյունը:

Փանյանը նստեց ազատ աթոռներից մեկի վրա: Գիմացի յերկու տիկիները սկսեցին քչիչալ, մեկ-մեկ հայացքը դարձնելով ուսանողի վրա:

«Յերեվի արտաքինս են բամբասում, մտածում էր Փանյանը. ի՞նչ հիմարութունն արի, վոր յեկա. պարզ է, բերել են այս Նատալիայի հետ ծանոթացնելու և «գործը» սարքելու համար»...

— Ինչի՞ եք սուս կացել, ջահեղներ չե՞ք. ինչ յեղավ ձեր խաղը, — ասաց տանտիրուհին:

Գիմնազիստները վեր կացան ու շարունակեցին ընդհատված խաղը: Նորից սկսկվեց շարժումն ու աշխույժ ծիծաղը: Ուսանողը ինքն իրեն ստիպելով մի կերպ մտնակցում էր, միտրինակ ժպիտը պահելով դեմքին:

Խաղերից հետո մի տիկին նստեց խանդարված պիանինոյի մոտ ու սկսեց տրնկտրնկացնել վալսի յեղանակ:

Չույզերը սկսեցին պտտվել: Որիորդ Նատալիան սպասում էր, վոր Փանյանը իրեն կստաջարկի պարել, բայց ուսանողը չմասնակցեց պարերին:

Յերբ որիորդ Նատալիան սկսեց պարել, դիմնազիտներից մեկի հետ, Փանյանը դիտելով նրա կարճ, ճնշված հասակը, ներս ընկած վիզը, խղճահարվեց ու տխրեց. — «Աղջկան ուզում են մի կերպ սաղացնել և չեն կասկածում, թե մո՞րքան հեռու յեմ յես փեսայի դերից»...

Ընթրիքի ժամանակ առաջուց ծրագրված «գուգադիպությամբ» որիորդ Նատալիան և Փանյանը իրար կողքի ընկան: Թամաղա ընարվեց տանտիրուհու տաջարկությամբ իրենց դործակատարը, վորին առանձին հրահանգներ էլին տված կենացների վճարբերմամբ:

Խոսակցությունը որիորդի և ուսանողի մեջ չեր կապվում, վորովհետեւ որիորդը վախենալով տղետ յերեվարուց, շարունակ «այո» կամ «վոչ» էր պատասխանում, իսկ ուսանողը մտադրաղ էր և դժվարությամբ էր նյութ գտնում խոսելու համար: Հաճախ նրա յերեվակայությունն անցնում էր նոր խափանված ժողովին, պատկերացնում էր, թե ի՞նչպես ընկերները դուրս են դալիս փողոց, դիտում են չորս կողմը... իսկ հետո, ո՞վ դիտե, ինչ...

Կենացները զուլթ զուլթ եյին առաջարկում և ամեն անգամ յերգում եյին ազգային ու սիրային յերգեր: Մի առանձին վոզեվորությամբ և ազմուկով խմեցին որբորդ Նատալիայի և Փանյանի «Խանկաղին» կենացները. բոլորը ցանկանում եյին, վոր «նրանք հասնեն իրենց մուրազին» ծաղկեն ու առաջադիմեն: Մեկը նույնիսկ այնքան վոզեվորովեց, վոր ասաց—«Թող յերկուսով գընան դեպի ապագան ձեռք ձեռքի տված»:

Ուսանողը ընկել եր արագիկով քական դրության մեջ:

«Պետք է վերջ տալ այս հիմար դրության»... «վաղվանից բոլոր թելերը կը կտրեմ»...

«Խանկաղին կենացի» վրա որբորդ Նատալիան խեղ-դվող կատվի ձայնով յերգեց «Ձայն տուր ով ծովակ»: Վիզը ձգելով, ճիգ թափելով նա յերգում եր—

«Արդյոք գալու՞ է յե մի որ, ժամանակ տեսնել Մասիսի գլխին մի դրոշակ...»

Իսկ ուսանողը մտածում եր—«Հիանալի պատկեր... Նատալիան կինս կլինի, Մասիսի գլխին ել մի դրոշակ»...

Վերջապես հյուրերը վեր կացան: Տիկինները հրաժեշտի ժամանակ հրավիրում եյին ուսանողին իրենց տուն «Որբորդ Նատալիայի հետ միասին» պատճառաբանելով, թե նա գիտե իրենց տունը:

Յերբ բոլորը գնացին, տանտիրուհին մոտեցավ ու ասաց Փանյանի ակաջին,

— Հավանեցի՞ր.

— Ո՞ւմ.

— Որբորդ Նատալիային. վոր գիտենաս ի՞նչ վոսկի տղջիկ է. սաղ քաղաքում սրա հատը չի գտնվի:

Ուսանողը ծիծաղեց և շնորհակալություն հայտնելով, գնաց իր սենյակը:

\*\*\*

— Ուհ, վերջապես ազատվեցի ես կոմեդիայից, — ասաց ինքնիրեն ձգվելով մահճակալի վրա: Մտածում եր, թ ինչ ձեվով վերջ տա այս հարսնախոսությանը, վորը հանաքից դանակի եր անցնում: Սակայն հողմածությունից նա չեր կարողանում մտածության թելը առաջ տանել և ասում եր — «վաղը կմտածեմ»...

Անսկատելի կերպով նրա բունը յեկավ բայց մի քանի բողբոջից հետո հանկարծ զարթեց:

Մուտքի դռան դանդը պինդ քաշեցին:

«Գալիս են խուզարկելու» անցավ նրա մտքով, բայց տեղից չչարժվեց:

Մի քանի բողբոջից հետո դրսի դուռը ծեծեցին: Լավեցին վոտնաձայներ: Ծանր կոշիկներ եյին, բայց զգույշ եյին քայլում:

Ականջները լարած—Փանյանը հետեվում եր քայլերին: Սիրտը անասելի ուժով բարախում եր:

Ահա բարձրանում են պատշգամբը, մոտենում են իր սենյակին...

Հանկարծ կոպիտ ձեռքով դուռը թխթխկացնում են:

— Ո՞վ է, հարցրեց Փանյանը:

— Վոստիկանությունն է, բացե՛ք.

— Որդեր ունե՞ք.

— Ունենք. շուտ արե՛ք.

Դուռը բացվելուն պես ներս խուժեցին ժանդարմական սպան, և վոստիկանները չըջապատեցին ուսանողին:

ու սկսեցին խուզարկել, նախ իրեն, հետո՝ յեւ սենյակը: Բրբրեցին գրքերը, անկողինը, սպլտակեղենը:

Փանյանն իրեն համարում էր փորձված և գգույշ հեղափոխական, բայց վորքան յեղավ դարմանքը, յերբ հանկարծ գրքերից մեկի մեջ գտնվեց մի նամակ... այն էլ շատ վտանգավոր:

Ինչպես եմ մոռացել այդ նամակը... դործը կը բարգանա... նամակով կկապեն կենտրոնի հետ...

Սուզարկությունից, յերբ արձարողությունն ելին կազմում, ներս կանչեցին տանտիրուհուն: Յերեվում էր, նա չէր հասկանում դործի էյությունը, վորովհետեւ վտանգավորներից մեկը հանդատացնելու նպատակով ասել էր նրան, թե ուսանողին վկա յեն կանչում մի դործի համար:

Յերբ ամեն ինչ վերջացավ, ուսանողը հանձնեց իրեղենները տանտիրուհուն, ասելով թե ինքը գնալու յե, և կկարդադրի, վոր զան վերցնեն:

Տանտիրուհին աչքերը չուց.

— Քա գնում ե՞ս... ել չես դա՞րու... բա հարսնացո՞ւն...

Նա այնքան միամտորեն ասաց այդ, վոր ուսանողը չկարողացավ ժպիտը պահել:

— Իմ հարսնացուն... կարմիր հարսնացու յե... ասաց նա խոսքերը ձգելով:

— Վո՞ւյ քա, ուրիշ հարսնացու յես ու՞նեցե՞ր... բա ինչի՞ չեյեր ասում, լացակամած վրա տվեց տանտիրուհին:

Прошу не разговаривать... հրամայական տոնով ասաց ժանդարմական սպան:

Ուսանողին տարան բանտը:

1927

32

## ՄՈՒՍԿԱՆ ԶԲՋԱՆՈՒՄ

Ժողովը նշանակված էր ժամի 7-ին, բայց յեկողները գրում էին, վոր չի կայանալու: յեկել էյին միայն—հին բանվոր Մադաթը, վորն ըստ սովորության յերբեք չէր ուշանում և յերկու կամ յերիսուսականներ, վորոնք աշխատում էյին առանձնապես ճշտապահ լինել:

Մադաթը թիկնել էր աթոռին և հանդատացող աշխատավորի բարյացակամ ժպտով նայում էր ջահելներին:

Նավթահանքերում յերկար տարիներ աշխատելուց հետո Մադաթի դեմքն իր չեկ մորուքով ծծվել էր դորդու յնամ ու սեղ-սեղ սևին էր տալիս մանրիկ բծերով: Յերբեմնի կայտասվուն, վճիտ աչքերը պղտորվել էյին, կուպերը կարմրել ու թերթերունքները նոսրացել:

Նա նայում էր ջահելներին ու խորհրդածում, թե ժամանակը փոխվել է, ու սրանք էլ կնպես չեն սպրում, ինչպես ինքը և իր ընկերները տասնյակ տարիներ ասած:

— Ընկեր Մադաթ, մի բան պատմիր հեղափոխական անցյալից, ասաց Ռուբենը:

— Այ ջահելներ, եղ վոր անցյալից տեղյակ էր ասլիս, անցյալի դապրը իմանում էր:

— Ինչպես չե, ընկեր Մադաթ, մենք շատ բարձր

33

ենք դնահատում մեր հին ընկերներին, — ասաց Ռու-  
բենը թատրոնական տոնով :

Մյուս ընկերը սե ակնոցների տակից խորհրդավոր  
ժպտում էր, կարծես համաձայնելով Մադաթի հետ :

— Հենց, որինակի համար ես մեր Վաղոն, չարու-  
նակից Մադաթը ձեռքն ուղղելով նրա կողմը, նստել է,  
փառավոր վստը վտտի վրա դրել, գոպեթ ա կարդում.  
խակի մտածում ա, վոր առաջխտ ժամանակը յեթե  
ժանդարմը եզ տեսակ գաղեթի մի պուճուր կտորը  
գտնելը բանխորի մոտ, բանտում կփթացներ նրան. բայց  
հիմի վոր Վաղոնին խոսացնես, կտտի Մադաթը հին  
մարդ ա, կոմունիզմը լավ չի հասկանում...

Վաղոն լսելով խոսակցությունը, լրագիրը թողեց  
ու մտեցավ Մադաթին :

— Չե՛, չե՛ ընկեր Մադաթ, քու անուճը ա՛յ ետ-  
տեղ եմ պահել, ասաց նա, ձեռքը դնելով սրտի վրա :

Մադաթը ժպտաց դեմքի խորը ծալքերով ու մատ-  
նեց ինքն իրեն : — Պարզ յերևում էր, վոր նա չեր նե-  
ղանում ջահելներին, այլ ենպես կրտակով էր խոսում :

Բուպեաչափ նայելով Վաղոնին, Մադաթը թեթև  
ախրեց :

— Բեկ վոր տեսնում եմ, Վաղո, միտտ ա գալիս  
մեր հին ընկերներին մի լավ տղա. — մի քիչ դու նրան  
տման ես տալիս. ենպես կուղեցի, վոր նա ել մեր մեջ  
լիներ...

Տղաները դալով, վոր Մադաթը պտորատում է  
պատմելու, նստեցին նրա շուրջը :

— Լավ միտտ ա, չարունակեց Մադաթը, աշունք-  
վա վերջին էր, են թոռ ու թացին, վոր յեկավ են տը-  
ղեն, ծառայության մտով Բալայանցի նավթահանքե-

չդարձնելով ցեխի վրա, վորն ահագին ճումբեր էր  
կուտակում նրա վտտքերի վրա :

Տաք ամիսներին նա գալիս էր այդի ամենից վաղ  
և վերադառնում ամենից ուշ, մթնով : Շատերը շտե-  
նելով նրան վերադառնալիս, կարծում էլին, թե նա  
դիչեր-ցերեկ այդումն : Ե անց կացնում, բայց այս յեն-  
թադրությունը սխալ էր. — նա միայն խաղողի հատած  
ժամանակ էր զիչերում այդում :

Գյուղում ասում էլին ծիծաղելով, թե Փուչ Արե-  
լը չի մեռնելու, բանի վոր չի կարող բաժանվել իր  
այգուց — կամ հետը պիտի տանի, կամ ինքը մնա նրա  
հետ...



Ճնշող լուսթյուն էր տիրում Արելի այգու շուրջը :  
Բայց բաժական էր, վոր ճամբով անցնողը մի փոքր  
կանգ առներ նրա ցանկապատի մոտ, իսկույն նրա  
ականջին կպայթեր մի դարզանդ ձայն :

— Արա, եղ ո՞վ ես. ի՞նչ ես չինում ետեղ :

— Քեզ ի՞նչ, յես ճամբովն եմ գնում :

— Չահրումար գնաս. թե միտքը ծուռ չի ի՞նչի  
յես կաղնիլ :

— Ճամբեն ել հո քոնը չի. դու քո բաղին մտիկ ա -  
րա...

— Հա՛յ չու՛ն... չա՛ն... — վրա յեր տալիս Փուչ  
Արելը իր ամենաընտիր հայհոյանքները : Յերբեմն  
նրան ձայնակցում էր իր վիթխարի դամփուր, վորի  
հաջոցը թնդանոթի ձայնի նման ցնցում էր լսողին :

Ահարեկված անցորդը շտապում էր հեռանալ,

հետզհետե արագացնելով քայլերն ու ինքն իրեն նախատրոյ, թե ի՞նչու խոսքի առնվեց եւ «բայշուռ» մարդու հետ:

Արեւի մասին այն կարծիքը կար, թե նա ստատիկ նման յերևում է այնպէս, վորտեղ խկի չես սպասում Յերբեմն խարվելով լուսնյունից, կածելով թե Արեւը այլում չի, յերեխաները դրսից քար էլին նետում նրա ծիրանու կամ քնկուղենու վրա: Բայց հանկարծ կարծես դեմնի տակից լուս եր քննում Փուշ Արեւը, գիշտուիչ գաղանի արագութեամբ հարձակվում յերեխաններ վրա ու արյունաշաղաղ անելով, թողնում, հեռանում:

Ավելի մեծ ահ եր արդում յերբ նա բաց եր թողնում այլում կապած կատաղի դամփոխն, վորից տղաներն ավելի էլին վախում, քան դայից ու արջից:

Սակայն տղաները յերբեմն վրեժը հանում էլին Արեւից. նրանք յերկու խօրի էլին բաժանվում ու, ստաջուց ապահովելով իրենց վախուտի տեղը, բարձր ձայնով կանչում էլին իրար.

— Ե՛հէ՛յ... տեսա՞ր...

— Ո՞ւմ, ո՞ւմ...

— Ո՞ւմ, ո՞ւմ...

— Փուշ Արեւի՛ն... Փուշ Արեւի՛ն...

Հայ շուն... շուն... իսկույն արձագանքում եր Արեւի ճղղոցը, բայց, ավա՛ղ, նա վողչինչ չեր կարող անել—տղաները իսկույն ինքնավում էլին մոտակա արդում:

Այս հանդամանքը սովորական եր և չրջակա այգիներում բանուլ գյուղացիները հաճախ իրար ձայն էլին տալիս նույն ձևով: Արեւի ավելորդ անունը դիպչում

եր նրա ամենախոցելի կետին: Յեթե հնար լիներ, նա հազար դամփու բաց կթողներ այդ հանդուզն մարդկանց դղելու, խեղդելու համար:

## II

Զմեռվա ամիսներին, յերբ Փուշ Արեւն իր այգին Տը դնում, նրա առնը դասնում եր մի կատարյալ ամբողջ: Յեթե նրա բացակայութեան ժամանակ այս կամ այն բարեկամի կինը գալիս եր նրա կողմ մոտ, այժմ այդ ել եր կարվում: Այսպէս էլ, ինչպէս և այլում, մըկեր կտակածում եր իր տան մոտ անցնող ամեն մարդու, ու շան հաջոցի հետ ինքն էլ եր ճղճղում ու հայհայում:

Ուրիշ մարդկանց դուր եր գալիս սոխակի, սարյակի ձայնը, իսկ Արեւի ամենասիրած ձայնը իր շան հաջոցն եր: Քանի շաս եր հաջում շունը, նա ավելի յեր խրախուսում նրան ու կերակրում:

Այդ ձմեռվա որերին գյուղի վերի կողմից շարունակ լսվում եր Փուշ Արեւի գիւ ձայնը: Որտեղն քա՛նի անգամ նա դուրս եր գալիս, կանդնում ձորափին ու դիտում վերեկից իր այգին: Յեթե պատահամար մի ճամբորդ իր եչով կամ յեղներով կանդ եր առնում այդուցանկապատի մոտ, Փուշ Արեւն արդեն «իրեն ուտում եր»:

— Ե՛հէ՛յ... դուտւմ եր նա, դրդացնում ձորը, ու յեթե ուշը չէլին դարձնում, մահակն առած իջնում եր, ձեռնում թե տիրոջը, թե անասունների:

Իսկ տանը նա կովում եր ու բղավում ամենաչնչին տակիթով, — ինչո՞ւ կինը բան է տվել մաշտոը, ինչո՞ւ յեն հաց տվել տղքատին, ինչո՞ւ շանը լավ չեն նայել, և հազար ու մի այսպիսի պատճառներով:

Ան ամեն բանի պատասխանատուն վերջ ի վերջս իր կինն եր, վորի անսպառ համբերությունը միայն կարող եր գիմանալ Արեւի անվերջ կռիւներին:

Նա մի հյուսիսից, վոսկրացած այտերով կին եր, ամառ-ձմեռ գլուխը փաթաթած հաստ շալով, աչքերը միշտ կարմրած ու լացակումած, ասես թանձր ծուխի մէջ եր ման գալիս:

Նա շարունակ ահաբեկված եր իր ամուսնուց ու շղկված ծառայի նման չղիտեր, ի՞նչ անի, վոր դոհացնի նրան: Միշտ ցրված, ինքն իրեն խոտում եր ձայնով, այնպես վոր յեթի մեկը նրան ծածուկ հետեւէր, կարող եր այդ մենախոտությունից իմանա, թե ինչ է կատարվում Արեւի տանը:

Յերբ Փուշ Արեւը վերադառնում եր այդուց, նա դեռ տուն չհասած դռում եր փողոցից.

— Ե՛ր, չներ, դուրս յեկեք:

Կինը, յերբեմն հարեանն ու աղջիկը դուրս ելին ընկնում լեղապատառ: Մանուկանք կինը այնքան եր ինքն իրեն կորցնում, վոր շլարած կանգնում եր անասնոջ:

— Ի՞նչ ես աղոթած ելի նման կաղնեւ, ծաղրում եր Արեւը, տա՛ր ես խուրջները:

Խուրջները տանում եր, եչը կապում, անասնոջ խոտ դցում, հետևում, վոր մարդու ամենաչնչին հրամանը կատարվի, բայց Արեւի փնթփնթոցը չեր դադարում:

— Ես խոտը վո՞նց ես անել... ա՛յ սատկեք դուք... տամ սպանե՛մ...

Այնուհետեւ կովի հերթը գալիս եր իր տղաներին: Նրանք հողնած, ջարդված, վոտները լվանալուց հետո թիկնում ելին թախտի վրա, մութաքին: Արեւը խեթում

եր նրանց, համարելով այդ անթույլատրելի ծուլություն:

— Ա՛յ գյաղեք, են արտը վարեցի՞ք, հարցնում եր նա հենց առաջին խոսքից:

— Հա, կեսը պրծանք:

— Հայ թամբալ եք ե՛... Բա են Մադոսանց կողմից ի՞նչ արիք:

— Ենպես թողինք, — պատասխանում է մեծ տղան, վորը իր արտաքինով հոր նմանակն եր և նրա նման ճղճղան:

— Բա կարացիք վոչ նրանց արտից միխելի մեջ պցե՞ք:

— Ուզում ես մեզ տան սպանե՞ն... նրանք շատ վոր են ե՛, — ձայնը բարձրացնելով պատասխանում է մեծ տղան:

— Կորեք ե՛... ձեր հերն ել կասի, թե տղերք ունեմ:

— Ի՞նչ ես շատ խոտում, դեմ դու ինքդ արա՛ թե ուզում ես:

Ու յերկուսն ել սկսում ելին աղմկել, հին ու նոր հիշել, իրար հայհոյել: Դրսից այնպես եր թվում, թե հայր ու տղա պետք է իրար սպանեն:

Մյուս որը հայրը հեաները դնում եր, հարեանի արտից բավական տեղ վարում, իրեն արտին միացնում: Այդ պատճառով սկսվում եր մի արյունալի աուրուղմբոց ու յերկու կողմն ել ջարդված զրուխներով վերադառնում ելին տուն:

Դյուղում արդեն բոլորը համոզված ելին, վոր Փուշ Արեւի հետ հարեւանություն անելն անկարելի յե, վորովհետեւ սահմանափճերն ու կռիւներն անսպառ ելին: Առաջներում նա կովով ու ծեծով իր այդու յերկու

հարեանների «գլուխը կերել եր» — մեկի ուսը Չարդել, մյուսի աչքը կուրացրել: Ամեն տարի նա նորոգում եր իր ցանկապատը և հարեանի հողից «գալթում»: Վերջը յերկու հարեաններն ել, ահարեկված լինելով, բատիպված ելին չնչին գներով ծախել իրենց ալգինները Արեկի վրա:

Արեկի համար սովորական բան եր և մշակների հետ կովելը: Առանց վարձը կտրելու և ծեծելու նա յերբևք մշակ չեր արձակել. մշակները փորձում ելին դանդատվել, բայց թե դյուզում, թե նրանից դուրս բոլոր իշխանությունները ձեռք ելին քաշել Փուշ Արեկից և աշխատում ելին ազատվել նրա «գործից»:

Տանըցիք միշտ ահ ու սարսափի մեջ ելին նրա անվերջ կոխվներէց: Հենց վոր մի տեղից կովի ձայն եր դալիս, Արեկի կինը խկույն թուլանում ընկնում եր դետին ու ծնկներին վեր հատում:

— Վա՛յ քոտանամ յես, երեխանցս, մարդիս սպանեցին... հասե՛ք, ոգնեցե՛ք...

Ասում եր ու նվաղում: Յերեսովը ջուր ելին տալիս ու հաղիվ ուշքի բերում:

Կովում եր Արեկը ումեն տեղ — ալգում, արտում, ամանը: Նրա համար կոխվը նույնքան սովորական եր, ինչպես հացն ու ջուրը:

### III

Բայլչեիկների դալուց Արեկը սխալվեց. նա կարծում եր, թե դալիս են առաջվա ռուսները և չեր հավատում այն ամենին, ինչ վոր նրանց մասին պատմում ելին: Առհասարակ նա անհավատ եր հենց հեղափոխության սկզբից. դուրսը պտտվող լուրերը նրա մի ահանջից մոտնում, մյուսից դուրս ելին գալիս:

Յերբ նրան ապացին, թե թաղավորին վեր են դըցել, հարցրեց.

— Բա նրա տեղն ո՞վ ա, ախպերն ա՞, թե՞ տղեն:

— Ոչով, հենց ընենց, առանց թաղավորի յեն կառավարվելու:

— Ի՞նչ ես սարսաղ խոսում, հարձակվեց Արեկը, սկի մի բաղն առանց տիրոջ չի/կառավարվում, մի թաղափորություն կկառավարվի՞...

Մի բան նրա համար պարզ եր, — պատերազմից սկսած՝ ժամանակը խառնվեց, հացը պակսեց, մշակը յերես առավ, իրեն թշնամիներն ու վնասողերն շատացան:

Արեկի գործն այդ տարիներին բավական դժվարացավ, — առաջվա նման ել չեր կարողանում մշակի վարձը կտրել, և մեծ ճիգեր թափելով եր պահպանում իր բարձր ցանկապատը, վորը կարծես առաջվա դուրսությունը կորցրել եր և ել չեր վախեցնում մարդկանց:

Յերբ յեկան բայլչեիկները, և Արեկը համողվեց, վոր նրանք իր ուզած մարդիկը չեն, մի մուսլլ ամպ լուջավ նրա վրա: Նա տապ արավ, թաքնվեց իր այգում ու մտածում եր, թե դուցե ես «պատուհասն» ել անցնի, հարկավոր ե միայն աչքի չերևալ, վոր իր վրա ուշք չդարձնեն, իր ունեցած հարստությունը չխլին:

Նա իր ահանջները փակել եր «դրսի» խոսակցություններից, վորովհետև նրանք թշնամուց ելին գալիս, իրեն հակառակ ելին:

Ու փակված իր այգում, տեսնելով, ինչպես բույսերը, վաղո՞ւց սահմանված կարգով զարնանը կանտուցում, ծաղկում ելին ու աչնանը, թառամում, թվում

եր նրան, թե աշխարհումն ել վազինչ չի փոխվել ու ելի  
հին, հաստատված կարգով կզնա...

Շատ անգամ նա նույնիսկ սիրտ եր առնում, մտա-  
ծում, թե ո՞վ պիտի խլի իր այգին, չե՞ վոր գյուղա-  
ցիները, իսկ նրանցից նա յերբեք չի վախեցել, միշտ  
ինքն է նրանց ճնշել, ինքն է ուրիշից բաղերը խլել, ել  
ո՞վ կհամարձակվի մոտ գալ իրեն...

Այդ ժամերին նա մոռանում եր դրսի ալեկոծ,  
խառնիխուռն գործերը, դգում եր իրեն իր թաղավո-  
րության մեջ— ելի են վաղներն եյին, են ծառները,  
ելի են Աբելն եր, հրամայող ու տիրություն անող Ա-  
բելը...



Աշնան մեղմ, ամպած որ եր: Այգիներում դեղնած վագ-  
ներն ու ծառերն ասես տապ արած սպասում եյին, թե  
յե՞րբ կիջի դորեղ քամին, տերևաթափ կանի իրենց:

Աբելի այգու առաջ կանգնած եյին չորս հոգի-  
դյուղխորհրդի քարտուղարը, յերկու կատարածու և մի  
միլիցիոներ:

Դուռն ուժգին թակում եյին ու ձայն տալիս Աբե-  
լին:

— Ո՞վ ես, ի՞նչ ես ուզում,— լսվեց հանկարծ Ա-  
բելի ծղրտոցը:

— Միլից ա յեկել, բաց արա:

Կատարածուն դիտմամբ սկսեց «միլիցից», վորով-  
հետև Աբելը կարող եր հակառակվել, չբացել դուռը:  
Այդ խոսքը նրան կակղացրեց— դուռը ճոռալով բաց-  
վեց ու յեկվորները կռանալով ու կողքերը քսելով ներս  
մտան:

Աբելը կռակածոտ հայացքով դիտում եր նրանց

վտոից ցզլուխ, աշխատելով իմանալ նրանց գալու նը-  
պատակը:

Քարտուղարը,— մի ցածրահասակ, խոնարհ դեմ-  
քով յերիտասարդ,— Աբելին տեսնելուն պես շփոթ-  
վեց, կարծես պիտի հրացանաձգություն սկսվեր: Նա  
իսկույն բացեց իր հասարակ կտորից շինած թղթապա-  
նակը և ոգնության կանչեց թղթերին:

— Աբել, մենք յերկու անգամ ճեղ կանչել ենք,  
բայց դու չես ներկայացել: Հիմա յեկել ենք հայտնելու  
գյուղխորհրդի վորոշումը. ահա կարդում եմ...

Նոր եր սկսել կարգալ քարտուղարը, յերբ Աբելն  
դգալով մի չարագուշակ բան, իսկույն կտրեց թելը.

— Ինչի՞ մասին եք յեկել:

— Գյուղխորհուրդը վորոշել է թո այգին հանձնել  
դպրոցին, իսկ ճեղ նորմայով տալ...

— Ի՞նչ,— ծղրտաց Աբելը, վառողի նման բռնկ-  
վելով: Նա ավելի շուտ կհավատար, վոր ինքն այդ  
որը պիտի մեռներ, քան թե այս վորոշմանը:

— Ո՞ւմ բաղն ես տալի... Քո հոր բաղն ա՞, թե  
տերը մեռած ա...— գոռում եր նա:

— Ուրեմն դու չես ուզում կատարել գյուղխոր-  
հրդի վորոշումը,— ասաց քարտուղարը, վարակվելով  
Աբելի հուզմունքից:

— Արա, ի՞նչ ես գլխիս պատարագ անում, յես  
սաղ տեղով բաղ չեմ տալ, իմանում ե՞ս թե չե...

— Դե սրան տարեք գյուղխորհրդի գրասենյակը,—  
կարգադրեց քարտուղարը:

Անմոռանալի տեսարան եր: Աբելին բռնած դուրս  
բերին: Նա ենպես եր ճղճղում, կարծես չիկացած յեր-  
կաթով դադում եյին: Քաշքշում եր, աքացում ու փր-  
փրած բերանով հայհոյում: Յերբեք կատարածուններն

ու միլիցիաներներն այսպես ծանր գործ չէին սենեցել:

Յերբ նրան ներս տարան դյուղխորհրդի գրասենյակը, կարծես միանգամից հարյուր մարդու ձայն ներս խուժեց:

— Հայտնեցի՞ք մարտչու՞մք, — հարցրեց նախագահը, աշխատելով լուրջ տեսք տալ իրեն, բայց չհամբերեց և ասաց իր կողքին նստած կենտրոնից նոր յեկած ընկերոջ ականջին.

— Ի՞նչ ձուկն են բռնել... կուլակների թաղամարն է...

— Այո, հայտնեցինք, բայց չի ուզում կատարել, — ասաց քարտուղարը:

— Գործը հանձնեցեք միլիցիային, սրա հետ մարդավարի խոսելն անկարելի չէ, — կարգադրեց նախագահն ու շարունակեց իր ընդհատած խոսակցությունը:

\*\*\*

Մի շարաթ ուղղիչ ասանք նստելուց հետո Աբելը դուրս գալուն պես՝ վազեց դեպի այգին: Յերբ նա տեսավ դուռը կիսաբաց, նոր միայն դրաց, վոր իսկապես մի դժբախտություն է պատահել իր այգուն: Ներսից լսվում էին աշխույժ ձայներ: Այնտեղ աշխատում էին աշակերտները դյուղատնտես ուսուցչի ղեկավարութեամբ:

Կատաղությունից ինքն իրեն կորցրած — Աբելը ներս մտավ ու մի ձող հանելով գետնից, վազեց հայհոյելով դեպի աշակերտները:

Վաղուց ծանոթ այդ դաժան ձայնից սարսափած, աշակերտները մի անկնթարթում ցրվեցին վազների մեջ, ուրուրից հալածված ճուտերի նման: Ծառու-

ղիւսմ մնաց միայն ուսուցիչը, վորն ոտաք լինելով, չըլտեք, թե ինչ է կատարվում:

Հանկարծ ձողի ծանր հարվածն իջավ նրա ուսին: Սաստիկ ցավից նա ճչաց:

— Սրեկա. Ի՞նչպեք ես համարձակվում...

Ու յերկու ձեռով պինդ բռնեց ձողից: Աբելն սկսեց քաշքշել ձողը և մոտ եր հաղթելուն, յերբ աշակերտները նկատելով ուսուցչի կռիվը, ամեն կողմից դուրս թափվեցին ու շրջապատեցին Աբելին: Վո՞րբ փեշից բռնեց, վո՞րբ ձեռից, վոտից ու բոլորովին կաշկանդեցին նրան:

Աբելը հրում եր աշակերտներին, արացում, բայց նրան չէր հաջողվում ազատվել այդ փոքրիկ, բայց բազմաթիվ ձեռքերից:

Ուսուցիչն արդեն ազատվել էր Աբելից ու սաստիկ հուզված գոռոտում եր. — լի՛րբ, սրեկա՛, դու գիտե՞ս, ում հետ գործ ունեւ... յես ընդ ցույց կտամ...

Իսկ Աբելը մի գլուխ գոռում եր.

— Բաց թողեք ե՛, մի տամ սպանեմ ե՛... եղ ո՛ւմ բաղն ես յեկել...

Շուտով դուրս յեկան և մնացած աշակերտները, նրանց մի մասը պիտոններով նման ձողերն առած՝ սլահակ կանգնեցին: Հենց վոր Աբելը շարժվում եր, նըրանք ել իջեցնում էին ձողերը և սախում նրան հանգարավելու: Կատաղությունից նա հայհոյանքներին եր դու տալիս:

— Յերկու հոգով գնացեք ի՛նչ արեք դյուղխորհրդի նախագահին, — կարգադրեց ուսուցիչը:

Աշակերտներից յերկուսն իսկույն վաղեցին դեպի դյուղը:

Վերջապես յեկան կատարածուններն ու միլիցիո-  
ները և տարան Աբելին նույն աղմուկով ու տաժանա-  
կիր չարչարանքով, ինչպես սոսաջին անգամ: Այլևի  
հետ եր հարյուր մարդ տանել, քան թե Փուշ-Աբելին:

IV

Աբելը յերկրորդ անգամ նստեց ուղղիչ տանը և  
դուրս յեկավ այնտեղից շատ ընկճված: Նա այժմ հա-  
մոզվեց, վոր իր այգին խլել են, և վոր ինքն իր ուժով  
—վո՛չ փայտով, վո՛չ խանջալով ու հրացանով չի կա-  
րող վերադարձնել:...

Նրա մեջքը կտորում է այն, վոր հույս չունեի  
նույնիսկ իր տղաների վրա: Ընդհակառակը, նրանք  
խորհուրդ եյին տալիս համաձայնիել ամեն ինչի հետ:  
Մինչև անգամ ամենախիստ կերպով արգելել եյին  
վորեւ «ղալմաղալ» անել այդու մասին: Ու նա ստեղծ-  
ված լուծում էր, ու զգում էր իրեն սղմված ու ճնշված,  
ինչպես այն որը, յերբ ամեն կողմից շրջապատված էր  
աչակերտներով:

Նրա ձեռքը գործի չէր կաշտում: Շարունակ ման էր  
գալիս մտամուրթ, չոսած աչքերը դետնին հառած, ա-  
սես մի թանգադին ակնեղեն էր կորցրել ու փնտրում  
էր յերկար ու անհույս: Քայլում էր աննպատակ, հե-  
տո նստում մի քարի վրա, աչքերն ուղղում մի կետի,  
հետո վեր կենում, նորից քայլում, ախ ու վիչ անելով:

Յերբեմն իջնում էր ձորը, մոտենում իր այգուն,  
տեսնում էր իր բարձր ցանկապատն ու դարմանում, վոր  
այդ ցանկապատն այժմ իրեն տիրոջ դեմ է, իրեն ներս  
չի թողնում:...

Ինչ անի, կտորի՞ դուռը, պատուի՞ չափարը (ցան-

կապտը)... չի, նա եղպես բան չի անի... նա ալիքի  
չուտ ժամ կկողոպտի, քան թե իր չափարի վրայով  
կանցնի:

Ախ էր քաշում ու մեծ սգավորի նման ընկճված  
վերադառնում տուն, վոչ վորքի չնկատելով ճանապար-  
հին:

Նրա կինն արդեն թաղուն սուգ էր անում մարդու  
վրա, համարելով նրան խելագարված, ու մի ճար էր  
փնտրում աղատելու համար: Գրբացն ասել էր, թե խա-  
չիցն է, պետք է մատաղ անել, բայց այդ բանը դժվար  
էր իրագործել—Փուշ Աբելի հետ խոսելն անկարելի  
էր:

Մի որ էլ, նկատելով, վոր Աբելը ման է գալիս  
տատանվելով աջ ու ձախ, կինը լեղապատառ վագեց  
տերտերի մոտ:

—Տերտեր ջան, մի տիրություն արա, մարդս ձե-  
ռիցս դնում ա...:

Ու սկսեց իր սգավորի լացը:

Տերտերն սկզբում շփարեց, վորովհետև ինքն էլ—  
կորցրած նախկին «ժողովուրդն» ու փառքը, Աբելից  
վատթար դրության մեջ էր, բայց իր հին փեշակը հի-  
շելով, խոստացավ ճանապարհի բերել Աբելին: «Նլի  
ինչքան չի, մի կրճունք մնացած կլի ինձ համար»,  
մտածում էր նա, հույս տածելով, վոր կարող է ոգտ-  
վել Աբելից:

\*\*\*

Նոր էր տերտերը պատրաստվում Աբելի մոտ գնա-  
լու, յերբ ինքն Աբելը ներս մտավ, ձեռին մի կապոց  
բռնած. բերել էր մի գավաթ գինի, հաց և մի յեփած  
հալ:

Առանց «որհնյա ի տերի» նա լուռ հասեց թախտին :  
Տերտերի աչքերը փայլեցին, կապոցը տեսնելով :

— Աբել, խեղ ըլի, եղ ինչի՞ եղպես տխուր ես...

Աբելը լուռ եր :

— Ես այնտղինը ասա տանեն պատրաստեն, — ասաց Աբելը խոժոռած դեմքով :

Տերտերն խփույն կանչեց տիրուհուն ու պատվիրեց սեղան սարքել ու ավելի վողկորվեց, ուչքի յեկավ, ինչպես շոգից խեղճացած բույսը՝ անձրևից հետո :

— Աբել, փոնց վոր տեսնում եմ, շատ ես քեզ դարձրին տուր տալիս. մի՞թե չես տեսնում՝ ամենքս ել նեղացած ենք, բայց համբերում ենք. մտքիդ յետեից մի ընկնիր. հալբաթ մի որ աստո՞ծ քաղցը աչքով կնայի մեզ վրա ու կարողութունը յես կտա...

Աբելը լուռ եր : Նա չէր նկատում՝ ինչպես տիրուհին սուսերեն դգում եր, ինչպես տերտերն ազահութամբ ուտում եր ու իրեն ել հյուրասիրում : Նա ուչքի յեկավ այն ժամանակ, յերբ տերտերն ուժով նրա ձեռքին դրեց հավի մսի կտորը հացի հետ :

— Տերտեր, մի խորհուրդ ունեմ քեզ հետ, — ասաց Աբելը յերեսը ծովոտելով, կարծես ինչ վոր կծու բան եր ուտում :

Տերտերն արդեն կատարը տաքացած, ըստ սովորության սկսեց մորուքը շոյել :

— Խորհուրդ մարդո, կամք ասածո, մի ասա տեսնանք...

— Տերտեր, քու խելքդ վո՞նց ա կտրում, ես մեր աշխարհը տեր ունի՞, թե չե :

Տերտերը մի քանի անդամ շոյեց միբուքը :

— Դե առաջ աստված յերկնքից եր տիրություն անում, թաղավորն ել յերկրից. հիմի թաղավոր չու-

նենք, յերկիրն տեսներ ա մնացել : Աստված ել խոսվել ա մեր գլխին :

— Բա ասում են կենինն ա մեզ կատավարում ու շատ ել խելոք մարդ ա...

Տերտերը դարձացած նայեց Աբլին, բայց խփույն հարձարվեց :

— Հա, տեսնք թաղավորի տեղ կենինն ա, ուղիղ ա, բայց ի՞նչ... Նրա ասածները չեն կատարում. բա նա ստել ա, թե ժամը թատրոն չինեցիք...

— Յես ել եղ եմ մասձում. թե նա աշխարհիս դըլուին ա, խելոք մարդ ա, բա կհրամայեր, վոր իմ բաղը խլի՞ն... Նա վոր իմանար, կհրամայեր, եղ բանն անողներին Սիրիբ դարկեն :

— Ուղիղ ես ասում, Աբել : Դրանից ա ես մեր անաքանդությունը, վոր կենինի հրամանները ծուռ են կատարում :

— Ի՞նչ ծածկեմ քեզանից, տերտեր... Ուղում եմ դնամ կենինի մոտ դանդա՞ն անեմ, հասկացնեմ... բաղըս ազատեմ եղ տնաքանդներից :

Տերտերը նորից դարձացած նայեց Աբելի վրա. «Ես Աբելից չի. վո՞նց թե եսպես բան»... անցավ նրա մըրքով :

— Կավ ես ասում, — համաձայնից նա, — բայց առաջինը, վոր կենինը, ասում են, հիվանդ ա, յերկրորդն ել՝ նրա տեղը հետու ա, ծախս շատ կուղի :

— Ինչ անեմ. հիվանդի մոտ կդնամ, վրտները կընկնեմ, աղաչանք կանեմ... ինչ ունեմ-չունեմ կծու խեմ, կդնամ. յես առանցի իմ բաղի չեմ ապրի... մեհակ մի բան եմ խնդրում— վոր մեծ տղիս համողես... մի խոսքով կատես— թե վոր չեն թողնի դնամ— թող

մի թվանք տան ինձ, գլուխս տամ սպանեմ: Ծսպես ա բանը...

— Լավ, աչքիս վրա, կիտսեմ, կաշխատեմ համոզել,— համաձայնվեց տերտերը, զարմանալով այս տարրինակ մտադրութեան վրա: Ու շորերը կարգի բերելով, դավազանն առավ, դուրս յեկավ անից Աբելի հետ:

V

Ձյունը հանդարտ դալիս էր ու փափուկ նստում, կարծես մոռացութեան ծածկելով ամեն ինչ: Աբելը նստել էր մոխրադուլին ձիու վրա, հասա ջուրքը հազին, մեծ փափախը գլխին, վերեւից ել բաշտուղը կապած: Իր հազած հասո շորերով նա համարյա յերկու անգամ այլեւայլ եր մարմնի ծավալից:

Ձին դանդաղ քայլում էր, իսկ Աբելը տարվել էր իր մտածմունքներով: Նա գնում էր յերկաթուղու կայարանը, այնտեղից ել պիտի գնար Մոսկվա, Լենինի մոտ: Գնում էր վորպես ուխտավոր, լցված մեծ սպանելիքներով:

Ի՞նչ դժվարութեամբ գլուխ բերեց այս բանը— սղանքը մի շարաթ էր, կովում եյին, չեյին թողնում, վոր դնա, բայց չկարողացան «կտրել», համողել նրան:

Քանի հեռանում էր գյուղից, այնքան ավելի նրա մտքերը թռչում եյին հեռու: Ահա նա մտածում էր, թե ինչպես կհասնի Մոսկվա, կգնա Լենինի տուն, փափախը կվերցնի ու խորը գլուխ տալով կզնի վտանքի առջ ու կասի:—

— Պարոն Լենին, սասո՞՞՞ հաստատ պահի ջո կառավարութեանը. դու հրամայել ես, վոր ամենքն իրմ գեք ասեն. բայց յես վո՞նց կարամ ջեղ հընգեր ասեմ.

դու վո՞րտեղ, յես վո՞րտեղ... յես ջու վտտի թողնեմ... («պետք է մարդու պատիվը պահես, վոր նա յեւ խնդիրքը լսի ջաղցը աչքով») ... Պարոն Լենին, թե կուզ հրամայիր գլուխս կտրեն, միայն թե ես խնդիրս կատարիր. Բու մարդիկ խել են իմ աչքի լիս բաղը... դու նրանց հրամայել ես, վոր մեր ունեցածին մի բան ել ավելացնեն, բայց նրանք ջո հրամանը չեն կատարում, երածն ել խլում են... (ետեղ Փուշ Աբելը լաց կլի, վոր Լենինի սիրտը մղկտա):

— Բու փախիւմ ի՞նչ ա, դու վո՞ր դեղիցն ես... կհարցնի Լենինը:

— Իմ ֆամիլն Աբել Գաչքոտյանց ա, ավել անուամ ել թե հարցնես— Փուշ Աբել են ասում... մեր դեղն ել Տանձակոթն ա...

Լենինի աչքերը պեծին-պեծին կանեն, նա չարացած վտտները դետին կի՞տի ու կհրամայի:

— Ես ո՞վքեր են իմ հրամանը վտտնատակ տվել, ի՞նչպես էք համարձակելի եսպէս պատվաբո մարդուն նեղացնել... Ես ըոպեյին թելդրամ տվեք, վոր Տանձակոթի խորհրդի մարդկերանց չաթեն ու բերեն ետեղ, վոր յես խիտտ պատիժ տամ...

Ու Լենինի ողնականները վախից դուրաները կկատեն ու աչքի տակով մտիկ կանեն Աբելին, վոր իրենց խղճա, մի ջեչ բարեխոս ըլի:

— Պարոն Լենին, — կասի Աբելը, — դու ինձ մեռած անդից կենդանացրիր. ջո լավութեանը հավիտյան չեմ մոռանալ. միայն թե եղ ջո մտտի մարդկերանց բաղչի, դրանք չեն մեղավորը, մեր Տանձակոթի մարդիկ են պատճառը...

Աբելի մտածմունքները կանպ առան, յերբ նրա

դիմաց յերևաց կայարանի կարմիր շենքը: Յերբ մտա-  
ցավ, տեսավ մի խումբ շահեխներ դրոշակը բարձրա-  
ցրած՝ կանգնել են շենքի առաջ:

«Չի՞նի թե իմացել են, վոյ յես Մոսկով եմ գնա-  
լու ու յեկել են ճամբես կարեն, խափանեն...»

Իսկույն ձիու յերեսը շուռ տվեց ու յերկար պառչոյտ  
անելով գնաց յերկաթգծի մյուս կողմն ու կանգ առավ  
խանութի առաջ: Չին հանձնելով խանութպանին, ինքը  
գանդաղ քայլերով, վախվիտելով գնաց դեպի կայա-  
րանը:

Նորից նկատեց մի ուրիշ խումբ բանվորների, վո-  
րոնք գնում էին դրոշակը բարձրացրած: Նա թաքնվեց  
պահեստի յեռեն ու դադտագրդի դիտում եր այդ յեր-  
թը:

Հանկարծ շոգեկառքը սուլեց: Կարծելով թե գնաց-  
քը մեկնում է, Աբելը դուրս յեկավ թաղստից ու շտա-  
պեց դեպի կայարանի շենքը:

Ճանապարհին պատահեց սրաքաղարը:

— Պոեղզի ժամանակն ա՛յ, — հարցրեց:

— Չէ:

— Ես ի՞նչ խաբար ա, ինչի՞ յեն բայրաղներով  
գնում:

— Բա իմացել չե՞ս... Լենինը մեռել ա...

— Գովել հո չե՞ս... Ի՞նչ ես մարդկերանց խա-  
բում:

— Ի՞նչ խաբել, հեռագիր ա յեկել:

— Ի՞նչ ես ասում... ո՞ւմ ես խաբում...

— Ուղում ես, գնա հեռագիրը տես. ա՛յ, դրոշակ-  
ներն ել սեռով են պատել...

Աբելի ծնկները թուլացան. կարծես ամեն ինչ խա-  
վարեց աչքին:

Նա որորվելով մի քանի քայլ արավ ու հանկարծ  
ընկավ գետին:

— Վա՛յ, տունս քանդվեց, վա՛յ, Լենինը մեռավ...  
կանչում եր նա ու ձեռներով դլխին վեր տալիս ու նո-  
րից կանչում:

Աղմուկի վրա հավաքվեցին նրա շուրջը կայարանի  
ծառայողները և գնացքին սպասող ճամբորդները: Ծա-  
տերը կոանում էին, հարցնում.

— Ի՞նչ է պատահել:

Բայց նա վոչինչ չե՛ր պատասխանում: Հարցնում  
էին ուրիշներից. նրանք էլ չգիտեցին՝ ինչով բացատրել  
նրա բացը:

Իսկ Աբելը շարունակում եր իր կոծը — վողբում եր  
վողբում եր Լենինի մահը, իր շուրջը դրավելով նորա-  
նոր մարդկանց

Ճ Ա Մ Բ Ի Ն

I

ՎԵՐՁԸ ԳՐԱԲԱՐ ԽՈՍԵՑԻՆ

Յերեկոյան գնացքն արդեն անցել երբի քանի կա-  
յարան: Վազոնի կուպեներից մեկում չորս ճամբորդ-  
ներէց յերկուան արդեն պառկել էյին վերելի դարակ-  
ներէ վրա, իսկ մյուս յերկուսը դեռ նստած էյին պա-  
տուհանի առաջ, վտըրիկ սեղանի մոտ: Նրանք արդեն  
ընթերի էյին ու այժմ առատորեն ծխում էյին: Մեկը  
բանվոր վասկանն եր-քառասունին մոտ, նիհար կենարո-  
նացած գեմքով, իսկ մյուսը-ընկեր Թամիրջանը-կըր,   
մաքուր սաիրված գեմքով, սև ու խոշոր աչքերով մի  
յերիտասարդ: Յերկուան էլ գնում էյին գործարան,  
վարպետ հարվածայիններ, բայց զանազան հիմնարկ-  
ներից:

— Ա՛յ թե, ի՞նչ դժվար տեղ էյինք. ն՛... Են ժա-  
մանակվա կառավարիչներէց մեկն ասում եր-ես դոր-  
ձարանը մեկ էլ Գրիստոսի յերկրորդ զալսոյանը կաշ-  
խառի, այսինքն—յերբեք: Բայց մենք էլ մերն արինք,  
նպատակին հասանք. լավ միտոս են մեր առաջին քայ-  
լերը, յերբ վճռեցինք արհեստանոցը բանացնել: Ժողով  
արինք, իսկը-իսկըի սովինք, բայց դե հնար չկար  
գործն սկսելու, շատ բան եր պակաս: Տեսա, վոր բան  
չի դուրս գալիս, դուր տեղն օրերը կորչում են, գնա...

ցի ասի-ընկերներ, ինձ ուղարկեք կենտրոն, գնամ, ինչ  
վոր հարկավոր ա արհեստանոցի համար-բերեմ: Բո-  
ւորը համաձայնվեցին, ու յես էլ ճամբար ընկա, հետս  
վերցնելով մի գորեղ մանդաս ու մի մեծ ցուցակ, վորի  
մեջ մանրամասն հիշված եր, թե ի՞նչ ու ի՞նչ պիտի  
բերեմ:

Են ա, վոտս դուրս դրի-սկսվեց իմ տանջանքը:  
Գիչերը կտորած, անքուն տեղ հասա, ու հենց կայա-  
րանցից գնացի մեծ պահետը-ասի մի աչք ածեմ, տես-  
նեմ, ի՞նչ ունեն, վոր նրա համեմատ էլ պահանջեմ:  
Հետո գնացի վարիչի մոտ, ներկայացրի մանդասս ու  
ցուցակը: Դեռ բավական ժամանակ ուշադրություն չեր  
դարձնում, հետո նայեց ցուցակին ու քիթը ծռմուկով  
ասաց.

— Ես բաները մեղ մոտ չկան:

— Վո՞նց թե չկան, — ասում եմ, — ախր յես ինքս  
աչքովս եմ տեսել պահետում:

— Դու ի՞նչ իրավունք ունես մեր պահետը նա-  
յելու, թողաց վարիչը. — դո՛ւր, շատ դուր ես գնացել:

— Դե վոր իզուր ա, էլ ի՞նչ ենք խոսում, — ասա-  
ցի, — են ա գնամ նախազահի մոտ, թող մի անգամից  
մերժի, յես էլ կվերադառնամ...

Նախազահի անունը վոր տվի, ես մեր ջահել բյու-  
րոկրատը կակղեց.

— Պետք է անմիջապես ինձ դիմեք, — ասաց, այդ  
դեպքում կարող եք ստանալ...

Ուզում էյի ասել-ա՛յ անհոտ ծաղիկ, նոր չե՞ր  
ասում էյիր, թե եղ սպրանքները չունենք, բայց դե  
մտածեցի-ի՞նչ յերկարացնեմ, մանավանդ վոր գործը  
հաջողվելու վրա յեր:

Ցուցակը խոշոր տառերով մակագրեց. վերցրի ու

վաղեցի պահեստը: Ապրանքը տեղավորեցինք արկղնե-  
րում, մեխեցինք, դրինք ֆուրգոնի վրա: Բայց մի շարք  
մանր-մունր, կտորվող ու թափվող բաներ կային, վո-  
րոնց ստիպված էյի ձեռներով տանել:

Հիմի դու տես-նասե՞լ եմ ինչ վոր արկղի նեղ ուսին,  
ձեռներն բռնած եղ մանրուկները: Փուրգոնը քարերին  
դիպչում ա, վեր-վեր թռչում ու թափ տալիս ինձ, նըս-  
տատեղս ջարդում, ձեռներս ել ազատ չեն, վոր մի բա-  
նից բռնեմ, մի քիչ դինջացնեմ մարմինս:

Նստես ջարդ ու փշուր լինելով, վերջապես հասա  
կայարան: Տեսնեմ-ենտեղ լիքն ա, լի՞նց ա լիքը մարդ-  
կանցով: Բազածի մասում ուղղակի պատի նման առաջս  
կապված եր: Մի տղայի ողնությամբ բերինք իրե-  
դեններս, թափեցինք դռների մոտ: Հիմա մնացել եմ  
մոլորված, մտածում եմ-վոր եսքան տարանքը մնա  
թափթիված ու կորչի՞-ով ա պատասխանատուն...

Չգիտեմ, վո՞րտեղից դիտիս փչեց, սկսեցի դասալ:  
Թե ի՞նչ էյի ասում-խոսի չեմ ել հիշում, միայն թե իմ  
ձեռից վախեցած-ստջես կանգնած մարդիկ հեռ-հեռ  
էյին նայում, ու մինչե՞վ անգամ ճամբա էյի տալիս ինձ.  
Քիչ-քիչ ներս խցկվելով, յեկա հասա բազածի մասը:

Նստեղ ել սկսեցի իմ բղավոցը: Յերեվի շատ էյի  
ջղայնացած, վորովհետե բազած բնդունող տղան, վորը  
տանց են ել շմամ եր չորս կողմի աղմուկից, վեր  
թռավ տեղից, հենց իմանալով, թե մի դժբախտություն  
ե պատահել: : Վերջապես մի կերպ հասկացավ իմ ու-  
ղածը ու կարգադրեց, վոր իրեղեններս դնեն կշեռքի  
վրա:

Եղ վոր ասեց, նոր միայն շունչը հեռ յեկավ: Իս-  
կույն բազածի թուղթն առա ու վաղեցի դեպի վաղոնը:  
Են առաջին տարվա յերկաթուղիների դրուժյունը հո

միտղ ա... Գնացի տեսա-վաղոններում ենքան մարդ  
կար, վոր իսկի դռների մոտ ել հնար չկար կանգնելու:  
Դե արի ձեռքերդ զբաղված բարձրացիր սանդուղանե-  
րով ու տեղ բռնիր: Իմ բաղդից կանդուկտորը յեկավ,  
մտա՞լ վաղոն, (վա՞յ են մտնելուն), յես ել նրա յետե-  
վից յերկու քայլ առաջ դնացի: Հենց կանգնեցի ու են-  
պես ել մնացի, վոնց վոր ցից փետ... վոչ կարողանում  
էյի շարժվեմ, վոչ ել գոնե ծնկներս ծալեմ, մի քիչ  
հանգստանամ:

Մոռացա ասեմ, վոր հետս տանում էյի և հինգ  
հարյուր միլիոն փող. են ել ամե՞լ էյի մի պարկի մեջ  
ու ձեռիս կախ բռնել: Ենպես էյի հողմե՞լ, վոր չեյի  
նստել, եղ հինգ հարյուր միլիոնանոց պարկը անպա-  
տիվ ընկել եր վոտներին տակ...

Վերջպես, ի՞նչ յերկարացնեմ, եղպես տանջանքի  
մջ, գիշերվա ժամի յերկուսին եր, թե յերեքին— տեղ  
հասա: Դե հիմի թե սղա յես, արի եղ մարդկանց պա-  
տերը ճեղքիր ու դուրս յեկ. դես բոթելով, դեն բղա-  
վելով, դուրս պրծա եղ վաղոն-բաղնիսից ու դեռ ուշքի  
չեկած, քրտինքի մեջ կորած, — վաղեցի դեպի կայա-  
րանը: Վոչ վոք չկար ենտեղ, բացի հեռուարական մի  
ծառայողից: Մինչև դես ու դեն ընկա, տեսնեմ— դուայ-  
քը շարժվեց:

Նոր միայն դուրս յեկավ քնաթաթախ կայարանա-  
պետը: Հարցրի բազածիս մասին. դլուխը շարժեց,  
մթամ չի ստացիլ: Ուրեմն պարզ եր— բազածը ցած  
չէյին բերել... ահա քեղ շարժարանքիդ վարձը...

— Հիմի ի՞նչ պիտի անենք, — հարցնում եմ:  
— Հեռագիր կտանք:  
Հեռագիր տվինք, վորպեսպի հեռ ուղարկեն, ու  
վեր կացա, սիրտս կտորած դնացի տուն: Սատիկ հող-

նած, ջարդված եյի, բայց անքն չէր կաշուած: Եռու ու մուռ եյի գալիս անկողնում ու երվում, վաւովում, թե ես ի՞նչ փորձանքի մեջ ընկա:

Առավոտը վեր կացա, տեսա մեր տղերանց: Դե հասկացողը հասկանում եր, բայց մեջները կային մի քանի խային սրտով մարդիկ, հենց են ա, ամբողջ որը մտածում եյին, թե ո՞ւմ մի լավ խայթեն: Մեկ-մեկու յետևից գալիս հարցնում եյին.

— Հը՛, Վոսկան, ի՞նչ արիք, բերի՞ր են այլնոյինը...

— Բերի, համա ամախ ջուր կտրեց. — բազաժը ցած չեն դրել:

— Ա՛յ քեզ քամբազդություն. ես նեղ մաջալին եղ եր պակաս:

Ասում եյին եսպես, մթամ ափսոսում, ցափում են, բայց հետեւից բամբասում եյին, — ո՞վ ա իմանում, — ասում եյին, — կարելի ա ապրանքը ծախել ա ու կերել...

Դե վատ խոսքն ել կաշոյ ա, մին-յերկու վոր ասում են, լավ մարդուն ել են հավատացնում: Հեռագրի պատասխանը ուշանում եր, լակ բամբասանքը որ-որի վրտ ինձ սեացնում եր:

Հենց եղ նեղ որբերին մի նոր փորձանք ավելացավ գլխիս. հիմի ել կենտրոնից յեկած ռեվոլյուցիոնի ճանկն ընկա: Մի ակնոցավոր տղա եր, կանչեց ինձ, հարց ու փորձ արավ: (Ինչպես յերևում եր, նրա ականջին արդեն փսփսացել եյին):

— Դուք ապրանք ստացել ե՞ք, հարցրեց:

— Այո, ստացել եմ:

Պատմեցի ամեն ինչ, հասկացրի հանդամանքը:

— Բայց ո՞ւր են պահեստից ստացած փաստաթղթերը:

Ա՛յ քեզ փորձանք. դե են զլավաղալի մեջ ո՞ւմ միան ա, թե ի՞նչ թուղթ են տվել ինձ և վո՞րտեղ եմ դրել: Բայց նրա ի՞նչ վեջն եր, — «փաստաթղթերը բերեք, — և ուրիշ վոչինչ»:

Յերկու որ եր, մնացել եյի կրակի մեջ, — ապրանք չկար, փաստաթուղթը չկար... դե՛. արի, բանվոր Վոսկան, սեվացիր քո բանվորական գիկտատուրայի ես հարսանիքի որբերին...

Մտածեցի, մտածեցի, վերջը վեր կացա, ուղղակի դնացի ակնոցավոր տղայի մոտ:

— Դիտե՛ք, ի՞նչ կա, ընկեր, ասացի. — հիմի դեռ խառը ժամանակ ա, շատերը չեն հասկանում իրենց դեռը, և, որինակի համար — փոխանակ ամեն մեկը իրան ճամբով դնալու: — հավաքվում են մի ճամբի վրա ու զուր տեղը իրար բոթրոտում: Մտալես ժամանակ յես դնացի եմ ապրանք բերելու գործարանի համար. յես ել եմ լավ արել, ինձ ուղարկողն ել. բայց դե ասենք որի նակի համար — դալիս են ու ինձ պատվիրում — ընկեր Վոսկան, դնա՛, ես ինչ բանը են ինչ տեղից բեր. ճանապարհին ել, ասենք թե ցեխոտ ա. ինչքան ել մաքուր չորեր ունենամ, եղ ճամբին ցեխոտվելու եմ, չե՞: Հիմի, ընկեր, բանը յեկել հասել ե եղ տեղը, — յես ցեխոտվել եմ, այսինքն մեղափորվել եմ... Դուք փաստաթուղթ եք ուզում — իրավունք ունեք, մերոնք ել ապրանք են ուղում — նրանք ել իրավունք ունեն: Հիմի վոչ ես կա, վոչ են... Որեմն, դե վոր մեղավոր եմ, տարեք բանտարկեցեք ինձ. դրանով համ իմ հարցը կվերջանա, համ ել մեր արհեստանոցի գործը չի կանգ-

նկլ.— կարող ա ինձանից հաջողակ մի մարդ գնա, բանն  
ավելի լավ դրատի...

— Ես վոր ասեցի, տղան մնաց զարմացած. մի քիչ  
յերեսիս լուս նայելուց հետո ասաց.

— Դեռ հարցը քննվում ե. հեռագիր ենք ուզանք կել  
ստուգելու համար, յերբ կսարգվի, վորոչում կկայա-  
ցնենք, ձեզ կհայտնենք...

— Ուրեմն պիտի սպասե՞մ:

— Այո, պիտի սպասեք:

Վեր կացա, վոր դուրս գնամ, մեկ եր հանկարծ նա  
ինձ կանգնեցրեց.

— Ընկեր, ասաց, — ձեր պենջակի փեշի տակից ինչ  
վոր թուղթ ե դուրս յեկել. կարող ե կորչել, վերցրեք:

Թղթերը հանեցի, մտիկ արի, բայց զլիտի չընկա,  
թե ի՞նչի մասին են: Տվի իրեն: Նայեց ու ժպտաց, յի-  
րեսը բաց արավ.

— Ես ձեր փաստաթղթերն են, ասաց:

— Վո՞նց թե եղպես...

— Հա', եղպես...

Հիմի նայում ենք իրար յերեսի ու ծիծաղում, չենք  
իմանում, ի՞նչ ասենք:

Ուրախ-ուրախ դուրս յեկա փողոց: Դե', ընկեր  
Վոսկան, — ասացի ինքս ինձ — ելի դուխդ բարձր պա-  
հիբ ու դռնաղ քայլիբ քո դիկտատուրայի հետ. — ամ-  
պերն անցնում են սարի զլիտից...

Յեվ ճիշտ վոր, հետևվյալ որը կայարանից տեղե-  
կություն ստացա, թե բազաժը ստացվել ա...

Եսպես, զլիտից ամպերն անցան, ազատվեցի շառից.  
Իսկ չարչարանք զե կար ու կար: Թե վոր նստեմ պա-  
մեմ մնացածը յաղ զիշերը բավական չի: Միայն ես կա  
սեմ, վոր յերբ մի որ տեսա գործարանի ծխի սյունը

բարձրանալիս, եզ ըոպեյին — ինչպես ծննդականը յե-  
րեսային գրկելով, մոռանում ա իր ցավերը, յես ել ա-  
մեն ինչ մոռացա ու յերջանիկ եյի...

Գործարանի բացման որը, ժողովում, ընկերներից  
մեկը վեր կացալ — թե «ես մեր սոցիալիստական չի-  
նարարության ճամբին մենք ունեցել ենք հերոսներ ե  
զեղերտիրներ. հերոսների թվին են պատկանում ես  
ինչ, են ինչ ընկերները... — ու իմ անունն լ մեջ բե-  
րեց: Յես ել ձայն խնդրեցի, ասի — ընկերներ, ինչո՞ւ  
յեք զբարբար խոսում, հերոս ու զեղերտիր անուններ  
տալիս, ավելի լավ չի՞: ասենք — մինը մի քիչ շատ ա  
աչխատել, մեկն ել յուր ա տարել իրան ուժերի հա-  
մեմտո:

Բայց զե ելի վերջը զբարբար խոսեցին, իրանցն ա-  
րին — տարան իմ անունը մի քանի ուրիշ ընկերների  
հետ կարմիր տախտակի վրա գրեցին:

— Ուզիդ եմ ասում, թե՞ չե, — հերոս, զեղերտիր,  
մարդիկ — դրանք զբարբար են, բանաստեղծների համար  
են, իսկ մեզ չեն սաղում:

— Իհարկե, ուզիդ ես ասում, — մեքենայարար պա-  
տախտանեց թամարյանը, կարմրելով, — նրան թվաց,  
թե Վոսկանը, «զեղերտիր» ասելով — իրեն անցյալին ե  
ակնարկում:

— Եզ ի՞նչու ունքերդ կիտեցիր հանկարծ:

— Մի բան հեշեցի:

— Դե պատմիր տեսնենք:

— Չարժե պատմել, ասաց թամարյանը, ու ըոպե-  
յապես տանտանվեց — պատմի՞, թե՞ չպատմի. բայց ի-  
կույն զդառով, վոր անկարող ե այդ անել, հետ դար-  
ձրեց այդ միտքը:

— Դե վոր չարժի, թող եղուցվան, իսկ հիմա քնենք...

Վոսկանը պատկեց ու քիչ անց արդեն խամփացնում էր, իսկ Թամիրյանը պառկած մտազբաղ ծխում էր: Գնացքի միալար աղմուկի մեջ նա վերհիշում էր մոտիկ անցյալը, և իր ճամբան—նույնպես դեպի գործարանը... Չե, ընկեր Վոսկանը իրեն չէր կարող ակնարկել, վո՞րտեղից կարող էր նա իմանալ այն դեպքի մասին... չե՛, ինքը, ինքը Թամիրյանն է կասկածոտ, ինքն է քշվորում հին վերքը...

## II

### ՊԱՏՄԱԿԱՆ ՄԱՄԵՆՏԸ ՅԵՎ ԹԱՄԻՐՅԱՆԻ ԶԻԿՁԱԳԸ

Նրա առաջ պատկերանում էր ընկեր Ռհանյանը,— նստած սեղանի մոտ, առջեվը դրած մի խոշոր ծրար: Նա խոսում է ինքնավստահ, հովանավորող տոնով:

— Ընկեր Թամիր, քեզ ուղարկում ենք գործարան մի քանի օրով— այս ծրարը կհանձնես կառավարչին. սրա մեջ գործարանի նախապատրաստական աշխատանքների պլաններն են, վորոնց հետ քեզ կձանոթացնի մեր քարտուղարը: Այդպես ուրեմն, սրանով մենք սկիզբ ենք դնում գործարանի վերականգնման, և ինչպես տեսնում ես, այդ նշանակալից, պատմական մոմենտը քո ձեռքով ենք սկսում...

Թեպետ Ռհանյանի վերջին խոսքերում կատակ էր հնչում, բայց Թամիրյանը թե՛վ առավ այդ առաջարկությունից — այն հանգամանքը, վոր իրեն հանձնում են այսպիսի մի կարևոր գործ, շոյում էր նրա ինքնասիրությունը:

Հետեվյալ օրը նա ճանապարհ ընկավ յերկաթուղով: Նստեց փափուկ վագոնի կուպեյում, սկզբից ըն-

դամելով լուրջ գործով ուղարկված մարդու պողա—  
ճլուխը բարձր, դեմքը խոփոռած, վոտը վոտի վրա, ու ծնկներին դրած իր փայլուն պորտֆելը: Ամեն ինչ նոր նոր էր նրա հագին— վերնազգեստը, սուսուրկան, յերկարավիզ կոշիկներն ու կեպին: Այդ բոլորի հետ նոր էր և նրա կյանքը— հաղիվ քսան տարեկան:

Կուպեյում, բացի իրենցից, յերեք հոգի կային, վորոնցից մեկը կին էր. նա նստած էր անկյունում, կախված վերարկվի մոտ: Դեմքի մի կողմը ծածկված էր ձեռքի ափով, վորի վրա հենվել էր, իսկ մյուսը— վերարկվի վեշով: Թվում էր, թե նա խորչում է կուպեյի հասարակությունից և աշխատում է իրեն անմատչելի արտահայտություն տալ: Յերկու տղամարդիկ ազրոնոմներ էլին, վորոնք շարունակ խոսում էին դյուղաանասական հարցերի, ոռոգիկների ու իրենց անդամխումների շուրջը:

Թամիրյանն այնպես էր տարված իր նշանակալից միտքայով, վոր չէր հետաքրքրվում վո՛չ ճամբորդներով, վո՛չ նրանց խոսակցությամբ: Նա հանեց պորտֆելից կայարանում գնած պատկերազարդ ժուռնալը ու սկսեց թերթել: Բայց այդ ել նա անում էր մեքենայաբար, զբաղված լինելով իր առանձին, կարեվոր մտքերով: Նա շարունակ յերեվակայում էր, թե դնում է գործարան, ներկայանում է կառավարչին, հանձնում է ծրարը, ու ասում... Բայց այստեղ նա ընկնում էր բարձր վոճի չըջանը ու իր դիմումը դարձնում մի ծաղկավոր ճառ:

Այնուհետեվ պատկերը փոխվում էր— նա «հերոսական», «ոռջինարարության տեմպով», վառում է բանվորներին... Գործը ընթանում է թռիչքներիով, ու այն, ինչ պիտի իրագործվեր մի օրում, կատարվում

ե մի ամսում... գործարանը դուրեկան սուլոցով, աշխույժ ազմուկով, աշխատանքի յե կանգնում... ու այս բոլորից հետո, նա, Թամիրյանը, ամենաբարձր տրամադրութեամբ վերադառնում է ու զեկուցում:

— Ընկեր Ոհանյան, գործարանը պատրաստ է... իմ պատմական միասխան ավարտած եմ համարում...

Բայց ահա կայարաններից մեկում ազդրոնոմները ինչ վոր հեռագիր ստացան, ու իջան դնացքից և Թամիրյանը մնաց կուպեյում մենակ կնոջ հետ:

Կինը, վոր մինչ այդ կարծես թաղնվել էր անկյունում, այժմ առաջ շարժվեց, փոքր ինչ բարձրացրեց ճակատից գլխարկը, ցուցադրելով իր նուրբ, զեղեցիկ դեմքը, վորը սաղավարտածեմ գլխարկի տակ, չըջանակված սև մագերի գանգուր ծայրերով— հիշեցնում էր հին հունական արձանները: Աչքերը սև, յերկար թերթերունքներով, փաղաքշող ու թովիչ տպավորութուն ելին անում:

Թամիրյանը հանկարծակի յեկավ կնոջից, կարծես նա նոր էր հայտնվել կուպեյում. «Ի՞նչպես է, վոր չեմ նկատել, գարմանում եր նա — սա մի հազմագյուտ զեղեցիկութուն է... այս թավիչ աչքերը ուզդակի մարդու ներս են թափանցում»:

Մի քանի րոպե յերկուսն էլ զազտագողի, շեղ հայացքով դիտում էին իրար, ստեղծելով լարված դրութուն: Թամիրյանին համակեց մի անհանգիստ, վորսորդին հատուկ զգացում, վորն առաջանում էր այդ կնոջ հետ մենակ լինելուց:

Անհարձար դրութունից ազատվելու համար նա նորից սկսեց թերթել իր ժուռնալը, հետո յել անդատակցաբար հանեց պորտֆելից իր ծրարը, ու սակ ու զլուխ դեռելով, նորից տեղը դրեց:

«Ի՞նչի՞ եմ սպասում, պետք է սկսեմ», — անցավ նրա մտքով, բայց մի դավառական ամոթխածութուն ժայռի նման առաջը կտրում էր, կասեցնում նրա կամքը, անկարելի դարձնելով նույնիսկ սովորական մի խոսակցութուն: Մի կողմից նա ասում էր ինքն իրեն — «Ի՞նչ կա վոր, սովորական է, տղամարդ ու կին — կխոսեն, կմերձենան»... բայց հենց վոր բանը հասնում էր իրադրոման, իսկույն լեզուն կապվում էր ու դեմքը շառագունում:

Նա այժմ ինքն էլ չէր գիտակցում, վոր անխորթ նայում է կնոջը, իսկ նա համառ հայացքից խուսափելու համար մերթ իջեցնում էր աչքերը իր փայլուն կաշիկների վրա, մերթ բարձրացնում, նայում կուպեյի պատին:

Վերջապես Թամիրյանը արագ, ջգային շարժումով ճխրեց ձեռքի ժուռնալը, դրեց պորտֆելի մեջ, մտքում վճռելով անպատճառ «սկսել», ինչ էլ վոր լինի: «Պրատույտներով կմոտենամ, իսկ յեթե պարզվի, վոր բերդն անմատչելի յե, նույն պատույտներով էլ հետ կհահանջեմ... այն ո՞վ էր ասում — ամոթխածութունը գորնան ձյունի պես չուտանցուկ է...»

Բայց մինչ նա մտածում էր այդպես, հանկարծ լսվեց կնոջ ջնքույշ ձայնը, վորը այդ լարված յուր թյան մեջ հնչեց լուսարացի թռչնիկի ճուլոյունի նման:

— Յեթե կարելի յե, ցած բերեք այն սակվոյածը...

Թամիրյանը իսկույն վեր թռավ, ուղեց իր ճարտիկութունը ցույց տալ, բայց վրիպեց և սակվոյածը ցած բերելիս ըսվեց կնոջ թեմքին, մեծ լավակահութուն պատճառելով իրեն:

Կինը բացեց սակվոյածը, ինչ վոր շորեղեն հանեց, ապա վերցրեց գլխարկը, բացելով իր ջնքույշ գան-

գործները: Մինչդեռ նա այդպես դրադված էր, Թամիրյանը ազահուլթյամբ կլանում էր նրա արտաքինը, հիանալով թե՛ նրա դեմքից և թե՛ շքեղ հագուստից, վորը նրա աչքում նուրբ ճաշակի հատկանիշ էր:

Վերջապես Թամիրյանը շփոթվելով հարցրեց կնոջը, թե ո՞ւր է գնում, վորտեղ է յեղև, ի՞նչ տպավորություններ է ստացել յերկրից, ու նման մի շարք շարժան հարցեր սովեց, վորոնց նշանակությունը միայն այն էր, վոր ստեղծում էր ցանկալի մերձեցումը:

Պարզվեց, վոր ամուսինը ինժեներ է, յեկել է Մոսկվայից ինչ վոր գործերով, իսկ ինքը ուղեկցել է նրան, միայն ճանապարհորդելու նպատակով, և այժմ վերադառնում է:

— Իսկ դո՞ւք, յերեվի գործուղված եք կարելով գործերո՞վ, — հարցրեց կինը, շեշտելով «կարելով» վրա:

Թամիրյանը պահանջ դրաց իրեն ցուցադրելու ամենալավ կողմերով, — նա ասաց, վոր գործուղված է արտակարգ հանձնարարությունը, վոր իրեն վճռին են սպասում մի շարք չափազանց կարեվոր գործեր, վորոնց մանրամասնությունները նա չի կարող պատմել... Նրա քաջատրուկությունից ստացվեց բարձր բառերի կուտակում, վորից իր դերը ավելի քան փրվեց:

— Ո՞ր, յես ձեզ նախանձում եմ, դուք յերջանիկ եք, վոր դրադվում եք այդպիսի լուրջ և կարեվոր գործերով: Ինձ չափազանց դրավում են այդ հարցերը...

Թամիրյանը զգացվեց այդ խոսքերից. նրան թվում էր, կինն ասում է — «յես ուրախությունը ձեզ հետ ձեռք-ձեռքի տված կաշխատեմ այդ ասպարիզում»...

— Ուրեմն ճի՞շտ, ձեզ դրավում են այդ հարցերը, դուք կուղեյի՞ք աշխատել այդ ասպարիզում:

— Ո, ամբողջ հողով... նոր կայնքի կառուցման ինդիկները միայն կարող են լցնել մարդու հողին ամենաբարձր յերջանկությունը...

— Հազա ինչո՞ւ չեք դնում այդ ուղիով. ի՞նչն է ձեզ խանդարում...

— Ծառ բան, — ասաց կինը թեթեվ հատաչելով — կյանքը շատ արդեւքներ է դնում մեր ստաջ...

— Կարելի է՞ հետաքրքրվել, թե ի՞նչ արդեւքներ են:

— Ե՛ր, դա շատ հեռու կտաներ... վերջապես ինչ հետաքրքրություն կարող է հարուցել մի կնոջ անհատական կյանքը այս խոշոր հարցերի շրջանակում...

— Ինչո՞ւ չե, ընդհակառակը... չե՞ վոր անհատականը բղխում է հասարակականից...

Կինը ժպտաց համեստ, իսկ Թամիրյանն ավելի խորացավ իր զգացումների մեջ. — նա այժմ իրեն տեսնում էր կնոջ աղատադրողի դերում, մի կնոջ, վորին նա կարող է «սիրել», և վորը «կաշխանդված է հին կենցաղի շղթաներով»

— Ինձ մեծ ուրախություն են պատճառում ձեր ձգտումները. յեթե դուք ինձ հետ գործելիս լինեյիք, յես ինձ չափազանց յերջանիկ կզգայի:

— Դուք յերեվի կատակ եք անում...

— Ո՞ր, վորչ. յես առաջին անգամ եմ պատահում ձեզ նման մի կնոջ. ձեր մեջ կա մի արտակարգ դրավչություն:

— Սխալվում եք, յես մի սովորական կին եմ... վերջապես միթե՞ կարելի յե դրավվել թեկուզ դեղեցիկ կնոջով. դրավվել կարելի յե միայն լուրջ գործերով...

Յեվ նա հայացքը հատեց Թամիրյանի պորտֆելի

րա: Թամիրյանը չհասկացավ այդ հայացքի նշանա-  
կութիւնը:

— Դուք ինձ չափազանց դուր եք դալիս. յես կու-  
նայի ավելի մոտ լինել ձեզ...

Ու կարծես ապացուցելու համար իր այդ ցանկու-  
թեանը, նա տեղափոխվեց դիմացի նստարանը ու նըս-  
տեց կնոջ կողքին:

— Հա՛... հա՛... — սկսեց ծիծաղել կինը. դուք  
ուսուր ընտանի բաներ եք ստում. մի՞թե ձեր լուրջ դոր-  
ծե մեջ կարելի բան է...

— Լուրջ գործերի ալ սնուում — ինչո՞ւ չէ:

— Լուրջ գործերի արանքում կարող են սմտանա-  
ներ դոյանալ...

Յես ստամաններից չեմ վախենում՝ մանուկանդ  
յնթե ձեզ հետ եմ լինում. բայց ինչպէ յերևում է, դուք  
յն խոսքերին չեք հավատում:

Ի՞նչպէս հավատում, քանի վոր մի յերկու ժամ ա-  
ռաջ այնքան ելիք ասարկել ձեր պորտֆելով, վոր նույն-  
խի չեյիք նկատում ձեզ մոտ նստողներին:

— Բայց չե՞ վոր դուք ել թաղնիկել էյիք անկյու-  
նում...

— Ուրեմն դուք ինձ նկատե՞լ եք:

— Մասամբ, վորովհետեւ ձեր գեմքը ծածկ-  
ված եք:

Ուրեմն ձեր համակրութիւնը ծագեց մի կես  
ժամում...

— Դուք չար լեզու ունեք, ձեզ կարելի չէ լռեցնել  
մ'այն համբույրներով:

— Այդ ե՞լ է մտնում ձեր գործուղման մեջ:

— Վրջ, դա ծրագրից դուրս է...

— Ուրեմն և լրջութեանից դուրս է, դուք սրտ-  
բաստվում եք կատարկերգութիւն խաղալու:

— Ինչ անուն ուզում եք ավելք, մեր խաղին, միայն  
թե նա փոխադարձ լինի...

— Փախադա՞րձ... յերկասյրի տոնով ասաց կինը,  
կիողելով աչքերը, — դուք բավականին համարձակ եք  
յեղել...

\*\*\*

Ուշացած, ջղային, գնացք եր, — շտապում եր ու-  
կայարաններում կանգնելու ժամանակամիջոցից զոդա-  
նում: Թամիրյանը տարված եր զգացմունքներով, մոռա-  
ցել եր, վորտեղ է ինքը, և ո՞ւր է գնում նա կողքեր իր  
իջնելու տեղը հետո՞ւ — հետու լիներ: Ամեն տնգամ, յերբ  
գնացքը կանգ եր առնում, կինը կրկնապատկում եր իր  
փաղաքշանքը, վորպեսզի հաներ նրա մարկի իջնելու  
ցանկութիւնը: Մի անգամ միայն Թամիրյանը դուրս  
նայեյ պատուհանից, բայց միջնում չկարողանալով գա-  
նազանել, թե վո՞ր կայարանն է, ասաց ինքն իրեն, —  
«համենայն դեպս սա իմ կայարանը չէ»...

Բայց ահա գնացքը աղմուկով մոտեցավ մեծ լու-  
սավոր կայարանին: Վազոնի կորիզորով յերկու մարդ  
անցան բարձր խոսելով, ու Թամիրյանի ակունջին հա-  
տով կայարանի անունը...

Նա հանկարծ ցնցվեց, վեր թռավ տեղից ու չլմած  
դուրս ընկավ վազոնից, ատես հրդեհից եր փախչում:

Նա իջավ ներքել ու մնաց չլմած — այո՛, ձիջա  
եք — նա իր կայարանից յերկու կայարան ել ստաջ եր  
անցել...

Կարծես կայարանը միջնեց աչքերին — ամեն ինչ  
թվում եր ավելորդ, անմիտ ու զուգուղ: Ու հանկարծ

մեջը բռնկվեց մի ատելություն զեպի այն կինը, վորի քնքույշ, դյուխող արտաքինի տակ նա այժմ տեսնում էր մի «դիվային» սիրտ...

Այս դրության մեջ նրա համար ամենադժվարն այն էր, վոր սլիաի բարձրանար վազոն, տեսներ այդ կնոջը, ու ինքնատիրությունը ճմլելով, հրաժեշտի ձեռք տար նրան:

— Ի՞նչ է պատահել, ինչո՞ւ էք այդպես հուզված, — հարցրեց կինը կարեկցարար, յերր Թամիրյանը ներ մտավ կուպեն:

Վոչինչ, իմ կայարանն անցել եմ, — պատասխանեց Թամիրյանը, հազիվ դսպելով իր գոգոտմբ:

— Ա՛հ, ի՞նչ ցավալի յե, — վշտացած տոնով սասց կինը:

Թամիրյանին կեղծ թվացին այդ խոսքերը, և չկամենալով վորեւ խիստ արտահայտությամբ խախտել իր քողարկված հանգստությունը, նա հանկարծ ձեռք մեկնեց.

— Գնաք բարով...

— Մնաք բարեւ... նամակ կգրեք այն հասցեով...

Շտապ քայլերով դուրս գալով վազոնից, Թամիրյանն անցավ գնացքի ուղղությամբ, բայց հազիվ մի տասր քայլ արած — հեռ դարձավ, ինքն եւ չիմանալով թե ի՞նչու: Յերբ մոտեցավ իր կուպեին, հանկարծ կանգ առավ, յսելով պատուհանի թխկթխկոցը: Կինը ձեռքով կանչելու նշաններ եր անում ու խուլ ձայնով կրկնում.

— ձեր պորտֆելը... ձեր պորտֆելը մոռացել էք...

Վերադարձնելու սուր խայթը ցնցեց Թամիրյանին, — կինը ժպտում էր...

Այդ բացվեց պատուհանը ու պորտֆելը իջավ Թամիրյանի ձեռքերին:

— Հուսով եմ, վոր չեք մոռանալ ինձ... մնաք բարեւ...

— Գնաք բարով...

Գնացքը շարժվեց:

\*\*\*

Արդեն լուսանում էր. այդտանում ելին կայարանի լույսերը, և բացվում շրջապատի տեսարանները: Մոտակա գյուղից լսվում էր աքաղաղի կանչը. թեթեւ, հազիվ նկատելի շարժվում էր ողջ, բերելով իր հեռ բնության խորքերից թարմ բուրբուռները:

Թամիրյանը քայլում էր հեռ ու առաջ, տարուբերվելով արեկոծ մտքերով, ու խոցող բառերով կտամբում ինքն իրեն. — «վերջ ի վերջո դու ի՞նչ ես — մի ահա սղա, վոր կանացի աչքերի համար խախտեցիր «պատմական մոմենտի ընթացքը»... ո՛վ զեղբերտիր, զեղբերտիր...»

Այսպես յերկար կռվում էր ինքն իր հետ. ու թափառում կայարանի շուրջը մինչեւ վոր հողմեց ու ներս մտավ հեռադրատան սենյակը: Այստեղ խնայով, վոր մարդաստար գնացքը շատ ուշ և գալու, բայց ապրանքատարը կլինի յերկու ժամից հետո:

Այդ յերկու ժամը Թամիրյանին թվում էլին անասելի յերկար. նա յերեք անգամ ներս գնաց բուֆետը անտարբեր ու անախորժակ թեյ խմեց, ինչ վոր բան կերավ, աշխատելով յերկար նստել այնտեղ, բայց յերբ դուրս էր գալիս, նայում ժամացույցին, նկատում էր, վոր դեռ շատ քիչ է անցել:

Վերջապես յերեվաց գնացքը, կանգնեց միի ժամի շափ ու շարժվեց, շարունակելով իր դանդաղ ընթացքը: Մի յերկար գնացք էր, մի յերկար սրտամաշ ձոնձ-

բույժ—անհամբերութիւնից պայժող Թամիրյանը համար:

Առաջին կայարանում զնացքը նորից յերկար կանգ առավ: Աննաբառակ անց ու դարձ անելուց հետո նա նստեց կայարանի միակ նստարանի վրա ու մատիտը հանելով, արձանագրեց պատին իր խոսքը գաժու-թյունները.—

«Լստած այս հորանջող կայարանում, ճանճուր-թից փշայնում եմ պատերը... նա, ով կորցնում է պատմական մոմենտը, արդյոք նման չե՞ մի դատարկ կայարանի... անա յեկավ «Իմ զնացքը», կանգ առավ «Իմ կայարանի» առաջ, բայց յես թմրած մտքով թողի ու անցա...»

Յերբ Թամիրյանը իր համբերութիւնը սպտտելով վերջնապես հասավ «իր կայարանը», նա զգաց մի արտակարգ թեթեւութիւն, կարծես բանտից եր ազատվում:

«Այստեղ վերջանում է իմ «զիզողագը»,—ասաց նա մտքում, ու ամուր քայլերով զնաց զիպի գործարանի գրասենյակը:

Արդեն ուշ եր, ժամը յերջից անց, գրասենյակում մարդ չկար: Նա դուրս յեկավ փողոց, վճռելով ինչ էլ լինի—հենց այս բոպէյին տեսնել կառավարիչին:

— Վո՞րտեղ է կառավարիչի տունը,—հարեց նա առաջին պատահած մարդուն, վորն ըստ յերեկուց թին բնիկն էր:

— Ա՛յ ես ճամբի վրա ա, աջ կողմը, ներողութիւն, ընկեր դուք կենարտից ե՞ք:

— Այո:

— Եղ ի՞նչ գործով եք յեկել, մենք, բանվորներս հերաքրքրվում ենք...

— Գործարանի հարցերով եմ յեկել. վորոչիւմ է սկսել նախապատրաստական աշխատանքները:

— Եղ ի՞նչ լավ բան ասացիք... բայց եղ հարցե-րով դուք եք զնում կառավարչի մոտ.—նա կխա-նգարի...

— Վոնց թե կխանդարի:

— Դե նա ետպես մարդ ա, վոր յեթե իրեն կամ-բին թողնես,—ամեն ինչ կկողպի ու ինքն էլ պահապան կնստի:

— Ուրեմն ձեր կարծիքով իմ գնալն ավելորդ ա՞:

— Իմ ստելս են ա, վոր նա անպատճառ կմերժի. թե վոր առանց նրա չեք կարող դարձ տեսնել, յես ձեզ ուզում եմ զգուշացնել, վոր իմանաք, թե նա ինչ սո-վորութիւն ունի. ձեր դիժն առաջ տանելու համար պետք ա ծապես անեք. որինակի համար,—յերբ վոր նա կասի—թե դո՛ւր ե, անկարելի է վերսկսել աշխատան-քը, դուք պետք է պահանջեք, վոր նա իր կարծիքը զրաւոր սա.—հենց վոր գրտվորի անունը լսի—ձեռաց կիպիչի իր ասածից:

Թամիրյանը ժպտաց.

— Ուրեմն ետ մարդուն շտիելու հնար էլ կա:

— Եղ ե հնարը, թե վոր հաջողվեց:

— Ձեր անունն ի՞նչ է, ընկեր:

— Վոսկան է. ա՛յ են դեղին տանն եմ ապրում.

— Լավ, յես հետո կտեսնվեմ ձեզ հետ, առայժմ ցտեսութիւն:

— Յը՛:

Յերբ Թամիրյանը ներս մտավ կառավարիչի ա-սանձնասենյակը, ու տեսաւ նրան, նա զգաց, վոր վո՛չ միայն չի կարող նրա առաջ «բարձր վճռով» խոսել, այլ նույն իսկ դժվար է խոսք բացել նրա հետ:

— Բարեկ ձեզ, ասաց Թամիրյանը մոտենալով .

— Բարեկ, — պատասխանեց կառավարիչը, իբր կոչո կասկածոտ դեմքը հատելով Թամիրյանի վրա : Նրա բորբոքված աչքերը այնպիսի արտահայտութիւն ունեցին, կարծես սպասում ելին մի խոսքի, վոր կռիւն սկսեն :

— Յես յեկել եմ ընկեր Ռհանյանի հանձնարարութեամբ :

— Ի՞նչ գործով :

— Այս ծրարը պիտի հանձնեմ ձեզ . — սրա մեջ գործարանի նախապատրաստական աշխատանքներն . . .

— Ի՞նչ աշխատանք, ի՞նչ բան, — խոսքը կտրեց կառավարիչը . — եղ բոլորը զուր խոսքեր են :

— Ի՞նչպէս թե .

— Միանգամից իմացեք — ես գործարանը չի կարող վերականգնել . են մասն ել վոր աշխատում ե, պիտի դադարի . . .

— Բայց չե, վոր դուք մասնակցել եք խորհրդակցութեան :

— Ի՞նչ ե, վոր մասնակցել եմ . յես իմ կարծիքը հայտնել եմ :

— Ինձ հանձնարարված ե . . . դուք պիտի իրադործեք կենտրոնի փորձումը . . . — ասաց Թամիրյանը շփոթվելով :

— Ի՞նչ եք ասում, — վեր թուով տեղից կառավարիչը . — յես մասնագետ եմ, չե՞, մի բան գիտեմ, չե՞ . . . չատ ել ինձ ասեն, թե ես թղթերով սարերը շարժի, յես կարող եմ . . .

— Բայց կան ուրիշ մասնագետներ — ուրիշ կարծիքներով . . .

— Նրանք մասնագետներ չեն, նրանք ճառասողներ են, ես ինչ վոր դրել են, սխալ . . .

— Բայց դուք դուք եք սխալվում :

— Ի՞նչպէս թե յես եմ սխալվում, — ձայնը բարձրացրեց կառավարիչը . — դուք գիտե՞ք, ի՞նչ գործեր եմ արել . . . դուք հասկանում ե՞ք, սա մասնագիտութիւնն է, սա Ֆելլետոնն չի . . . մի խոսքով իմացեք . — զուր ե, խոսելն ել, գրելն ել . ես թղթարանութեամբ չի կարելի վերականգնել գործարանը . . .

« Ժամանակ ե սկսելու . — անցավ Թամիրյանի մտքով :

— Երեմն, յեթե ձեր կարծիքն այդ ե, — ասաց նա — կինդրեցի, վոր դուք գրավոր տաք ձեր կարծիքը, — ընկեր Ռհանյանին հանձնելու համար :

— Ի՞նչ գրավոր . . . ի՞նչ կարիք կա, ուղղակի հայտնեցեք իմ կարծիքը :

— Վոչ, յես չեմ կարող . ինձ հրահանգված ե նույն խնկ մի քանի որ մնայ ե մասնակցել աշխատանքներին : Յես առանց ձեր գրավոր պատասխանին չեմ կարող վերադառնալ :

— Յեղրայր, սա ի՞նչ բան ե, ձեռքերը շարժելով, վրա տվեց կառավարիչը . — սա մասնագիտութիւնն է, թե թղթարանութիւն . . . վաղը առտփոտ յեկեք գրահանյակ, տեսներք ի՞նչ ենք անում . . .

\*\*\*

Յերեք գր անընդհատ մասնակցելով նախապատրաստական ժողովներին, Թամիրյանը մի խումբ բանվորներին հա գնում եր կայսրան . — նա վերադառնում եր իր հանձնարարութիւնը վերջացնելուց հետո : Մեջը զգում եր մի դուրեկան հոգնածութիւն, վորն առաջանում եր իր պարտականութիւնների հաջող կատարե-

լուց, կամ ինչպես ինքն եր ասում մտքում—«սրամու-  
կան մոմենտին անշեղ հետեւելուց»:

Յերբ հրաժեշտի բոպեն մոտեցավ, Թամիրյանը  
դիմեց բանվորներին.

— Ընկերներ, յես գնում եմ, բայց խոսք եմ տա-  
լիս միշտ կապված մնալ այս գործարանի հետ: Ան-  
շեղ կամքով, անշեղ ճամբով խոստանում եմ տանել  
ձեզ հետ վերահառուցման մեծ աշխատանքը, ու չեմ  
հանդատանալ, մինչեւ չտեսնեմ փառավոր պատմական  
մոմենտը—գործարանի ծխի բարձրանալը...

— Գնաք բարեւ... գնաք բարեւ... — վրա տվին  
բանվորները, — շուտ-շուտ յեկեք... մենք ել միշտ ձեզ  
հետ կլինենք...

— Դե, ընկեր Վոսկան, մնաք բարեւ. նամակ  
կգրեք... ասաց Թամիրյանն ու բարձրացավ վագոնը:

Ահա այս ընկեր Վոսկանն եր այժմ պառկած իր  
դիմաց...



Սկսվում է, աչնան թարմ, առավոտ: Նոր ծաղած  
արևի շաղերը արդեն փայլում են լեռների գագաթնե-  
րին, իսկ ներքեվում սփռվել է մշուշանման կապույտը:  
Գնացքը կանգնած է կայարանում: Ընկեր Վոսկանն ու  
Թամիրյանը, — յերկու հարվածայինները— իջնում են  
խիտ ամբոխի մեջ, ժխորի ու Ինտերնացիոնալի որկեսու-  
րային ձայների մեջ: Տեղական կոմյերիտներն ու բան-  
վորները ճանապարհ էյին դնում եկտուբրայի յեկած  
կոմյերիտներին:

Ինտերնացիոնալի հուժկու հնչյունները սովոր թե-

լերով մտնում էյին ջղերի մեջ, ու թեկավորում,  
միացնում բալորին: Թամիրյանին թվում եր—մի ինչ  
վոր լայն, հաղթական յերթ գալիս է, ընդդրկում ա-  
մենքին իր հոսանքի մեջ, ու տանում ձուլվում շարքե-  
րով, վորից յերբե՛ք յերբե՛ք նա չի չեղվելու...

Իսկ հեռվում, լուրջ ու մտախոհ, թանձր ջուլա-  
ներով ծխում եր գործարանը...

## ԼՈՒՅՍԵՐԸ

Ամեն յերեկո, յերբ խափարը սեղ ջուլաներով սփռվում է ձորում, հիդրոկայանի բանվորական շենքերի մոտ պայծառ ու զվարթ շարվում են լույսերը: Շարվում են երեքտրական լույսերը ու ժպտում ուրախ ցուլներով ասես կանչում են նայողներին զեպի ժամանակայնոր շենքերը. ուր մինչ ընկը լսվում է բանվորների խոսք ու զրույցը, ծիծաղն ու յերաժշտությունը:

Բայց ահա հետզհետե մարում են ձայները բանվորական տներում, ու համատարած լուսթյան մեջ սկսում է իշխել դեռի վշտը, կարծես զիշերները, սղավելով խափարից, գետը թաքուն փարարում է:

Յերբեմն այդ միալար համերգը խանդարում է յերկաթուղի շոգեկառքի անհանդիստ սուլոցը, վորը կրկնվում է ձորում արձագանքելով ու հետզհետե հանդչում: Յերբմն էլ մի մոլոր քամու կտոր է զալիս ձորն ի վեր, թեթեվ սուլում է ու պատեպատ ընկած ճամբա յե փնտում իր համար:

Իսկ ձորի յեզրերին, հանդիպակ ժայռերի վրա ձգվում են, պառկում հսկա սուվերները, նայում շարաչուք աչքերով ներքեվի լույսերին ու մեղամաղձ հոգով ալանջ դնում դեռի հի՛ն, հի՛ն, վշտոցին:

Գիշերվա այս հանգստյան ժամերին տոններն են անընդհատ յեռում է աշխատանքը: Այնտեղ, լեռան

ներսը, ինչ վոր խորհրդավոր մարդիկ, իրենց լարված միանները միացրած մեքենային, համառորեն պատռում են ժայռի կուրծքը, ուզի յեն բանում ջրի համար:

Գիշերվա այս ժամերին ձորայանջի կածաններով լույսեր են շարվում, յերբեմն խումբ-խումբ յերբեմն, դաս-դաս: Տոննելի բանվորներն են դրանք, վոր վերջացրած իրենց հերթը, վերադառնում են մոտակա դուղերը հանգստանալու: Նրանք բոլորը լապտերներ ունեն ձեռներին—վտանգավոր նեղ կածանները լուսավորելու համար: Խորհրդավոր են թափառող այդ լույսերը, նրանք մերթ ծածկվում են ժայռերի հետեվում, մերթ նորից հայտնվում: Ու թվում է հեռվից, թե մարդիկ չեն շարվողները, այլ լույսերն իրենք են թռվում հսկա լուսատուիկների նման— սծապտույտ կածանների վրայով:

\*\*\*

Այս դիշեր Ակորն էլ լապտերը ձեռքին բարձրանում է ձորամտի կածանով: Նա մենակ է. ինչ վոր գործով ուչացել է հետ մնացել ընկերներից:

Ծանր է ճամբան,—խորդ ու բորդ, դատիվայր: Ակորի վտանները դիպչում են թափված քարերին, ընկնում են ջրի ու ցիխի մեջ, դեմ ընկնում դիք յեմնող ժայռին:

Ծանր է վերելքը, բայց նա սովոր է, չի նկատում՝ Նա քայլում է, մտածում որվա դեպքերի շուրջը, ու այս ու այն թվի, ժայռի նշանով սովոր աչքերով չափում է մնացած տարածությունը: Յերբեմն նա կանգ է առնում շունչը հետ բերում, նայում ներքեվի լույսերին: Ու միշտ այդ ըրպեններին մի արտասովոր ուրա-

խությունն և դալիս Ակորի մեջ, կարծես մի նոր, խանդավառ աշխարհ և աշխտեղ, ուր ընկնողը մտանում երկր անձնականն ու առորյան:

Բազմից և յեկել Ակորը, յեկել և աշխարհի բուն յետանդով, ասես մի յերկու որում ուզում է վերջացնել ամբողջ հիշրոկայանը: Տոնեկի աշխատանքից հետո հանդատյան ժամերին ել նա հանգիստ չի նստում— դյուզում կոլիտղին և լծվում ու իր չափ ընկած թափով վարակում շարժում բոլորին:

Կանգնում և Ակորը ճամբին շունչ առնում, նայում ներքեվի լուսաշխարհին. մտածում և, ահա կանցնի մի յերկու տարի, հիշրոկայանը, կյանք կտա նոր գործարաններին, իսկ աշխտեղ, ձորի լանջին, ժայռի վրա կբարձրանա Լենինի հսկա արձանը, ու լույսերով վողողված աչքերը կբարձնի դեպի հեռուները...

Այս աշխատանակ Ակորը, նայելով այդ բոլորին, կղբա, վար ծանր աշխատանքի սրերից միայն մի մեծ, քաղցր հիշողություն և մնացել մեջը...

Յերբ Ակորը մոտեցավ աղբյուրի ժայռին, հանկարծ ինչ վոր շփոթոց ընկավ ականջը,—կարծես մեկը կածանի մի կողմից մյուսն անցավ. հետևից շարժելով մանր քարերը: Նա կանգ առավ ականջ դրեց: Լուսեր չորս կողմը. հեռից լսվում եր միայն գետի վշտոցը:

«Գուցե գայլ եր, կամ թափառական շուն», անցավ նրա մտքով. բայց իսկույն նրան ցնցեց մի ուրիշ յենթադրություն.—«Իսկ յեթե թշնամիներից, դյուղի կուլակներից եր... չե՞ վոր ամենոր նրանք սպանում են կոլիտղի սլառատով»...

Նա շարժվեց առաջ դանդաղ, դուրս քայլերով: Արդեն մտածում եր, թե ի՞նչպես պիտի անդեն պաշա-

պանվի հարձակման դեպքում.—դուցի հանդցնի լուստերը ու փոխի ճամբան...

Բայց մինչ այդ անելը հանկարծ յետևից,—կազրախից դուրս թափվեցին յերկու հողի ու հարձակվեցին նրա վրա: Պայման էլին դրել—լուս մնալ վոր չճանաչվեն բայց մեկը նրանցից չհամբերեց, կատալած ձայն տվեց:

— Ա՛յ յես քու յեկած ճամբեն...

Մի ակնթարթում Ակորը յես դարձավ, նկատեց խանչալի վայրը, նույն վայրկյանին մյուս հարձակվողը փայտի հարվածով կտարեց, փչրեց նրա լապտերը: Ասկալից կռվը մթության մեջ: Չնայած տեղացող հարվածներին, Ակորը վրա ընկավ ձեռքերն արյունոտելով. բռնեց մեկի խանչալից, ու ճգնում և խել նրա ձեռքից, բայց այդ ժամանակ մյուս ընկերը մեկ մեկու վրա խլրալով եր յետևից խանչալի բերանով, վախենալով ծայր խրել մարմնի մեջ, վոր սպանությունը իր վրա չընկնի: Յեր Ակորը մի ուժեղ հարվածով գլորեց գետին իր դիմացինին, իսկույն յերեսը դարձրեց դեպի մյուս ախոյանը, բայց վերջինս, նկատելով իր ընկերոջ անկումը, թողեց ու փախավ: Ակորը նորից դիմեց դեպի առաջին հարձակվողը, բայց սա ել անհետացել եր:

Նա մի փոքր առաջ անցավ, ականջը ձայնի պահած կանգ առավ մի քանի րոպե, վոր թվաց մի յերկուր ժամ, բայց ձայն—ծպտուն չկար: Վերջապես համոզվելով, վոր վտանգ չկա, նա շարունակեց իր ճամբեն: Հանկարծ վտռել տակը դրնդացին ապակու կտորներ: Նա խորը թախծով կանգնեց իր կոտորած լապտերի մոտ, ասես հրաժեշտ եր տալիս մեռած ընկերոջ, ու վերցնելով լապտերի յերկաթե կմախքը, առաջ անցավ:

Հաղիվ մի քանի քայլ արած, նա դպաց, վոր

բյունահասարակութիւնն ուժեղանում է: Վերքերը մոժմտում ենին. արյունը ծծւում, սառչում էր շապիկի մեջ: Նըստեղ մի քարի վրա, հանեց շորերը ու պատառոտելով շապիկը, մի կերպ կապկպեց վերքերը: Յերբ վեր կացավ տեղից, դուրսը պատմում էր, թուլացած մարմինը հրաժարվում էր շարժվելուց: Սարխափելով մթնում, շարունակ դեմ ընկնելով, քարերին թիկերին նա յերկար շարձարանքից հետո ուժասպառ տուն հասավ:

\*\*\*

Մի փոքրիկ, դուռդակա՞ն տուն էր Ակոբի կացարանը. — առջևը սրահ, ներսը յերկու սենյակ—Մխոտած առաստաղով: Մի սենյակը լուսավորված էր հասարակ լամպի պղտոր, աղոտ լույսով:

Ակոբը թիկացրեց դուռը: Ներսից մեկը շտապով մոտեցավ ու բացեց:

— Ես ընչի՞ ուշացար, Ակոբ.

— Գործ ունեյի, յեղացա. — ասաց Ակոբը նստաճախով:

Մարգոն էր, իր նշանածը: Նա առաջ ընկավ, վառեց լամպը Ակոբի սենյակում:

Հանկարծ լույսի մեջ նկատելով Ակոբի սփրթնած դեմքը, արյունոտ, կապկպած ձեռքերը, Մարգոն մնաց սարսափած:

— Ինչ է՞ պատահել Ակոբ հարցրեց նա շնչասպառ, հազիվ կարողանալով արտասանել խոսքերը:

— Վոչինչ, մի քիչ հոգնած եմ:

— Չե, Ակոբ, մի ծածկիլ, ասաց Մարգոն լացակումած դողողջուն ձայնով:

Ակոբը նայեց Մարգոյի դեմքին ու զգաց, վոր այդ սիրող, թափանցող հայացքից չի կարող ծածկիլ յեղելույնը:

— Մի վախիլ, Մարգո... ճամբին թեթե վեր ընկա...

Մարգոն սկսեց հեկեկալ ու ընկավ Ակոբի կրծքին:

— Մարգո, ասում եմ մի վախիլ, եզուց ելի գործի կզնամ:

Բայց Մարգոն շարունակում էր չը լացը:

Աղմուկի հետ զարթնեց մյուս սենյակում Մարգոյի մայրը, նա ներս յեկավ, ու տեսնելով յերկուսին դրկախառնված, — ուզեց ասել «աղչի, բա ամոթ չի՞»... բայց սիրտ շարավ ու միայն ասաց.

— Մարգո, դնա քնի, յես մտիկ կանեմ Ակոբին:

— Ել ի՞նչ քնեմ, մի տես ե, Ակոբն արյունլվա տելել...

— Վա՛յ, աղչի, ի՞նչ ես ասում...

— Վոչինչ, մայրիկ, ուշ մի դարձնի, բան չկա — հանդատացնում էր Ակոբը:

Մայրը մոտեցավ Ակոբին, անտղեց վիրավոր տեղերը, ու ծնկները վերհաստելով, մնաց չչկլած: Հետո հիշելով, վոր մի բան պիտի անել, դնաց շտապով խարխափելով դես դեն դիպչելով կրակ վառեց, ջուր դրեց, — վերքերը լվանալու համար: Այդ զարթնեցրեց իր տղային, — Մարգոյի փոքր յեղբորը, ու մի մեծ մահակ տալով ձեռքը — շնորհից պաշտպանվելու համար, ուղարկեց բուժակի հետեկց:

Մինչդեռ մայրը չվարած, ուշքը կորցրած, փրսփոռում էր կրակի շուրջը, ստեպ-ստեպ ինքն իրեն խոսելով, Մարգոն ձգեց թախտի վրա Ակոբի անկողինը, հետո նստեց կողքին ու քնքչորեն շոյում էր նրա ձեռները ու նայում աչքերին:

Մարգոյի յեղբայրը ներս մտավ, դուռը չրկակալին բացեց ու քիթը թեքով սրբելով հայտնեց, վոր բուժա-

կը տանը չի, — նրան վռաղ կանչել են հարևան գյուղը:

Մարգոյի սերտը ճմլվեց այս լուրից: Դժբախտ պատահարից ճնշված, նա մի նոր աղետ եր համարում էր զուգադիպումը: Նա ոգևեց մտքը, լվացավ տաք ջրով Ակոփի վերքերը, կապեց մաքուր փալաններով ու պակասացրեց անկողնում, չկարողանալով դապել իր արջունքները:

Նա շարունակ նրտովում եր Ակոփի չուրջը, — մեկ վերմակն եր ուղղում, մեկ բարձը. նայում եր աչքերին, սկանջ դնում շնչառությանը: Ակոփը պակաս էր կիրառելուն. նա կսկծում եր վերքերի ցավից, ու խոփոտած դեմքի վրա արտահայտում մի գապված դայրույթ. խիտ, սև հոնքերը մոտեցել էին իրար, կնճուկ ճատորը. Յերբեմն նա ցնցվում եր, բուռնընները սղմում, ստամոքսը կրճատացնում և բացելով աչքերը, դարմացած նայում մտքը նստած Մարգոյին: Նայում եր ու հանդուսանում մղձավանջից: Ու մի բերկրանք եր դալիս մեջը, այդ մոտ ընկերոջ, այդ սիրոց սրտի հոգացողությունից ու փայտիայանքից: Այդ բուսկներին նա մուսանում եր իր ցավերը ու ժպտում Մարգոյին:

Յերբ Ակոփը յերկրորդ անգամ դարթնեց, Մարգոն խոնարհվեց նրա դեմքի վրա:

— Ակոփ, ուղիղն ասա, ո՞վ եր քեզ խիողը... դու տոում ես— վեր ընկար... եղպես չի յերևում...

— Մարգո, քեզանից ի՞նչ թագցնեմ— ինձ վրա հարձակվեցին յերկու հոգի:

— Ի՞նչ ո՞վքեր էին:

— Մթնում չիմացա, յերեսները բաշուղտով ծածկել էին, մենակ աչքերը բաց թողել. միայն մեկի ձենը Մարգոյնց Միկիչին նման տվեց: Ասենք դե ո՞վքեր պակաս է լինելին— մեր գյուղի կուլակները, մեր կոլ-

խողի թշնամիները... բայց վուչինչ, յես նրանց հախիցը լավ կգամ...

— Ձե, Ակոփ, եդ ավաղակների հետ գլուխ մի դնիլ, կտան— կապանեն:

— Յես նրանց դեմ սուր ու հրացանով չեմ դուրս դալ. ուրիշ զենքով կկուլեմ, նրանց աչքի փուշը մեր կոխողն ա. յես ել հենց դրան զոռ կտամ. դա նրանց ավելի կսպանի:

— Յես ել քեզ կողնեմ, Ակոփ, սիրտդ լավ պահիր: Ակոփը ժպտում է ինքնազոհ. նրան մեծ ուրախություն էլին պատճառում Մարգոյի ակտիվության այդ առաջին թոթովանքները:

— Ես ա քեզ ել եմ լծելու կոլխողին, տեսնենք վո՞նց ես աշխատում:

Մարգոն լսում եր նրա խոսքերը, ուրախանում, վոր Ակոփի ուշքը վրան է, վոր դրությունը շատ ծանր չի, ու թաց աչքերով ժպտում եր նրա ժպտի դիմաց, զգալով հոգեկան մի ջերմություն իր սիրած մարդուց, վորի հետ պիտի մի յերկու ամսից հետո ամուսնանար:

Նա յերեակայում եր դուրեկան ինքնաբավականությամբ, թե ի՞նչպես Ակոփի հետ գործի կմտնի, ինչպես դուրս կգա կիրոսի ժողովներում, ի՞նչ յեռանդով կբարոյի գյուղի կանանց մեջ...

\*\*\*

Ակոփը քնած եր անհանդիստ. հաճախ չիոթվում եր. դեն ձգում վերմակը, ինչ վոր անկապ բառեր ասում: Մարգոն շարունակ նստած եր նրա գլխավերեք. սրտի մորմոքով նա լսում եր Ակոփի զառանցանքը ու մոռյլ

մտքերի մեջ ընկնում . նրա ծանրանալու հետ ինքն ճլ եր  
ծանրանում :

Ակոփն այրվում եր տենդից : Նրան թվում եր, թե  
մահճակալի տակից վառում են իրեն, հետո իրը վառ-  
վում ե տունը, ու ինքը դուրս թռչում ընկնում դաշտե-  
րը, սարերը . . . Անցնում ե կանաչներով, սառնորակ աղ-  
բյուրների մոտով, բայց հենց մոտենում ե վոր խմի,  
ծարավը հագեցնի, ինչ վոր զինված մարդիկ հարձակ-  
վում են ու չեն թողնում . . .

Նա առաջ ե գնում, հասնում ե ձորակին : Նայում ե  
ձորին ու դարձանում . — Գիմացը բարձրացել ե մի հըս-  
կա արձան : Արձան ե կարծես, բայց մի յեփնույն ժամա-  
նակ ե կենդանի մարդ, — Լենինն ե իր առաջ, լույսով  
վողողված : Նա խորաթափանց աչք ե անձում չորս  
կողմը :

— Ընկերներ՛ր . . .

Չայնն արձագանքում ե ձորում, անցնում ե հետո՛ւ  
հետո՛ւ ու հասնում հազարավոր ընկերներին : Ակոփը  
տեսնում ե, — ահա ձորում շարվեցին հիդրոէլեկտրի  
բանվորները, — լապտերները ձեռներին . ահա ե ձորա-  
մախի կածանների յերկայնքով ձգվեցին լույսի ժապա-  
վենները : Ուր ել նայում եր Ակոփը, վորքան աչքը կըտ-  
րում ե, — նույնիսկ աննշան շավիղների վրա յերեվում  
ե յին լապտերները ու շարան- շարան գալիս յին դեպի  
լուսաճաճանչ Լենինը . . .

Նայում եր ե Ակոփը լույսերին ու հանկարծ սթափ-  
վում . — չե՞ վոր ինքն ել պիտի առնի լապտերը ու զնա  
ընկերների հետ . . . չե՞ վոր Լենինն այս զիչեր զորա-  
տեսի ե հրավիրել բանվորներին . . .

Շտապում ե Ակոփը դալի տուն, — լապտերի յետե-

վից, բայց ներս մտնելով տեսնում ե կուրած ե լապտե-  
րը, մնացել ե միայն յերկաթե ցանցը . . . Դասնացած  
սրտով վերցնում ե այդ մնացորդն ու գնում, միանում  
շարքերին :

Փայլում ե Ակոփը լուսավոր շարքի մեջ, տխուր,  
զլիսիկոր : Թվում ե նրան, թե բոլո՛րը, բոլո՛րը, իրեն  
են նայում, իրեն են խղճում, վոր գնում ե կուրած,  
խավար, լապտերով . . .

Բայց հանկարծ հնչում ե նորից, ցնցում ե նորից  
ահեղազորդ ձայնը Լենինի .

— Ընկերներ՛ր . . .

Ու բոլորը կանգ են առնում տապալապահար : Կար-  
ծես ահաղանդ ե յին տալիս :

— Ընկերներ՛ր . . . Շարքերը ճեղքված են . . .

«Լույսը մարած ե մի տեղ,

«Մթին ե տալիս մի տեղ» . . .

Իրարանցումը բռնկում ե շարքերը . — ո՞վ ե, ո՞վ ե,  
անցնում են հարցերը խոտվահույզ ալիքներով . — «Ա-  
կոփն ե» — դալիս ե պատասխանը հակառակ ալիքնե-  
րով ու խուքը հասնում ե Լենինին .

— Ընկեր Ակո՞փը . . . հարցնում ե նա . — թող դուրս  
դա առաջ . . .

Ակոփը դուրս ե դալիս շարքից ու գնում դեպի Լե-  
նինը կուրած լապտերով ու կուրած սրտով : Տար ար-  
ցունքները այրում են նրա այտերը . — ախ ի՞նչպես,  
ի՞նչպես նա պիտի կանգնի ու խեղարի Լենինի պայծառ  
աչքերի տակ . . .

— Ընկեր Ակոփ, հարցնում ե Լենինը — ինչո՞ւ յի  
խավար լապտերդ :

Մի պահ Ակոփի լեզուն կապվում ե, մտում ե լուռ,

բայց յերբ բարձրացնում է գլուխը, տեսնում է Լենինի գեմքը, նրա լայն սրտից ինքն էլ սիրտ է առնում...

— Ընկեր Լենին, — ասում է, գիշերս տուն եյի գնում գործից. ճամբին հարձակվեց դասակարգային թշնամին, վիրավորեց ինձ, կտարեց լապտերս...

— Գասակարգային թշնամին... Գեմքը խոտոռում է Լենինը — լսո՞ւմ եք ընկերներ...

— «Գասակարգային թշնամին»... անցնում է բերնե բերն... անցնում է ալիքը յերկար շարքերով:

— Իսկ ինչո՞վ, ընկեր Ակոփ, ինչո՞վ պլտի պատասխանես դասակարգային թշնամուն:

— Ինչ վոր արել եմ, ընկեր Լենին, մեկին — յերկու կու կանեմ. թշնամին ուզեց սպանել ինձ, շարքերից հանել, բայց յես, — վիրավոր ձեռքերով վոչ մի որ չեմ ընկնիլ գործից. — աշխատանք ու պայքար մինչև արյան վերջին կաթիլը — այս է իմ պատասխանը դասակարգային թշնամուն...

— Լսեցեք ընկերներ՛ր, գիմում է Լենինը բոլորին — ահա թե ինչո՞վ է պատասխանում ընկեր Ակոփը դասակարգային թշնամուն — աշխատանք ու պայքար մինչև վերջին կաթիլը արյան...

Ին դալիս են ընկերները, կուտակվում Ակոփի շուրջը: Հոկայական միտինգ է կաթվում, լուսեղեն միտինգ: Այնքան շատ են լույսերը, այնպես ալրում են Ակոփին... Ու զգում է նա — բոլոր լույսերն իրենն են ու ամենքի՛նը, ու ել չի տանջվում կոտորած լապտերից...

Ու խոսում է Լենինը մի ուրիշ հրեղեն լեզվով, վորի նմանը չի լսել յերբեք Ակոփը, խոսքերն ընկնում են, խփում են սրտին, վառում ու լարում... Բռնկվում են, դլրդում դարնան թարմ վորտաների նման ու առկայ-

ծում, լուսավորում մտքերը, վորպես փայլակը մուխ գիշերըներին...

Վերջանում է զորատեսը ու շարքերը նույն լույսը ժապավեններով դառնում են նորից գեպի իրենց պիղքերը...



Ամեն գիշեր, յերբ խավարը սև քույաներով սփռվում է ձորում, հիդրոկայանի բանվորական շենքերի մոտ պահակների նման շարվում են լույսերն ու ժպտում ուրախ ուրախ ցուլերով:

Գիշերվա ալը ժամերին ձորամտի լանջերի կածաններով շարվում են լապտերները — տոննկի բանվորները: Նրանց մեջ է դարձյալ Ակոփը, իր նոր լապտերը ձեռքին: Նա իր հերթին ելի գործի յե կպել, չնայած բժշկի խորհրդին, չնայած ընկերների հորդորներին: «Թող վերքերին բժիշկը նայի, — թող ջննիչը բանդիտներին հետևի, իսկ յես կշարունակեմ իմ աշխատանքը, իմ պայքարը — մինչև վերջին շունչը»...

Բանվորների ու կոլխոշնիկների փողովները, նրանց հզոր պաշտպանութունը թևեր են տվել Ակոփին, նա իր վտանների տակ էլ հող ու քար չի տեսնում, խոչում է, սրանում...

Յերբմն նա կանդ է տնում, նայում ներքևի լույսերին ու թվում է նրան, թե այնտեղ, բանվորական շենքերի մոտ, — այն լուսեղեն շերտում, — մի ուրիշ, նոր աշխարհ է ստեղծվել, — աշխատանքի վերջնական հաղթանակի աշխարհը...

## ՆՈՋՈՐ ԳԼԽՈՒՆԻ

Կարնան առաջնոր մեղմ, դուրզուերսդ արևի տակ  
տիտվել եր Ալեք գյուղը իր այգիներով ու հանդերով :  
Արտերում կանաչն արդեն զգալի չափով բարձրացել  
էր, իսկ գրքի դաշտերում ու մացառոտ բլուրների վրա  
նոր ծիլերը դեռ խառնված էլին անցած տարվա խոտե-  
րի հետ : Թեթև քամին յերբեմն անցնում էր, շարժում  
չոր ու մերկ ցողուններն ու բերում հեղու խոնավ հողի  
ու թարմ կանաչների բուրբուռները : Արտուտները—ան-  
ընդհատ, շարժման մեջ,— մերթ մտաեցնում, մերթ  
հեռացնում էլին իրենց խուսափուկ, զիլ ճոփողյունը :

Այգիներում արդեն գեղնին էլին տալիս նոր ծաղ-  
կած հոնի ծառերը, ու լավում էր գարունը բացող  
թռչնիկների մեղմ ծլվլոցը, նրանց միտրինակ «չիպ-  
չիպ-չիպ» : Տեղ-տեղ գյուղացիք վարում էլին այգի-  
ները, սև շերտեր բանալով չոր խոտերի գեղին ֆոնի  
վրա :

Ար-որի վրա գարունն աճում էր անհանդիստ հույ-  
զերով լցնելով գյուղացու սիրտը : Նա նայում էր արե-  
վին, ու թեկուզ գործի մեջ,— շարունակ մտածում, թե  
ես «յոսկի սրերն» անցնում, իսկ ինքը դեռ բան չի չի-  
նել, չի կարողանում հասնել նոր արևի,— նոր աշխա-  
տանքի յետևից :

Գյուղի վերի ճանապարհով, վորն անցնում էր այ-  
գիների ցանկապատի դժով,— յերկու ձիավոր էլին

իջնում, մեկը գյուղի լիազոր և կոլխոզի նախագահ  
Մինասն էր, մյուսը գյուղխորհրդի քարտուղար Սողո-  
մը : Մինասը մեկ քշում էր իր նոսրը, կարմիր ձին,  
մեկ սանձը ձգում, դանդաղեցնում ընթացքը, ամբողջ  
մարմնով որորվելով թամբի վրա : Նրան հետևում էր  
քարտուղարը, վորը նստած էր մի բարձրահասակ, նի-  
հար, վոսկորները ցից ձիու վրա, ու շարունակ մտա-  
կում էր, ձգտելով հասնել լիազորին : Մեծ դժվարու-  
թյամբ,— ձիու սինդ-սինդ տալուց նստատեղը շարդե-  
լով, նա մոտենում էր նրան :

«Գեֆու լավ ա» — այս էլին ասում Մինասի շար-  
ժումները : Նրա ճիւղած, կեպի գլխարկը թեքվել էր մի  
կողմի վրա, լոթու արտահայտութուն տալով դեմքին :  
Գլխոտ, հարբած աչքերը նայում էլին առանց ուշադր-  
բության, ու կկոցելով խնդում— մոտակա գյուղում  
նոր անցած քեֆի տպավորության տակ :

Նա մա քառասուն տարեկան էր, ածելած, լիքը  
դեմքով, ինքնահավան, ցից ջրով ու ներքև թափված  
խիտ բեխերով :

Քարտուղարն ավելի փոքր էր նրանից տարիքով,  
կարճահասակ, վտիտ մարմնով, գյուրաշարժ, խու-  
զարկու աչքերով :

Յերբ ճանապարհը թեքվեց դեպի գետը, Մինասը  
բնազդաբար զգալով, վոր մոտենում է գյուղին, փոք-  
ձեց ինքն իրեն հավաքել,— ձիու քայլերը դանդաղեց-  
րեց, ու իր պատիվը ճանաչող վարդապետի նման մեջ-  
քը դիք ձգեց, ու դեմքը խոթոտեց : Բայց նրան այդ չի  
հաջողվում,— շարունակ որորվում էր դեռ ու դեռ ու  
մոռանում, էլի իր նախկին դրության մեջ ընկնում :

Ձիաները կանգ առան դետի մեջ,— չուր խոհելու

Համար: Քարտուղարը քիթը սրած դես ու դեն եր նա-  
յում, կարծես հոտոտելով, ու իր մանր աչքերով դե-  
տում եր չորս կողմը:

— Ընկեր Մինաս, — ասաց նա հանկարծակի, կար-  
ծես դյուտ եր արել, — մի տես, Մադոյանց Բենոն բա-  
նում ա կոլխոզի այդու մեջ:

— Վո՞ր Բենոն, — հարցրեց Մինասը, — առանց  
մտածելու:

— Են ելի, Մադոյանց Բենոն, — «Կանդիտատը»,  
կրկնեց նա ավելի բարձր ձայնով, իր ասածը հասկաց-  
նելու համար:

Մինասը գլխի ընկավ: — Բենոն կոլխոզի այդում...  
Բենոն — չքավորների «բերան-պատուածներն» մեկը,  
վորն ընտրությունների ժամանակ աշխատում եր իրեն  
տաղալել...

Կատարությունից նրա դիմովությունը թռավ:

— Արա, մի գնա տես ի՞նչ ա անում, — գիմեց նա  
քարտուղարին, քնից նոր դարձածի դրզոված ձայնով:

Սողոմը ձին շարժեց, բայց հենց վոր մի քանի քայլ  
հեռացավ, Մինասը չհասրերեց, ինքն ել քշեց ձին նրա  
յետեկից:

Նրանք առաջ անցան արևի ամբարտակի ուղղու-  
թյամբ և փչե ցանկապատի պատուած տեղով ներս մտան  
նախկին կարվածատերերի մեծ այգին, վորն այժմ  
հանձնված եր կոլխոզին: Նրա մի մասում խաղողի վա-  
ղերն ելին, մյուսում պողատու ծառերը, իսկ գետափի  
փոքր մասը հատկացրած կր բանջարեղենի համար:

Այգին ներս մտնելուն պես նրանց աչքերին դարձեց  
արևի տակ նոր վարած գիծը, — յերեք շարք թարմ հողի

չերտերը, վորոնց ճումբերը փայլում ելին բահի կըս-  
րած տեղերում: Յերևում եր, Բենոն սկսել եր վարը,  
հետո թողել, անցել եր արևի մաքրելուն: Նա արդեն  
հեռվից նկատել եր ձիավորներին, բայց չտեսնելու եր  
տալիս, ու յերեսը հակառակ կողմն արած, շարունակում  
եր արևի մաքրելը, հողը շարտելով ափերին:

Բենոն յերեսունհինգին մոտ եր, խոչոր դիմադն-  
րով, միջահասակ, նիհար, մեջքի-թեթև սապատով:  
Գյուղում նրա ավելորդ անունը «Կանդիտատ» ելին  
դրել, վորովհետև ինչ վոր ընտրության ժամանակ մի  
քանի անգամ կրկնել եր, — «յես կանդիտատ: Եմ, անգամ  
չեմ»:

Մինասը նայեց Բենոյին ու հանկարծ անտեղ պար-  
տությամբ նրա առաջ բացվեց դարձանիքը: Բենոյի ա-  
րարքը նրա վրա այնպես եր աղդում, կարծես նրա  
ձեռքին բահի տեղ հրացան եր, վոր պիտի ուղղեր իր  
դեմ:

— Արա ստեղ ի՞նչ ես շինում, — դոռաց նա, ձիուն  
մտրակելով ու մոտենալով արևի յեղրին:

Բենոն շուտ յեկավ դեպի Մինասը ու բահի վրա հեն-  
վելով հանդեստ պատասխանեց.

— Տեսնում չե՞ս, ինչ եմ անում, — արխը մաքրում  
եմ:

Բենոյի հանդեստ տոնը ավելի յեր խայթում Մի-  
նասին:

— Վո՞նց թե իտակում ես, քեզ ո՞վ իրավունք  
սովեց. դու քանի՞ գլխանի յես, վոր առանց իմ կարդա-  
ղության հասարակության դործի մեջ ես խառնվում:

— Քանի գլխանի յե՞մ... եղ գնա մեր ժողովրդից  
հարցրու, նա քեզ լավ կասի...

— Չենո կորի, խելքիդ գտ մի տա, գուրս դնա, կորի:

— Ի՞նչի պետք ա դուքս գնամ, ի՞նչ վատ բան եմ՝ անում, — արթն եմ մաքրում:

Գու գնա քու ջիթը մաքրի. քեզ ոչով իրավունք չի ավել, վոր մեյգան ես յեկել:

— Ի՞նչի, բա մեր կոլխողի ծրադիրը հացի հետ ես կե՞րել... սա մեր խեղճան դործն ա, վոր կա...:

— Գնա կորի՛, ծուռտիկ կչեղակ. դու ելիր սրակսո ծրադրներով. դուքս յեկ եզ արխից, թե չե են տեղը կըցեմ, վոր յեկած ճամբեդ կմտանա:

— Ի՞նչ ես հերտաւում, վոր մի իրավունք չունեն հայհոյելու, բա վոր քե՞քի ես նստում, մեր կոլխողի դործն ո՞վ պետք ա ասով տանի. հրես ժամանակն անցել ա:

— Գուրս յեկ, ասում եմ, քերանց մի շող թալ. թե չե գամչու տակ կտամ դուքս յեկ «ասում եմ» իմանում ե՞ս թե չե:

— Չեմ դուքս դալիս:

— Ա՛յ յես քու կուզիկ հեյն անի՞ն եմ, — Ծրադիրը ՄԷ. — նասն ու մտքակեց ձին, վոր մտնի արխի հուներ ա խիի Բենոյին, բայց այդ րոպե յին քարտուղան արդեն իջել էր, ու Մինասի ձիու սանձից բռնել:

— Ընկեր Մինաս, սպասիր, յես կհամարիմ, ասաց Սոցոմբ:

— Ե՛ս րոպե յես որան կտանես կձերբակալես, — ասաց Մինասը սպառնալով իր ձեռքի մտրակով:

— Գու ո՞վ ես, ի՞նչ իշխանութուն ես, վոր ձերբակալես:

— Յերբ վոր կնասես, են ժամանակ կիմանաս, թե ո՞վ եմ յես:

Սասց ու ձին քչեց գետի մյուս ափը, սպասեով, վոր քարտուղան իր հրամանը կատարի:

Նրա հեռանալուց հետո Սոցոմբ սկսեց փափուկ խոսքերով «համոզել» Բենոյին:

— Արա, Բենո, դե ենա վոր ասում ա, հոժարվիր դուքս յեկ, ել ո՞ւր ես հակառակում:

— Ի՞նչի, յես նրա ստրուկն եմ. շատ ել կոլխողի նախագահ ա, հո մեր թեղավորը չի. ես ել ի՞նչ — կուլակների մարդն ա, մերը չի, եզ րանն ինձ հարցրու...:

— Ինչ վոր ա — իշխանավոր ա. հիմի յեկ հո դիտես, լիազորի տեղն ա:

— Եզ յե՞րբ դառավ լիազոր... Ենդուր ա ձեներ բարձրացրե՞լ:

— Բա ես ա մի աշխատ ա, Մարտինը գնացել ա բան ֆակում սովորելու, սա նրա տեղն ա. պետք ա կատարես նրա կարգադրութունը:

— Ախպեր, արածո ի՞նչ ա. — խորհրդային ծրագրի դեմ եմ գնացե՞լ. — Ծրագիրն ասում աշխատիր, յես յեկ աշխատում եմ կոլխողի համար:

— Բայց դու իրավունք չունես ասանցի կարգադրության հասարակական դործն սկսելու:

— Ի՞նչի մասին ես խոսում. — Եզ մարդը մտքումը գրել ա կոլխողը քանդի, կուլակների սրտովն անի, իրան ել քե՞քի ա ավել, բա մենք շաշխատենք:

— Գե եզ ուրիշ հարց ա, դա յեկ իրան կարգով կզրնա. իսկ ետեղ հակառակելու կարիք չկա. դուք տեղը

հակաճանոցի... հիմի լա՛վ ա. հո լսեցի՞ր, ասում ա—  
տար ձեզբախալիբ...

— Թող ձերբախալի, յես վախեցողը չեմ. տեսնենք  
ո՞ւմ արածը դուքս կընա. սազ մեր խորհրդային աշ-  
խարհը չեն ու չենք ա քախոզում, հիմի հենց մեր գեղո՞ւմ  
միջեց աշխարհը,— մեր Մինասի վրա՞... .

Գետի մյուս ափից լավեց Մինասի կապիտ ձայնը.  
— Դե շուտ արա, բեր եզ ջոտտին:

Բենո, դե արի գնանք. վախիլ մի, բան չկա, քո  
գործը կգրասեմ, միայն լիե հեաը խոտելիս չհակա-  
ռակվես:

— Գալիս եմ. Թող ինչ ուզում ա անի, յես վախե-  
նալու բան չունեմ:

Սողամը հատեց իր ձին, ու սպասեց, մինչև Բենոն,  
բահի վրա հենվելով քարերի վրայով անցավ դեպի  
մյուս ափը, ապա ինքն ել հեանեց նրան:

Մինասը, նկատելով, վոր դալիս են, իր ինքնասի-  
բուխձունը բաժարարված գլխաց, ու ձին քչեց գանդազ  
բայելով: Նա մի քանի անգամ հեա նայելով նորից  
ստուգեց,— դալի՞ս են, թե չե, ապա վերջնականապես  
հավատարմալով, մտրակեց ձիուն ու հեաացավ նրան-  
ցից:

Արտաշարը մի թունդ հայհոյանք փսփսաց նրա  
հասցիյին, անյբան բարձր, վոր Բենոն լսի: Նրա համար  
անախորժ եր ալն, վոր Մինասը թշնամացնում է իրեն  
Բենոյի հեա, վորը չքաղորականների աղբեցիկ անդամ-  
ներից մեկն եր, և այժմ ցանկանում եր մեղմացնել  
գրուխձունը, ցույց տալ, վոր ինքը նույնպես հակառակ  
է Մինասին:

— Թո՛ւհ, քու նամուսին,—ասաց նա բարձր ձայ-  
նով, սիրտս ասում ա—ազատիբ գնա, ես խայտառա-  
կուլթյանը վերջ տուր:

— Թող ա՛նի, Թող իբրննչա կուլակների հեա. մի  
որ ել վորը քարին կգիպչի, գլխիսնձի կտա:

— Դե ի՞նչ անեմ, Բենո, տեսնում ես ելի՞, ինչ  
որումն եմ. ետպես անխելք բան ա սարքում, հեաո յեյ  
կու՛մն ու կուլին իմ գլխին կտարում: Ե՛հ, յերբ պետք  
ա ազատվեմ եո ցավից:

Գյուղի ծայրին քարտուղաքը, ձին հանձնեց դի-  
մացից յեկող մի ազայի, և ուղարկեց ախրոջը, իսկ  
ինքը վտաքով դնաց Բենոյի հեա, վարպետի ճնկապի,  
թե տանում ա նրան ձերբախալելու:

Յերեկոյան դեմ գյուղի միակ հրապարակում  
ուր և շուկան եր, և կոտպերատիլի ու գյուղխորհրդի  
դրասենյակը,—աղմուկը սովորականից ավելի ուժեղ  
եր: Խոսակցության ու վեճերի առիթը Բենոն եր, վորի  
գլխին յեկածը արդեն տարածվել եր դուրդում: Գրոխի  
մոտեցողին թվում եր, թե բոլորը միանգամից խոտում  
են, առանց միմյանց լսելու, ու ամեն բոպե կապոյ է  
բունկել մի կառաղի կոխով:

Հրապարակի կենարոնում ստանձնապես սղմկում  
ու բողոքում եր նորակաղճ կուլխողի անդամների խում-  
բը, իսկ նրանց շուրջը ավելի դոքը խմբերով վիճում  
եյին «անհատականները»—վորը դուրջավոր ձեով հար-  
ձակվում եր Մինասի վրա, վորն ել կես բերան պաշտ-  
պանում եր Բենոյին:

— Արա բա մենք մեոած ե՞նք,—ասում եր կուլխող  
նիկների մեջ Թառնեց Պետրոսը,—բա պիտի մարտե՛նք

ես խալտատակութիւնը, թողնենք, վոր մեր կոլխովի գլուխն ուտի՞ . . . ա՛յ յես դրա . . . Պետրոսը ատամները կրճատացնելով. նրա խիտ, սև հոնքերի տակից սպառնալից փայլով նայում է յին կրակոտ աչքերը:

Պետրոսը քսանհինգ տարեկանի չափ հաղթանդամ յերխտասարդ եր, կոլխոզի հիմնադիրներին մեկը:

— Մի տաքանալ, Պետրոս, — ասաց Ոհանը, — հասակն առած, նիհար գեմքով մի գյուղացի, իր ալեխառն խիտ մորուքը տմբումբացնելով. — Գլտե՞ս ի՞նչ կա, — կացնի բերանին խիտը իրան ձեռը կարյունոտի . . . շատ եր բռնութիւն Մինասը, բայց դե հիմի լավն են աս, վոր յերեսը բացվեց, եւ չի կարող գառան մորթի հաղնի:

Կոլխոզիկները խմբի մոտ ականջը կախ լսում եր նրանց խոսակցութիւնը Ապրեսանց Գրիգորը: Նա կամաց-կամաց մոտեցավ խոսողներին:

— Ես ի՞նչ դալմադալ եք հանում, — ասաց նա հեղնական ժպիտով, իր գեմքին հավաքելով բազմաթիվ կնճիռների ցանցը, ու աչքերը կուչ ածելով — դե մի՛ մարդ ասելի, կրանտարկեն եւ, բաց ել կթողնեն:

— Գի՞տր, կուլակի դժով մի խոսիլ, — վրա ընկավ Պետրոսը, — խուրջիք յերկու թայ ունի. դու վոր լավ հասկանաս, — Բենոն մի մարդ չի, նա դասակարգ աս:

— Ախպեր, ասենք թե յես ձեր դասակարգը չեմ հասկանում. բայց դե Մինասն եւ ձերն աս, Բենոն եւ ինչպես աս դուքս գալիս, վոր աջ ձեռքը ձախ ձեռքին բանտարկել աս:

— Սերմադուրիչն աս խարար, ասաց բիճա Ոհանը բայց դե մենք եւ հո քնած չենք . . .

— Դե ինչ վոր աս ձեր ընտրած մարդն աս Մինասը,

պետք աս նրա կամքովը դնաք. թե վոր տարել նստացրել աս Բենոյին, նշանակում աս վոր Բենոն մեղալոր աս:

— Դու ել ինչ ես Մինասի փեշիցը բռնում, հարձակվեց Պետրոսը, — չլինի՞ դու յեւ նրա համախոնքներից ես:

— Ա՛յ սղա, դու ել հենց վրա ես պրծնում, յես ի՞նչ մեղք ունեմ. ասում եմ միթամ որենքի կողմից կարելի աս վոր մի բան աս արել, թե չե յես ի՞նչ համախոնքի մարդ եմ. չես իման՞ում, վոր յես միջակ եմ . . .

Սոսակցութիւնը ընդհատեց կողքի մի ուրիշ խումբակի աղմուկը: Կուլակի սղա, ճղճղան Ակոփի ձայնն եր: Նա գիտմամբ ավելի յեր բարձրացնում ձայնը, վորպեսզի կոլխոզի անդամները լսեն:

— Հենց ասում են Մինասը ըսենց-ընենց. մի ասեք, կարելի աս եղ մարդը իշխանութեան որենքով աս ժած գալիս: Զաթի վոր տաներ ես կոլխոզի մարդկանց նստացներ, լավութիւն կաներ — մի քիչ խելքի կգային . . .

— Ի՞նչ ես բերանդ չաղ տալիս. հը՞ ականջդ ուրախ ձեն ընկա՞վ. ասաց Պետրոսը, — սպասիր, մի ձեր հոտը կկարցնենք . . .

— Դու ի՞նչ ես քեղ ու քեղ յեխիլում. վրա տվեց Ակոփը. ձեր նախագահն աս բանտարկել, թե ի՞մը:

— Եղ մենք լավ գիտենք, թե փլավն ո՞վ աս պատրաստել: Ես աս աչկարա կանենք, արխային կաց:

— Շատ են թաթա տալիս. վա՛յ թե դու ել Բենոյի որն ընկնես:

— Քո սրտովը չի ըլիլ. ականջիդ բամբակը հանիր, կուլակների թաղավորութունը սրծալ:

— Ի՞նչ ես մեծ-մեծ բրդում.— մի քանի խնրոսներքի հավաքել ես, թե կալխոզ եմ սարքում. մի աստ տեսնանք մեջն ի՞նչ կա:

— Մեջը կուլակների գերեզման կա:

— Սուս կայ, թե չե կտամ կոտակացնեմ:

— Դու առանց են ել սասկած ես, քեզանից վախոզ չկա:

— Ա՛յ թե չկա... յես ըս մուրտառ յերեսը... ասաց նա ու մտտ յեկալ, վոր խփի Պետրոսին, բայց չըջարտողները մեջ ընկան, բաժանեցին նրանց:

Սկսվեց մի ուժգին աղմուկ. հրապարակի ամբողջ խտացալ, կուտակվեց կոլխոզնիկների շփուլը: Կուլակները վախենալով բարդութուններից, իսկույն հեռացրին Ակոսին, ու իրենք ել անհետացան:

Պետրոսը գիմեց իր ընկերներին.

— Ի՞նչ ենք ետեղ կաղնել. դործի պիտի անցնե՞նք, թե չե, պանք են կազմը խորհրդակցենք:

Նրանք քաշվեցին փողոցի անկյունը:

— Ընկերներ, ասաց Պետրոսը.— հիմի տեսնում եք, ամեն ինչ պարզ ա.— Մինասը կուլակների հետ միացած, մեր մաստաներին դավաճանում ա. մենք անպիտակից ենք յեղել, թողել ենք, վոր նա շոքողորթելով մտնի մեր մեջ, և կոլխոզի նախագահ հետո ել լիազոր դառնա ու մեր քամակից խփի. հիմի ի՞նչ պիտի անենք.— մենք պետք է մի քանի մարդով գնանք Մինասի մտա, բողո-

քենք նրա արարմունքի դեմ, պահանջենք, վոր ազալի Բենոյին... համաձայն ե՞ք:

— Համաձայն ենք— կանչեցին չորս կողմից:

Հետահետ հանդարտվելով, հրապարակի ամբողջ ցրվեց. ցրվեցին և կոլխոզնիկները, բացի յերեք հոգուց:

\*\*\*

Մինասին արդեն իմաց ելին արել իր համախոհները հրապարակում տեղի ունեցած աղմկալից վեճերի ձախն, և նա, զգալով, վոր Պետրոսը իր ընկերներով անպատճառ դալու յեն իրեն մտտ, պատվիրել եր տանըցոնց, վոր յեթե դան,—ասեն թե տանը չի: Բայց յերբ նրանք յեկան, բարձրացան փայտե յերկար սանդուխքներով, ու այդ պատասխանը ստանալով, հետ դնացին, Մինասը, տեսնելով, վոր թաղնվելը անկարելի յե, վճռեց ընդունել նրանց զրասենյակում, վորտեղ նա կարող եր ցուցադրել իր ամբողջ իշխանութունը: Նա ուղարկեց քարտուղարի յետեվից, պատվիրելով վոր դնա զրասենյակը:

Նրան այժմ բռնկել եր իր տրարքի պատասխանատվության վախը, ու յեթե իր փառասիրութեան ցավը չլիներ, իսկույն ազատ կթողներ Բենոյին ու կսկսեր սիրաչահել կոլխոզնիկներին:

«Յուպես ել ձախլիկութուն», մտածում եր Մինասը, յերբ Պետրոսը իր ընկերների հետ դուրս յեկան իր տնից.— «Բա կոլխոզի նախագահը կբանտարկի կոլխոզի ամենաակտիվ անդամի՞ն... քթիցդ կհանեն, ա՛մեռած... անտեր գինին ա խելքս տանում.— պետք ա թարզ անեմ»...

Բայց վո՞նց դրստեր իր արածը— արդեն յեղածը յեղած եր... իր թքածը յետ լիզի՞, «նրանց» ատալ խոնարհվի՞, վոր հետո իրեն վրեն ծիծաղեն ու քացի տան դեն շարտե՞ն... չե՛, չե՛, Մինասը Մինաս պետք ա մնա... «մի քիչ վրազեցի, ոանդս շուտ ցույց տվի, բայց վոչինչ, աստված սաղ պահի մարդուս քաղցր լեզուս,—ամեն բանից կփրկի...»

Աւ մի առանձին հարբածարավով նա մոտեցավ սեղանի վրա դրած գրաֆինին, ու խմելով յերկու բաժակ ողին, դեն շարտեց իր սհն ու դողը:

«Բան չկա, պինդ կաց»,—ասում էր նա ինքն իրեն, իջնելով իր տատանվող ճոճոան սանդուխքներից—«ձիգ ջուր տուր, քչի, հալթար մի տեղ կհասնես»...

Աւ համարձակ քայլերով նա ներս մտավ գյուղգրասենյակը:

Պետրոսն ու իր ընկերը—Ոհան բիձեն ու կոմյերիա Գուրգենը Մինասին փնտռելով նորից վերադարձան հրապարակը և նկատելով գյուղգրասենյակի պատուհանների լույսը, ներս մտան:

Մի հողահատակ, յերկար սենյակ էր, կիսախավար, մխտած, սեվացած առաստաղով ու կողիտ սվաղած պատերով: Ծայրի պատուհանը տախտակներով ծածկված էր, մյուսների ազակիները մի մասը կտրտած էին ու թղթի կտորներով փոխարինված: Վտաները ծոված սեղանի վրա դրած էր մի հասարակ կազմով մատչան, ու փոշոտված, խունացած «գործերի» ու թղթերի յերկար կույտ:

Մինասը նստած էր սեղանի մոտ, առաջն առած թղթերը, ու ձեկացնում էր, իբր խորատուզվել է նրանց

մեջ: Նրա աջ կողքին նստած էր քարտուղար Սողոմը, թղթերով ու «գործերով» չըշապատված: Լուրջ էր Մինասը, բայց թվում էր, թե նայում է իր քթի ծայրին, և վոչ թե թղթին. լուրջ էր և Սողոմը, բայց նա էլ թվում էր, ձգնում էր տեսնել իր հոնքերը:

— Բարի իրիկուն, —ասաց Պետրոսը, և նրա հետեից կրկնեցին և մյուս յերկուսը:

— Բարեվ, —պատասխանեց Մինասը, լուրջ, և իրեն արժեքն իմացող մարդու տոնով.—ի՞նչ կա: Մի բանի վայրկյան Պետրոսը նայում էր Մինասին խոստումած դեմքով, կասկածոտ հայացքով:

— Մենք յեկել ենք Բենոյի մասին...

— Ի՞նչ կա, — նորից հարցրեց Մինասը, ուզենալով ցույց տալ, թե նրա համար Բենոն փոքրիկ հարց է.

— Վո՞նց թե ի՞նչ կա.—գու նրան ձերբակալել են մենք յեկել ենք պահանջելու, վոր ազատես...

— Բա ինձ ի՞նչի համար են ես գործի վրա դրել, վոր իմ կարդալը թշանց մեջ պետք ա խառնվեք:

— Ընկեր Բենոն դնացել ա արխը մաքրելու, կուլտողի այգին վարելու, նա մեր մաստաների գործն ա կատարել, իսկ դու դրա համար նրան ձերբակալել ես:

— Յեթե ամեն մարդ իշխանություն բանեցնի, ո՞ւր կգնա. ձեզ հայտնի ա՞, վոր յես ես գյուղի լիազորն եմ, թե չե՞. իսկ եղ. Բենոն դնացել ա առանցի հրամանի, իրանուգլխու գործը սկսել. ստեղ խորհրդային իշխանություն կա՞, թե չե. մի ասեք տեսնեմ... —ավելի համարձակվելով վերջացրեց Մինասը:

— Ընկեր Մինաս, խորհրդային որենքը սոցիալիստական ծրագիրն ա. մենք բոլորս պետք ա շինարարու-

Թյուն անենք, իսկ դու շինարար մարդուն բանաարկում ես...

— Ի՞նչ, դու ծրագիրն ինձանից ավել ես հասկանում. դեռ քու աշկերտին վարժապետություն արա. — Բենոն որենքի հակառակ դործ ա բռնել, յես ել նրան պատժել եմ:

— Հիմի քու արածին ի՞նչ անուն տանք. քեզ կուխողի նախագահ են ընտրել, վոր դործն առաջ տանե՞ս, թե դործ անողին պատժես. ինքը զնաս կուլակների հետ քե՞ք նստես ու նրանց սրտովն ել անես—կուխողը կործանես:

— Եդ քո դործը չի, տեղից վեր թուչելով, գրգռված պատասխանեց Մինասը, իմ հաշիվը յես գիշամ. դրա մասին քեզ չեն հարցնում:

Կոմյերիտ Սահակն հուզված շարժումներ եր անում, ուզում եր խոսակցության մեջ խառնովել, բայց բիճա Ռհանը փեշից քաշում, հետ եր պահում:

— Լա՛վ, յերբ վոր դու եղպես ծրագրին դեմ ես գնում, մենք ել մեք ճամբեն կդռնենք—կղիմենք կենտրոնին. թող դան տեսնեն, ինչպես են մասսաները առժվում, կուխողն ել դեռ չսարքած քանդում են...

— Եդ քու ասած ճամբերը յես արդեն ավարտել եմ... ինձ միևուճար չկարծես...

— Կտեսնենք, ո՞վ ա միևուճար... միայն լավ իմանաս, մեր կուխողը չես կարող քո համփոփն կուլակները հետ կուլ տար—բողազին դեմ կընկնի...

— Կուլակն ել դու յես, աջ թեքումն ել, ոպորտունիտն ել. կուխողն ել քեզ նմաններն են կործանում, յես

քեզ ցույց կտամ, թե վոնց պետք ե իշխանության հետ խոսես...

— Մենք եստեղ չենք խոսիլ, մենք կխոսենք, վորտեղ ինձ ել, քեզ ել լավ ճանանչում հասկանում են...

— Ուր ուղում եք գնացեք, ձեռներիցդ բռնող չկա. իսկ յե՞թե կշարունակեք ձեր «հակա» դործերը, յես ստիպված կլինեմ խիստ միջոցների դիմել...

— Ի՞նչ. եդ վո՞ր որվանից յես «հակա» դառա, դու ակտիվ բարեկամ. չի լի՞նի մի փորձես քո խիստ միջոցները:

— Գուրս գնացեք եստեղից, թե չե ձեզ ել կբանտարկեմ,— պտուպ Մինասը.

— Հը՛, հանգիստ կաց. դեռ Բենոյին մաքսի հետ խոսի...

— Սողոմը, տեսնելով, վոր կարող ե ընդհարումը բարդանալ, իսկույն վեր կացավ և Մինասի թեվքից բռնելով, ինչ վոր փախաց: Հետո յել մտաեցավ Պետրոսին ա առաջը կտրեց, ասելով.

— Դե լա՛վ, լավ, չարժի տաքանալ...

Պետրոսի հետ յեկած Ռհան բիճեն նույնպես աշխատում եր հանդատացնել նրան, ու թեվքից քաշում եր:

— Լավ միտը պահիր քո խոսքերը, ասաց Պետրոսը, դուքս դնարաց:

— Կդանեմ, քո մարդարխտ խոսքերն ել հետը...

— Կուլակներիդ աչքախոսք կտաս Բենոյի մասին...

Պետրոսը գնում եր բարձր խոսելով, չկարողանալով հանդատանալ իր հուզմունքից:

Իսկ Մինասը քարտուղարից առավ նրա թամբաբուն,

մի պապերոս վոլորեց ու սկսեց արագ-արագ ծխել,  
խորը ներս քաշելով ծուխը:

— Հը՛մ, յես ձեր ծաշը կեփեմ, ասաց նա ու դուրս  
գնաց գրասենյակից:

\* \* \*

Երջգործկոմի նախագահը նոր եր վերադարձել  
միամսյա արձակուրդից, փակվել էր իր առանձնասեն-  
յակում ու աչքի յեր անցնում ստացված գրություննե-  
րը: Նրա ուշադրությունը գրավեցին յերկու ծրար,  
վորոնցից մեկի վրա գրած էր—«գաղտնի», իսկ մյուսի  
վրա— «խիստ գաղտնի»:

«Սխտ գաղտնի» Ալեք գյուղի լիազոր Մինասից  
էր. նա գրում էր.

«Մեր գյուղում մի խումբ մարդիկ հակա յին քա-  
րոզում և իշխանության կարգադրությունները խան-  
գարում են: Մաղոյանց Բենոն, Թառյանց Պետրոսը,  
ու նրանց հետևից քաշված ելեմենտ սարրերը հակա  
պրոպագանդա յեն անում: Սնդրում ենք խիստ միջոցներ  
նշանակել և կտրուկ պատիժներ ձեռք առնել վերոհիշ-  
յալ անձանց և նրանց թաշվանելի անհատ խմբերի մա-  
սին, հակառակ դեպքում իշխանությունը կառուցվի և  
ցեցը կտարածվի գյուղում: Ալեք գյուղի լիազոր Մի-  
նաս Գառնակերյանց.— քարտուղար՝ Սողոմ Հացու-  
տողյանց»:

Յերկրորդ նամակը հինգ ստորադրությամբ էր,  
իսկ իր բովանդակությամբ առաջինին հակառակ.

«Ալեք գյուղի Մինաս Գառնակերյանը կոլխոզի նա-  
խագահ ա, բայց ընկերներ, պետք է իմանաք, վոր նա  
մեր կոլխոզիկ չքավոր գյուղացիներին թեկնածուն չի.—  
նա հին ութիմ կուլակերի հետ ա նստում վեր կենում,

և մեր կոլեկտիվ մասնաների գործը ուղում ա քանդել:  
Այս արագակոզ փաստերից մեր կոլեկտիվ կոլխոզը  
գրգռվում ա—պատճառն ի՞նչ ա, վոր խորհրդային ծրա  
գիրը տուժվում ա: Որինակի համար մեր գյուղացի ըն-  
կեր Բենո Մաղոյանը գնացել ա արխը մաքրելու, կոլ-  
խոզի աշխին վարելու, իսկ լիազոր նախագահ՝ Մինասը  
կուլակներին սրտին յեղ ա քսել ու ընկեր Բենոյին կա-  
լանք ա արել: Սնդրում ենք, ընկեր նախագահ կոլեկտիվ  
դժով ուշադրություն գրավեք այս հարցի դեմ, թե չե-  
վաղը կարող ա ծագել մի կատաստրոֆային պայթ-  
յուն, վորի պատասխանատուն կլինի Մինասը: Սնթրվում  
ենք քննեք գործը—պատճառը ի՞նչ ա, վոր կոլեկտիվը  
մասնաները տուժվում են»:

Մի թեթև ժողիտ անցավ նախագահի գեմքով նա-  
մակադիրների հասցեյին: Վորպես չըջավայրին ծանոթ  
մարդ, նա հեշտությամբ պատկերացրեց գյուղի դրու-  
թյունը, բայց ինքն-այնտեղ չէր յեղել, և գործող ան-  
ձանց մեջ փոփոխություններ էր նկատում, վորոնք  
տեղի ելին ունեցել էր բացահայտության ժամանակ:  
Անհրաժեշտ էլին քարտուղարի բացատրությունները:

Նա ձեռքը մեկնեց գեպի ելեկտրական գանգի կա-  
ճակը, մի քանի անգամ սեղմեց, բայց վոչ մի հետևանք  
չունեցավ.—գանգը վաղուց էր քնել, յերեկ ղղալով,  
վոր իրեն չի սաղում ձայն հոնել գալստական-գյուղա-  
կան միջավայրում:

Նա վեր կացավ տեղից ու դուռը բանալով դուրս  
նայեց: Միջանցքում կանգնած է ցրիչ Վարչամբ:

— Մի Արամին կանչիր,— պատվիրեց նախագահը:

Քիչ անց ներս մտալ քարտուղարը, ձեռին մի թըղ-  
թապանակ, վորը վերցրել էր հետը, կարծելով, թե  
պիտի գեկուցի:

— Ընկեր Արամ,— ասաց նախագահը, ծխախոտը  
վառելով,— եսոր յերեկոյան արի գեկուցիր, տեսնենք  
ի՞նչ է կատարվել իմ բացակայութեան ժամանակ: Ըն-  
կեր Թառայանը շտապով գնաց կենտրոն, չկարողացա  
հետը խօսել: Իսկ այժմ զբաղվենք այս նամակներով,—  
մի նստիր, կարգա, և պարզիւր քո ունեցած տեղեկու-  
թյունների համաձայն, թե այս գրութիւնների տակին  
ի՞նչ կա:

Քարտուղարը փորձող հայացքով դիտեց նախագա-  
հին, մտածելով— չլինի՞ թե մի բան է պատահել, վորի  
համը ինքն է պատասխանատուն,— բայց նրա զբաղված  
դեմքի վրա,— չեշտակի նայող աչքերում, լայն, փոքր  
ինչ ճաղատ ճակատին, վոչ մի փոփոխութիւն չեր  
նկատուում, բացի արձակուրդի հետեանքով ստացված  
թարմութիւնից: Նա վարանոտ զգայումով վերցրեց  
նամակները, բայց կարգալուց հետո կատարները չքա-  
ցան և նրա յերիտասարգ դեմքի ժպտուն արտահայտու-  
թիւնը նորից վերականգնեց:

— Հը՞, կարգաց՞ր,— ի՞նչ կասես ստարատեղիա-  
կան դրութեան մասին:

— Այստեղ յերկու նամակ է, յերկու յել թայֆա-  
սովրական պատմութիւն և մեր գյուղերում...

— Թայֆա՞... Չե՞ս սխալվում. ծանոթ ես այդ  
գյուղին:

— Վո՛չ, չեմ յեղել այնտեղ. ճանապարհից դուրս  
է, բայց ստացված տեղեկութիւններից միշտ այն կարծի-

քի յեմ յեղել, թե այնտեղ գործերը վատ չեն ընթա-  
նում:

— Ճամբից դուրս,— աչքից դուրս... սա այն  
գյուղը չի՞ վորի անունը գրի ենք «Աչքաթող»:

— Այո, բայց պետք է ասեմ, ճիշտ է, այնտեղ  
կուսակցականներ քիչ են, իսկ հիմա յել բլիժը համարյա  
ամբողջովին գտված է, բայց կուլակային խլրտումներ  
չեն նկատվել և ընդհանրապես հանիստ գյուղ է...

— Հենց կատարեցին այդ արտաքին հանգստու-  
թիւնն է, վոր կա.— կուլակային հանդատութեան մեջ  
ճանճի բզդոցն էլ կլսվի, բայց լավում է և մի ուրիշ  
բզդոց... այդպիսի գյուղերից շատ անգամ դալիս են  
ասում— «Դե մենք ուրիշ գեղերի նման չենք— մեր մեջ  
բոլորս էլ չքավոր ենք ու վոնց վոր մի ընտանիք— են-  
պես ենք ասլում»: Բայց հենց վոր գյուղի խուփը վերց-  
նում ես— տեսնում ես տակը հարամիներ են նստած:

Նախագահը վեր կացավ տեղից ու ձեռքերը տու-  
ժուրկայի գրպանում դրած սկսեց քայլել նախկին դին-  
վորականի կանոնավոր քայլերով:

— Իսկ ի՞նչ յեղավ այն բատրակը, վորն առաջ լի-  
ադոր էր և կոլխոզի հիմնադիրը:

— Ընկեր Մարտի՞նը— նա դնաց բանֆակ ուսա-  
նելու:

— Իսկ այս նոր լիադորն ի՞չ մարդ է, յես դրան  
բոլորովին չեմ հիշում:

— Դրա մասին ձեր տեղապահ ընկ. Թառայանը  
լավ կարծիքներ էր հայտնում...

— Հը՞մ... իմ բացակայութեան ժամանակ  
փոփոխութիւններ են տեղի ունեցել... Ընկեր Թառա-  
յանը...

Նա ուզում էր ինչ վոր Կայսրական բան ասի Թա-  
ռայանի հասցեյին, վորին տեղափոխել էյին ուրիշ  
չրջան, բայց դբուշացալ, չուզեց քարտուղարի մտտ ար-  
տահայտել նրա մասին:

Դե, իհարկե, ինչպես ընկ. Թառայանը կարգադ-  
րում էր, աջնպես ել ընթանում էյին գործերը, —ասաց  
քարտուղարը, կարծես արդարանալով իր վրա յեղած  
կասկածներէից:

«Պետք ե ստուգել», —մտածում էր նախագահը  
քայլելով. —«Դուցե սգալելով իմ բացակայութեանից,  
եմ տկաբեր նորից սկսել են իրենց ինտրիգներն իմ  
դեմ»...

Բայց այդ միտքն իսկույն թողեց, աչքի առաջ ու-  
նենալով, վոր մի քանի խառնակիչ աշխատակիցներ  
արդեն տեղափոխված էյին հարեան շրջգործկոմները:

— Ա՛յ —ասաց նախագահը, կարծես փակելով իր  
ներքին մտքերի դուռը. — այդպես ուրեմն, ի՞նչ ե ասում  
ստրատեղիական դրութեանը...

— Ինձ թվում ե, —չարունակեց նա, — վոր կարասի  
մեջ մուկն ե ընկել, —նրա հոտն ե դալիս... Համենայն  
դեպս պետք ե գնալ այդ գյուղը և անձամբ ստուգել:  
Վաղվան համար կպատիլրես, վոր ձին պատրաստեն,  
իսկ յերեկոյան կգաս զեկուցման. լա՛վ:

— Լավ:

Քարտուղարը դուրս գնաց, իսկ նախագահը շարու-  
նակեց գրութեանների ընթերցումը:

\*\*\*

Դեպքի հետևյալ առավոտը Մինասը դարթնեց հան-  
կարծակի, կարծես մեկը նրան հիշեցրեց ինչ վոր կարե-

վոր, մոռացված բան—Բենոյի ձերբակալելը: Նրա ա-  
ռաջ պատկերացան իր արածի հետեանքներն ու հա-  
մակեցին նրան վախով:

«Քթիցս կհանեն, դուրս կվճռեն, թե վոր դրանից  
վասն ել չանեն», — մտածում էր նա. —«պետք ա են  
մարդուն ապատեմ, ծուռը շակեմ, ու ենպես անեմ, վոր  
մոռացվի, գնա, մթամ իսկի չի յել պատահել...»

Սաթից քանի շուտ պրծնի, ենքան լազ ե, բայց վոր  
ետոր աղասի Բենոյին, ինչ կասեն, —կասեն վախեց, են-  
դուր շուտ արձակեց, ու դրա վրա յել յերես կառնեն,  
իրեն տակը կփորեն...

Այս ատտանումներն մեջ Մինասը դուրս յեկավ  
անից, մի քանի բոպե կանգ առավ գավթում, ու քայլերն  
ուղղեց նեղ փողոցն ի վեր—դեպի Առաքելի տունը:

Առաքելը «հին գաստի» կամ կուլակներին խորհրդա-  
տուն էր: Առաջներում նա գյուղի «մատով հաշված»  
իշխաններէից էր, և այժմ ել դեռ պահում էր իր դիրքը, —  
իր նմանների շրջանում: Յարմահասակ հասակառական  
խոշոր դիմագծերով, յերկար, ալեհեր միրուքով, մա-  
նավանդ իր լուրջ ու խոժոռած տեսքով նա դեռ վորոշ  
պատկառանք էր ներշնչում, իր դաստայի անդամներին,  
թեպետ նոր ժամանակն արդեն դրել էր իր դրոշմը. —  
մաղձոտել գեղնացրել էր աչքերը, շղային, դադապած  
կնձիւռներով պատել դեմքն, ու կասկածատ, վախկոտ  
դարձրել հայացքը: Մայրում էր ծանր, ասես մտածված  
ու չափված քայլերով: Սոսում էր յերկար պատկանե-  
րով, մատներով մորուքը շոյում, և դբանով ավելի յեր  
գորացնում իր խելոք մարդու հոշակը:

Քավթում շունը թեթև հաջաց: Դուրս յեկավ դու-

խը փաթաթած մի կին, ու Մինասի հարցին պատասխանեց զլխի շարժումով, թե Առաքելը տանն է:

— Բարի աջողում:

— Աստծու բարին. նստիր Մինաս, ախչի, մի մութագա բեր:

— Առաքել ապի, վո՞նց ես...

— Եհ, մեզ ել կատեն վո՞նց ես... Ընկել ենք սանդերքի ունին ու մի գլուխ դղվում ենք, հա՞ դղվում...

— Առաքել ապի, յեկել եմ քեզնից խորհուրդ հարցնեմ:

— Եդ վո՞նց ա, իմ խորհուրդը պետքն է դալիս. հիմի ջահեղներն են խորհուրդն ել, Սողոմոնի իմաստությունն ել:

— Դե քեզ ել հայտնի ա, վոր յես եդ ջահեղ-ջուհուլի ճամբին չեմ: Ենպես եմ շանց տալիս երեսանց, միթամ նրանց կողմն եմ, բայց մտքինս են ա, վոր մեր դեղի պատվավոր մարդկանց թշնամու ձեռից ազատեմ: Են ել քեզ հայտնի ա, Առաքել ապի, կոլխողի մասին խորհուրդ արինք, առինք,—քանի վոր եդ կոլխող ասած ցավը մեզ մոտ ել ա դալու, պետք է մեջը մեր մարդն ունենանք, վոր դործը քանդի, իսկ թե բան ա, չկարողանա—գոնյա ձգձգի, հարամ անի: Դե յես ել հենց եդ ճամբով եյի տանում, բայց են չուն Բենոն մեր բանը ծոեց. լսած կլես, նրան բանտարիկել եմ: Միտքս են եր, վոր յերեք որ պահեմ լավ խեղճացնեմ, համ ել ուրիշներին խրատ ըլի,—իմանան, վոր յես եմ ըստեղ տերն ու տիրականը: Բայց դե ժամանակն ուրիշ ա,—պզտոր ա, չես իմանում մեջն ի՞նչ կա. ասավտոր վեր կացա, ասի դնամ Առաքել ապի մոտ խորհուրդ անեմ...

Առաքելն ըստ իր սովորության իսկույն չպատաս-

խանեց. նա լուռ շոյում եր իր փառահեղ մորուքը, կարծես նրանից պատասխան եր ուզում:

— Գիտես ի՞նչ կա, Մինաս, բանն անելը չի, բանը պըտակելն ա: Թե ինձ հհարցնես, եդ Մաղոյենց դյաղէն վոչ թե իրեք որով, մի տարով պետք ա միթացնես: Բայց դե ես ժամանակին դործը կարող ա ենպես շուր գալ, վոր սաղ մեր հին դաստեն եդ մի ջոտոտ Բենոյի տակը մնա, չունքի վոր նրա յետեր հաղար դլխանի իշխանություն կա... Հիմի ասելս ի՞նչ ա,—քննությունն ա ըլելու, թքածը լիղելու ա դատնալու,—լավն են կլինի, հանգամանքին մտիկ անես, շատ հեռու չդնաս...

— Շատ դրուստ ես ասում Առաքել ապի, պետք ա հանգամանքին մտիկ անել, բայց ախր շատ են դադում մարդու յե՞, վո՞նց դիմանաս: Են որը, վոր ես բանը պատահեց,—քեզանից ի՞նչ թագցնեմ,—մի քիչ քեֆով եյի, բայց ի՞նչ ասեմ—ես բոպեյիս ել ըլեր, ելի չեյի համբերիլ: Եդ մուռտաուր հենց իմանաս շան պես հոտն առել ա, մտքինս իմացել ա ու դործն սկսել: Հիմի վո՞նց չճխլես դրան, վոր վեր ընկնի, ձենը կտրի:

Առաքելն ահանջը կախ լսում եր, ու մատներով չըփում մորուքը:

— Գիտամ, դիտամ Մինաս. դժար տեղն ես ընկել, պահես Բենոյին—վայ ա, շուտ բաց թողնես—ելի վայ ա, պետք ա ենպես անես, վոր վոչ խորովածն երվի, վրչ շամփուրը...

— Խելոք խոսք ես ասում, Առաքել ապի. յես ել հենց հանգամանքին եմ մտիկ տալիս: Ես արանքումը մեր դործն աջողակ ա. դեղումը նրանցից ել մարդ չի մնացել. բլլիլը վոնդել են, կոմսոմոլի դյաղեքը դեռ խոխա

են, մնում են ես ըյասիր, թողոտ կոխողնիկները, աստ-  
ածով սրանցից ել կաղատվենք:

Առաքելը վերջրեց տերողորմյան ու հասիկ-հատիկ  
դցում եր, հետն ել գլուխը շարժում:—«Թեթե աս, բլլ-  
բլացնում աս, ամեն հովից ժած աս դալիս,—մտածում եր  
նա Մինասի մասին—«սրանից ել բան չի դուրս գալ»...

— Ե՛հ Մինաս, ասաց նա—քաղցր խոսքը անպակաս  
ըլի. յերանի թե քո աստծով ըլի. համա հալատալու  
հարաքյաթ ել չի մնացել.—դե հազար գլխից վար մինը,  
թեկուզ յերկուսը կտրես—դրանով բան կլինի. . . Ջհան-  
նամը, թեկուզ են մեծ բողն ել նրանց ըլի, են արտա-  
տեղերն ել, վախում եմ եզուց ել դան թե-են ձեր լավ  
հողերը, ձեր ջաղացը տվեք կոլխողին. . . մենք վոր կանք  
,—թալակ ընկած մկներ ենք, ինչքան եք դես դեն վալ-  
վզենք ելի վերջը թալակի մեջ ենք. . .

Դուրսը շունը հաջաց: Առաքելը կասկածոտ հայաց-  
քով նայեց դուռն կողմը:

— Ախչի մի տես ո՞վ աս, դիմեց նա իր թոռանը:

Բայց մինչև աղչկա գնալը ներս մտան յերկու դյու-  
դացի.—մեկը Ոսեփն եր, բարձրահասակ, հաստամար-  
մին, մյուսը,—Պողոսը, նիհար, դուրս ցցված տափակ  
դեմքով, ու մանր մարաղ արած, աչքերով:

Ոսեփն իր վաղեմի քաղքի ձևի շերքեղքի չուխան եր  
հոգած, ու գլխին ել, նույնպես քաղքից բերած մորթե  
գլխարկը. յերկուսն ել բավական մաշված էյին, բայց  
ինքը համարյա չեր նկատում: Նա ըստ իր սովորության  
—ներս մտավ ձախ ձևքը մեջքին դրած, ու շաղրություն  
չդարձնելով շան վրա, վորի մեղմ բնավորությանն ար-  
դեն ծանոթ եր:

— Բարի աջողում Առաքել, քեզ ել հետը, Մինաս:

— Ա՛յ աստծու բարին.—համեցեք նստեցեք թախ-  
տին:

— Ել ի՞նչ նստենք.—ասաց Ոսեփը.—յես վոսդում  
եմ: Առաքել ապի, քլունդ ունե՞ս:

— Ունեմ, համա տղես տարել աս:

— Ե՛հ ավոտս:

— Ի՞նչի համար ես ուզում:

— Ի՞նչի համար... դրուստն ասե՞մ... ուզում եմ  
դոմիս յետևի պատը քանդեմ, վոր եղուց-եղոր կոլխողի  
ճանկը չընկնի. . .

— Վախիլ մի, յես չեմ թողնի,—ասաց Մինասը:

— Սաղ ըլես, դիտեմ, վոր սարի նման կաղնած ես.  
համա դե բանա ելի, պատահմունքի առաջն առնում եմ. .  
Մինաս, մի մի ես մարդուն մտիկ արա,—ասաց նա,  
ցույց տալով իր հետ յեկած Պողոսին,—մի պուճուր, ա-  
յին-ոյին խանութ ուներ, նալոգով խեղդեցին, փակել  
ավին. հիմի ել տղի անուշով աս խանութը, ենքան նալոգ  
են դրել, վոր հավիտյան տակից չի դուրս գալ:

Պողոսը կանգնել եր իր յուզոտված, կեղտոտ վե-  
րարկվի մեջ, խեղճացած, հիվանդ հավի նման թմրած:

— Հա, մի բան կոնենք,—ասաց Մինասը, ուզեհա-  
լով ցույց տուլ վոր ինքը շատ բաներ կարող է «դրստել»:

— Մինաս, Պողոսը քեզ եր ման գալիս, դե ետա-  
գտավ, ինչ վոր անելու աս, կանես: Մի ուրիշ բան ել կա  
—ըսոր մի խաբար իմացա—ասում են մեր հողերը կոլ-  
խողին են տալու. դրուստ ա՞... .

— Արխային կաց—ասաց Մինասը,—յես կթողնե՞մ  
...բա ի՞նչի համար եմ կոլխող մտել. . .

— Բենոյին ի՞նչ արիր:

— Նստած աս:

— Մ'յ յես դրա շուն հերն անիծեմ. մի լավ նստա-  
ցրու, թող փթի...

— Ձե, Ոսեի, մի դուրիլ, — մեջ մտալ Առաքելը, փե  
տը վոր շատ կռացնես կկոտորի...

— Ե՛հ, շատ վախելն ել մի բան չի. — մեկ ա մինչև  
դրանց հոտը չկտրի, մենք որ չենք տեսնելու: Մինաս,  
ախր մի հավաքվենք, խելք-խելքի տանք...

Իրսում շունը նորից հաջաց:

— Ախչի, — ասաց Առաքելը, այս անգամ բոլորովին  
անհանգստացալ իր տան անսպասելի «ժողովի» պատ-  
ճառով:

Աղջիկն առանց ասելու դուրս թռալ ա. քիչ հետո  
ներս յեկալ մի յերխտասարդ կատարածվի հետ:

— Մինաս, չըջգործկոմի նախագահն եկել ա, ջեղ  
վրազ կանչում ա, — ասաց կատարածուն — նախկին բա-  
րակը, — աչքի տակով հեգնորեն դիտելով ժողովվածնե-  
րին:

Մինասը վեր թռալ տեղից ուրախացած. — «ա՛յ թե  
դորավոր եր իմ «խիստ դազունի դրությունը», — մտա-  
ծում եր նա. — «դե հիմի կտեսնեք, վո՞նց կանի ձեր դա-  
տաստանը, ձեր թողը կկտրցնի եստեղից...

— Դու գնա, յես կգամ, — ասաց նա, ցանկանալով  
իր դիրքը ծանր պահել:

— Ձե, նախագահն ասեց — անպատճառ հետդ կբե-  
րես...

Մինասի յերեսը մթնեց. — «ի՛նչի պեսք ա եղպես  
բան ասեր — մտածում եր նա. — վայ թե նրանք են բերել  
տվել, նախագահին, նրանց դանդատով ա յեկել... Հան-  
կարծ հիշեց, վոր Բենոն դեռ արձակված չի, և ո՞վ դի-

տա-կարելի յե նախագահն ուրիշ աչքով նայի այդ բանի  
վրա...

Ու անկամ քայլերով նա գնաց կատարածվի հետ:  
Ոսեին ու Պողոսը խեղույն հեռացան, իսկ Առաքել ապին  
սկսեց ջղայնորեն արագ-արագ ձգել տերոտորմիայի հա-  
տիկները, վախից «անուն հոր» կրկնելով մտքում:

\*\*\*

Մինասը գնում եր դազաղած, կալանավորի նման:  
Նա իրեն վիրավորված եր զգում նախագահի խոսքե-  
րից — թե «անպատճառ կբերես հետդ», և լավ բան չեթ  
սպասում նրա այդ «հրամայողական» վերաբերմունքից:

— Վո՞րտեղ ա նախագահը, — հարցրեց նա կատա-  
րածվին:

— Պետրոսանց տանը:

«Նախագահի տակը լցրած կլեն» — անցավ նրա  
մտքով, — գոնյա արձակած ըլեյին Բենոյին...

Վարանոտ քայլերով նա ներս մտալ Պետրոսենց  
տունը: Նախագահի մոտ եյին բացի Պետրոսից, կոլխո-  
զի անգամներից յերեք հոգի: Բոլորի դեմքերից նկատ-  
վում եր, վոր քիչ առաջ տաք խոսակցությունն ե տեղի  
ունեցել, իսկ հանկարծ լռելուց Մինասը յեղրակացրեց,  
վոր խոսքն իր մասին ե յեղել:

Նա մոտ գնաց չըջգործկոմի նախագահին ու ձեռք  
տվեց:

— Բարով եք յեկել, — ասաց նա, հագիվ դասկերով  
եր շիտթուլթյունը:

— Բարեւ, — կես բերան սպտասխանեց նախագահը:

— Գնանք մեր տունն, — հանգստացրեց:

— Վոչ, յես շտապում եմ — դործ շատ կա...

«Նա ել լավ նշան չի... շուտ են տվել իրանց կողմը» :  
Նա նստեց թախտի վրա, սպասելով նախադահի  
խոսքին : Տիրեց բուսեյաչափ լուռթյուն :

— Ընկեր Մինաս, —ասաց նախադահը. — յես յեկել  
եմ ծանոթանալու ձեր գյուղի աշխատանքներին. կան  
մի շարք հարցեր. — յես սկսում եմ առաջինից. — ճի՞շտ  
ե, վոր դուք բանտարկել եք կոլխոզի անդամ Բենոյին :

— Այո, պատասխանեց Մինասը ընկճված ձայնով :  
Նրան հուզում էր մանավանդ այն հանգամանքը,  
վոր «բացատրությունը» տեղի յեր ունենում իր ատելի  
Պետրոսի մոտ :

— Դուք այժմ և լիազոր եք, և կոլխոզի նախադահ :

— Այո.

— Դա թյուրիմացություն է. դուք չեք կարող միա-  
ժամանակ լինել և՛ այս, և՛ այն :

— Ի՞նչ կոլխոզի նախադահ, — մեջ ընկավ Պետ-  
րոսը. — ընկեր Մարտինն եր մեր նախադահը. նրան հե-  
ռագրով կանչել եյին բանֆակ, շտապով դնաց, սա ել  
մեզանից թագուն հավաքել ա կոլխոզի անդիտակից  
անդամներին ու իրեն ընտրել տվել :

— Ի՞նչ ես ստեր հնարում, ո՞վ կա հավատացողը —  
վրա ընկավ Մինասը :

— Սաղ գեղը, բացի քո համբարներից :

— Հա կտեսնես...

Կտեսնեմ քեզ...

— Սպասեք ընկերներ, — զարուճակեց նախադահը.  
դուք ի՞նչ պատճառով եք կալանքի յենթարկել ընկեր  
Բենոյին :

— Նա առանցի կարգադրության գնացել էր գործն  
սկսել :

— Իսկ ձեր-իրեր կոլխոզի նախադահի — պարտա-  
կանությունն է — գործն առաջ տանե՞լ, թե՞ չէ :

— Իհարկե, յես միշտ առաջ եմ տանում շինարա-  
րությունը... յես կոլեկտիվ գործի համար եմ...

— Ընկեր Մինաս, այսքանը կասեմ, — վոր կալան-  
քի յենթարկելով կոլխոզի անդամին միայն այն պատ-  
ճառով, վոր նա ուզեցել է աշխատանքներն արագաց-  
նել, — դուք դրանով վարվել եք մեր կոլխոզային ծրա-  
զրի հակառակ : Թե ի՞նչն էր ձեզ դրդել այդպիսի բան  
անելու, — այդ բնք կընենք հետո, իսկ այժմ նախ և  
առաջ պետք է անմիջապես կարգադրեք, վոր ազատեն  
ընկեր Բենոյին : Յեթե նա խախտել է աշխատանքային  
գիսցիպլինը, դրա դեմ կարելի յեր ուրիշ միջոցներ  
գործադրել :

Մինասը կարմրեց, ու ամոթից չեր իմանում ի՞նչ  
ասի : Նա չեր սպասում, վոր հարցն այդ ծայրից կսկսվի :

— Դե յես կկարգադրեմ... ասաց նա շփոթվելով, —  
միայն խնդրվում եմ դուք ձեր կողմից... Ենպես վոր  
իշխանության հակառակ բաներ չանեն...

— Ուրեմն ա՛յդպես... ասաց նախադահը վճռական  
տոնով, ուզենալով հասկացնել Մինասին, վոր իր վճիռը  
վերջնական է :

Մինասն իրեն կորցրած, դուրս յեկավ սենյակից —  
կարգադրություն անելու Բենոյին ազտախուռ մասին :

— Ուրեմն ընկերներ, — ասաց նախադահը նրա  
գնալուց հետո, — ստրատեգիական դրությունը պարզ  
է...

— Ի՞նչ դրուժյուն տապել՞ք, ընկեր Սարգիս, —  
խոսքը կտրեց Պետրոսը:

— Առջինչ, — Բարոսաց նախագահը — ուզում եմ  
ասել. դրուժյունը ձեր դյուզում ինձ համար պարզ է,  
այն բոլորն է հետս, ինչ վոր դուք ինձ պատմեցիք:  
Կուլակները, ոգովել են խառն դրուժյունից, յերբ թու  
լացել եր դյուզի ղեկավարությունը: Մինասը ղիմակ  
է դրել դեմքին, մոտ բարեկամ ձեվացրել, ու ներս  
սպրդել մեր շարքերը, բայց զուտով այդ ղիմակը պա-  
տավեց. դեռ վուրը չամբացրած — քարին դեմ ընկավ:  
Պարզ է, վոր կարող ենք հարց դնել, նրան մեր շար-  
քերից հեռացնել, իսկ այժմ անցնենք դործնական խըն-  
դիրներին — մենք պետք է անպայման վաղը սկսենք  
թե արխի մաքրել, և թե կոլլոզի աշխատանքները...

Պետրոսը մոտեցավ նախագահին և սկսեց փոփոխ  
նրա ականջին Մինասին հեռացնելու մասին: Նախա-  
գահը գլխի շարժումով համաձայնության նշան եր  
տալիս:

Գուռը բացվեց և ներս մտավ Բենոն, իսկ նրա յե-  
սեվից Մինասը:

Իսրով ձեզ, — ասաց Բենոն, դեմքը խոփուած,  
ու լուռ կանգնեց:

— Ընկեր Բենոն, բարև. շատ ցավում եմ, վոր ձեզ  
հետ այգուկս են վազվել. ձեր դործն առանձին զննու-  
թյան էղնենք. նստեցե՛ք, մենք խոսում ենք դարնանա-  
լին աշխատանքներն սկսելու մասին:

— Ձե՛, ընկեր նախագահ, յես չեմ նստիլ դասա-  
կարգային թշնամու մոտ, նրա հետ խորհուրդ չեմ  
անիլ:

— Ո՞վ է ետեղ դասակարգային թշնամին, —  
հարցրեց նախագահը, թեպետ գիտեր, թե ո՞ւմ է ակ-  
նարկում Բենոն:

— Ա՛յ սա յա, — ասաց նա — ձեռքով ցույց տալով  
Մինասին:

— Գասակարգային թշնամի ել ես, հակա ել ես.  
դո՛ւ ես մեր դեղի զանդողը, — վրա տվեց Մինասը:

— Ա՛յ, ետը կերեա, ո՞վ ա կուլակների հետ մեր  
ընկերների աշխատանքը կործանում: Մենք քո յերեսը  
եսոր կսարգենք...

— Գուռ քո յերեսը սրարդ արա. դո՛ւ յես մեր խոր-  
հրդային կարգերը խանգարում, ինքնագլուխ իշխա-  
նություն ես բանացնում:

— Վերջը մոտեցել ա, լեզվիդ ես դու տալիս. բայց  
դե դուրս չի գնալ ասածդ, — տակդ շատ ա թաց...

— Ի՞նչ ես բերանդ շաղ տալիս: — Ես մարդը յեկել  
ա շրջանից, վոր քու ակել-սրակա խոսքերը լսի՞...

— Ձե, ներողություն կանես, սա յեկել ա, վոր  
քեզ պետ յերկու յերեսանի թշնամուն մեր միջևը հա-  
նի... Բա ի՞նչ է յիր կարծում — մեր ընկերները մեռած  
ե՞ն...

— Ընկեր նախագահը շատ լավ ա հասկանում, թե  
ո՞վ ա խառնակիչը:

— Խառնակի՞չը, — հա յես ձեզ պեսների խառնակիչն  
եմ. դու հենց իմանում է յիր խորհրդային իշխանությու-  
նը վերջացավ. չե՛ շատ սխալ ես...

— Ընկերներ, յես առաջարկում եմ վերջ տալ  
մասնավոր խոսակցություններին, — միջամտեց նախա-  
գահը:

Յերկուսն ել լռեցին: Մինասը սիրտ առավ, կար-

ծելով, թե նախադասը նկատողութունն է անում միայն  
Բենոյին: Նա ուզում էր նորից առաջարկել նրան—գալ  
իրենց տուն, «հանգստանալու» (նա արդեն տանը պատ-  
վիրել էր ճաշ պատրաստել), բայց այդ բոլորներն դու-  
ռը բացվեց և ներս նայեց իր քարտուղար Սողոմը,  
իսկ նրա յետևից նախկին խանութպան Պողոսը:

Մինասը շտապով դուրս յեկավ, վորպեսզի նախա-  
գահի ականջը չընկնի, թե ինքն ողնում է մասնավոր  
խանութպանին:

—Ի՞նչ էս հետևիցս ման գալիս, չարացավ, նա Սո-  
ղոմի վրա,—տեսնում էս դործ ունեմ, կենդրոնից  
մարդ ա յեկել...

—Հա, յես չեի խմանում... հնարեց Սողոմը:

Մինասի դուրս գնալուց հետո նախադասը նորից  
չարունակեց.

—Ընկերներ, ուրեմն,—կրկնում էմ—առաջար-  
կում էմ վաղն անմիջապես սկսել արխի մաքրելը և  
կոլխոզի աշխատանքները. դուք այսոք յերեկոյան կգը-  
նեք այս հարցը կոխողի ժողովում և ինձ կհայտնեք:  
Համաձայն ե՞ք:

—Համաձայն ենք, ասացին բոլորը:

—Այնուհետև անհրաժեշտ է ընտրել մի ղեկավար  
վաղվա աշխատանքների համար.—յես առաջարկում  
եմ ընկեր Բենոյին, դեմ վոչ վաք չկա՞—Ուրեմն, ըն-  
դունվում է: Գործը պետք է կաղմակերպել խիստ դիս-  
ցիպլինար կարգով. այժմյանից պիտի հրահանգել, վոր  
խմացնեն աշխատավորներին:

—Խնդրում էմ դուք կարգադրեք,—ասաց Բենոն,—  
Մինասը կարող է մեր գործը տապալել:

—Լա՛վ. այդպես էլ կանեմ: Ընկերներ, ինչ վերա-

բերվում է մյուս խնդիրներին—բջիջի վերականգնման,  
և սոհասարակ ղեկավարման,—հետո Մինասի հար-  
ցին—դրանք կգնան շրջկոմի գծով:

—Ընկերներ, յես առաջարկում էմ հենց հիմա դը-  
նենք նրան հեռացնելու հարցը,—նորից առաջարկեց Բե-  
նոն.—վաղվա աշխատանքների ժամանակ յեթե նա  
ելի լիազոր, կամ կոլխոզի նախագահ մնա, յես ինձ  
մեռած կհամարեմ...

—Բայց դրա համար պիտի ժողովներ անել, իսկ  
դա ժամանակ է պահանջում:

—Ինչո՞ւ: Հենց վաղը աշխատանքներից առաջ կա-  
րելի յե միտինգ անել, և այդ հարցը դնել:

—Աշխատանքից առաջ խոսելը լավ բան չի: Գուք  
կարող եք այս յերկու կոլխոզի անդամները ժողով հրա-  
վիրել և նրան կոլխոզից հեռացնելու հարցը դնել: Ու-  
րեմն, ընկերներ, վերջացնենք. կարծում էմ, վաղը առա-  
վոտ մենք կլինենք արդեն աշխատանքի վայրում...

—Հա՛, հա՛ կլինենք անպատճառ, ասացին բոլորը:



Հարսանիքի իրարանցում էր տիրում արխի յերկա-  
րությամբ, սկսած կոլխոզի այգուց: Բահերը ձեռքին  
չարվել էյին գյուղացիները: Կոլխոզիկների խումբն այ-  
դում վար էր անում: Զուռնան նվագում էր «կոխի» յե-  
ղանակը, վորը պարի նման կոներն էր ընկնում, աշխու-  
ժացնում աշխատանքը: Կարծես մեկ մեկու հետ մրցման  
մտած—բոլորը յեռանդով մաքրում էյին արխը, հողի սև  
ձմբերով բարձրացնելով նրա ափերը:

Կուլակներին դատել էյին ընդհանուրից, ու ամեն

մեկին դասավորել վորոշ տարածութեան վրա, ամեն մեկին իրեն բաժինը տվել,—ինչպես ասում էյին—անհատական տուրք էյին նշանակել—խոհ նրանց կառավարիչ էյին դրել Մինասին:

Շրջագործ կոմի նախագահը կանգնած էր բենոյի հետ, կոլխոզի աջուժ: Նրանց մոտեցավ գյուղի դարբինը, յեր կու բահ ձեռքին:

Տ

—Համեցեք, հընգեր, ես բահն ել քեզ համար եմ բերել,—ասաց դարբինը.—ձեռքդ միշտ շինարար ըլի. իսկ ովոր ես կոլլեկտական գործին հակառակ աս, թող նա չքվի, հեռանա մեզանից .—

—Շնորհակալ եմ, ընկեր, կաշխատեմ լավ բանել,—պատասխանեց նախագահը, ընդունելով բահը:

Դիմացից,—արխի ափին կանգնած կոմյերխորը, վորը լսում էր այդ խոսակցութունը, ձայն տվեց.

—Ա՛յ դու կեղծավոր դարբին.—դուքը քահանա, տանը սատանա. քեզ ել հարկավոր էր կուլակների հետ աշխատեցնել: Ա՛յ թե դոփում ես ե. մի ասեղի չափ բան ես շինում, մի տուն փող ես ուզում:

—Բալես, սուս կաց, հարսանիքին հաշիվ—հուջաթ հեն անիլ. հիմի ել ես ամի շարաթ աս, արտեղ ենք դառել, ել ի՞նչ ես ուզում:

—Ի՞նչ արտեղ, հավաքել ես բարեկամներիդ, թե միամ արտեղ աս...

—Բալես, քու հերը սուս ու փուս մարդ էր, դու եդ ո՞ւմ կողմն ես դցել:

Ասաց ու անախորժ խոսակցութունից հեռացավ:

Նախագահը բահը հրացանի նման ուսին դրած, բենոյի հետ անցավ արխի ափով. ամեն տեղ նրանց հանդիպում էյին «կեցցեներով». ցնծումի մի ալիք անցավ աշ-

խատողների մի ծայրից մյուսը: Յերբ նրանք մոտեցան կուլակներին շարքին, Մինասը բահի վրա հենված, գլխիկոր կանգնած էր արխի մոտ:

—Ընկեր նախագահ, ասաց բենոն,—են որը, վասր յես յեկել էյի ետեղ աշխատելու, Մինասն ինձ ասում էր—դու քանի՞ գլխանի յես, վոր ետեղ բանում ես. հիմի ձեզ եմ հարցնում—յես ի՞նչ ասեմ—քա՞նի գլխանի յես:

—Հիմի հաղար գլխանի յես, ընկեր բենո:

Մինասը աչքի տակով խեթ նայեց բենոյի վրա, բայց վոչինչ չասաց:

Նրանք հետ դարձան նույն շարքերով, նույն ցնծադին կեցցեների միջով ու մոտեցան կոլիպնիկների խմբին:

—Ընկեր նախագահ, ետոր մեր կոլխոզին տասը հոգի անդամադրվեցին, ասաց Պետրոսը:

—Ընկերներ, դուք պետք է շարունակ ալեկացնեք ձեր անդամների թիվը և աշխատանքը կանոնավորեք, դուք պետք է արդարացնեք մեր ծրագիրները...

—Միշտ պատրաստ, ձայն տվին բոլորը:

Նախագահը սկսեց բահով աշխատել նրանց հետ. բենոն հետևեց նրան:

—Արա բե՛նո, —հարցրեց բարձր ձայնով Պետրոսը:

—Ի՞նչ աս:

—Արա վոր Մինասը քեզ են որը աշխատելիս տեսավ, ի՞նչ ասեց:

—Ասեց,—քա՞նի գլխանի յես, վոր ետեղ աշխատում ես:

—Բա դու ի՞նչ ասիր.

—Ասի դնա խալխին հարցրու : Հիմի նախագահն ա-  
տու՞մ ա—հաղար գլխանի յես .—

—Հազա՞ր—ա՛յ կեցցե մեր Բենոն :

—Կեցցե՛ , կեցցե՛ , կրկնեցին են մյուսները :

Ձուռնան նվագում էր , ժամանակ առ ժամանակ  
անդը փոխելով : Դարբինը , վոր մի քիչ խմած էր , ինքնա-  
կոչ խրախուսողի գերն իր վրա վերցրել : Նկատելով  
յերկու յերիասարդ , վորոնք «կոխի» յեղանակից վողե-  
վորված դուրս են յեկել շարքից ու կոխ բռնել , դարբինը  
լահի կոթով թեթեվ խիեց նրանց ասելով .

—Ա՛յ անպիտաններ . ես ա ձեր աշխատելը . կորեք ,  
արիւր մտեք :

Տղաները յենթարկվելով նրա «հրամանին» արխն են  
մանում : Դարբինը անցնում է առաջ , խրախուսելով ա-  
մենքին .

—Ա՛յ տղերք ջան , ա՛յ դոչաղներ , ով լավ աշխատի ,  
նրան սիրուն հարս կընկնի :

—Եդ ի՞նչ ասացիր ուստա , մեկ էլ ասա ,—հարցրեց  
ջահեխներից մեկը :

—Հը , զեֆդ—եկա՞վ . ամոթ քեզ , առանց կաշառքի  
չես բանում . . .

Տղաները ծիծաղեցին , իսկ դարբինը ինքն էլ սկսեց  
աշխատել :

Նախագահը կոլխոզնիկներից անցավ արխը , իսկ Բե-  
նոն նորից հետ ու առաջ էր գնում , շարքերի ուղղու-  
թյամբ : Ամեն տեղ աշխատանքը յեռուն թափով շարու-  
նակվում էր : Յերբ հետ դառնալիս նա նորից յերեկաց ,  
Պետրոսը հեռվից ձայն տվեց .

—Հե՛յ Բենո , հե՛յ . . .

—Հե՛յ ,—պատասխանեց Բենոն :

—Արա քանի՞ գլխանի ես :

—Հա՛ղար , հա՛ղար գլխանի յեմ , եհե՛յ . . .

Ծիծաղում էր Պետրոսը , ծիծաղում է յին կոլխոզ-  
նիկները , ու նրա յեռանդ առած—ավելի պինդ խփում  
վոսներով բահի թափչակին :

Բենոն ժպտում էր խոշոր կնճիռներով , ու զարմա-  
նում , թե ես վո՞նց յեղավ , ես վո՞նց շուռ յեկավ ամեն  
ինչ . . .

Ու չգլտեր Բենոն , վոր եղորվանից նրան կաշեւու  
յեր մի նոր անուն—«Հաղար գլխանի» . . .

1931 .

## Չ Ե Մ Ք Ի Ն

Մեկյանը դուրս յեկալ զափառական Չեկայի շենքից ու վարանոտ քայլերով իջալ սանդուխքներից, կարծես զարմանալով, վոր ազատ և թողնված :

Մտո մի ժամ նա ներսն եր, ու նստած նախասենյակի սլառուհանի առաջ, նայում եր դեպի բակը : Դուրսն աշունքիս պայծառ, մեղմ ուր եր : Սրավորյան թարմ, գուրգուրող արևը, ջինջ կապուտակ յերկկնքը, փողոցում խաղացող յերեխաների զիւ ձայները,—ամեն ինչ հուսադրում, ուրախացնում եր. սակայն Մեկյանի յերևակայության մեջ այս բոլորն ասես մի ընդհանուր հուզարկավորություն եր, ու ամեն մի ձայն հնչում եր վորոյես մահվան տխուր մեղեդի :

Նրան թվում եր, թե իրեն այլևս դուրս չեն թողնելու, իսկ հետո՞... ո՞վ դիտե... մտածում եր նա, չե՞ վոր հեղափոխության այս առաջին որերում ամեն ինչ կատարվում և շտապ, պատերազմական կարգով. կարող և պատահել, վոր իր մասին յեղած կասկածը փոխվի մեղադրանքի... կամ գուցե գործի մեջ կա մի «հրեշտավոր» մատնություն, վորից ազատվելու հնար չի գտնվի...

Վորքան ել նա աշխատում եր տալ իր մտայն մըտքերը, համոզում եր ինքն իրեն, վոր վոչ մի արատավորող բան չի սրել, բայց չեր հաջողվում.—հոռետես

զգացումների անխիբ նորից պտտվում եր ու խլացնում նրա գիտակցությունը :

Բայց ահա նրան կանչեցին հարցաքննության ու մի քանի բուպեյից հետո խորհրդավոր, մտայն քողն իջալ նրա աչքերից : Այն հարցերը, վոր սուղարկեց քննիչը, վերաբերում էին գլխավորապես պարենավորման բաժնի յերկու աշխատակիցների, վորոնց վրա լուրջ մեղադրանքներ կային (նրանք արդեն կալանավորված էին) : Իսկ իրեն, Մեկյանին, վերաբերող փաստերը աննշան և Իսկ իրեն, Մեկյանին, վերաբերող փաստերը աննշան էին—յերեք անգամ նա ըաց եր թողել միջերևներ վարելի բերանացի կարգադրությամբ, այն ել փոքր քանակով :

Յերը հարցաքննությունը վերջացալ և Մեկյանը շարժվեց դեպի մուտքը, նա զարմանք զգաց, վոր գործն այսպես քննաքնն ստացալ :

Անցնելով վերջին պահակի մտախ, Մեկյանն ուրախ, թեթև քայլեց փողոցով : Նա այժմ աղատ եր, կարող եր վերադառնալ իր աշխատանքին—պարենավորման բաժինը, բայց կարիք եր զգում միայնության—ինքն իրեն հաշիվ տալու իր կյանքի այս տարրինակ դեպքի մասին : Յեվ աննկատելի կերպով իր քայլերն ուղղեց դեպի քաղաքի ծայրը, ուր յերբեմն, ազատ ժամերին, գնում եր գրոսնելու :

«Պետք եր հանդիստ վերաբերվել գործին»—մտածում եր նա.—«ի՞նչ կարիք կար հուզվելու. պարզ և, վոր յես կանչված եմ իրրև վկա... իսկ ինձ վերաբերող այն փաստերը, իհարկե, վոչ մի վտանդավոր կեա չունեն.—վարիչը, անշուշտ, կհաստատի իմ ցուցմունքները, վոր իր կարգադրությամբ եմ արել...»

«Անուամենայնիվ անախորժ բան և թեկուզ փոքր մեղադրանքի տակ չինելը»—չարունակում եր նա իր մը-

աածմունքը. — «այսուհետև վոչ մի դեպքում չպետք է կատարել բերանացի կարգադրությունները. — ավելի լավ է բյուրոկրատ անվանեն, քան թե մեղադրանք բարձեն վրադ... չե՞ վոր հենց այս հանգամանքը, վոր ինձ կանչում են հարցաքննության, արդեն բավական է, վոր սովեր ձգի իմ անվան վրա: Յեթե իմ տեղ մի գյուղացի լինեք, փեչը թափ կտար ու կերթար իր դործին, իսկ յես ինտելիգենտ եմ, ու պատվազգաց — այս փոքր դեպքն էլ բավական է, վոր ինձ վիրավորի»...

Հանկարծ մի հիշողություն առեղի նման ծակեց, ցնցեց նրան. նույնիսկ ստիպեց վայրկենապես կանգ առնել փողոցում:

«Ինչպե՞ս է, վոր մոռացել եմ»... անցավ նրա մըտքով:

Նա հիշեց, վոր միքանի անգամ ընթրիքի յե հրավիրվել այն յերկու մեղադրվող աշխատակիցների կողմից: — «Ինչպե՞ս է, վոր չեմ նկատել... չե՞ վոր ինձ համար պիտի սարդ լինեք, վոր այդ ճոխ ընթրիքները կասկածելի եյին, «պահետի հաշիին» եյին...»

Ճիշտ է, Մեկյանը հեռացավ այդ յերկուսի ընկերությունից խորթ զգալով իրեն նրանց չըմանում, բայց ո՞վ կհատմտա, թե ինքը լուի պատահական հյուր է յեղել, և վոչ նրանց ընկերը, մանավանդ, վոր այդ յերկուսն էլ կարող են դիտավորյալ ցուցմունքներ տալ ու իրեն խառնել զործի մեջ:

«Ինչ վիրավորական եյիր համարում նույնիսկ թեթև կասկածը, — կշտամբում եր նա ինքն իրեն, — «բայց ի՞նչու չձեռք մտավոր բարրձությունը» իր ընթույն պատվազգացությունը չեր դործադրում այն ժամանակ, յերբ այդ բոլորը կատարվում եր...»

Նորից կանգ առավ: Ահա ուրիշ փաստեր էլ են դուրս լողում իր հիշողությունից. — յերկու թե յերեք անգամ նրանք, այն յերկուսը, միթերքներ են բաժանել վերին շերտի ծառայողներին (վորոնցից և Մեկյանին) իբր թե ինքարժեքով, բայց փաստորեն չնշին գներով, համարյա ձրի:

«Անշուշտ, այս բոլորը հայտնի յե Չեկային, գուցե և ավելին, և միայն յես եմ ուշացած պեղումներ անում հիշողությանս մեջ... իսկ յեթե ինձ չեն կաշնալորել, դա էլ դիտավորյալ է — ինձ առժամանակ հանգստացնելու համար»...

Ու մի առանձին, հիվանդոտ բավականությամբ նա քչիորում եր մոտ անցյալը, նորանոր փաստեր վնասեց լով ու խտացնելով ամեն ինչ: Նրան թվում եր, թե այդ փաստերն անթիվ են և ինքը միայն մի փոքր մասն է հիշում:

«Այո, յես արդեն ցանցի մեջ եմ», — մտածում եր նա, կարծես տենդով բռնված. «յես ընկել եմ բարոյապես, իսկ դրանից հետո ի՞նչ միտք ունի Փիլիքական գոյությունը... Այս հանդիսավոր որերին, յերբ յերկիրը թևակոխում է իր նոր կյանքը, յես, վորպես մի ոտար տարբ, դուրս եմ ձգվում»...

Ու նորից ինչպես մի ժամ առաջ, Չեկան պատկերացավ նրա յերեկվախոսության մեջ իր խորհրդավոր դեմքով. — նրան թվում եր, թե մի դույզ աչքեր, անթարթ սևեռած, հետևում են վոչ միայն իր շարժումներին, այլ և թափանցում են իր ներսն արկածող մտքերի մեջ...

Դուրս գալով դաշտը, Մեկյանը քայլում եր մոլոր, անորոշ ուղղությամբ: Քանի հեռանում եր քաղաքից,

այնքան ավելի յեր համակվում չըջատի հանդստու-  
թյամբ: Աչնան կանաչները մի թարմացնող բուսմունք  
էլին բերում, ու նրա տենդոտ, մուսյլ մտքերը մանրիկ  
փետուրների նման մեկ-մեկ ընկնում էլին քայլերի հետ:

Ու յերկար թափառելուց հետո նա հողմած ջրե-  
րով, հանգած մտքերով վերադառնում էր քաղաք:

\*\*\*

Փողոցով անցնելիս նրա ականջին հասավ ավտոյի  
յերկար սուլոցը: Յետ նայելով, տեսավ մի ծանոթ  
դեմք: Սանթուրյանն էր, իր դպրոցական ընկերը: Մեկ-  
յանը կողեր չերեալ նրան, բայց արդեն ուշ էր. Սան-  
թուրյանը նկատեց, և ավտոն կանգնեցնելով, ձեռքով  
հրավիրեց:

— Ես վո՞րտեղից վորտեղ,— հարցրեց Սանթուր-  
յանը, մի անգամից խոսեցնելով իր ամբողջ դեմքը կեն-  
սուբախ ժպիտներով ու աչքերի աշխույժ փայլով:

— Այստե՞ղ ես աշխատում:

— Այո:

— Յերեկոյան արի մոտս. դորձ ունե՞մ... Յեկ նա  
հայտնեց իր բնակարանի տեղը:

— Լավ, կգամ:

Ու նորից սլացավ ավտոն, յետևից խիտ փոշի բար-  
ձրացնելով: Մեկյանը նայում էր ու մտածում, թե ի՞նչ  
ճարպիկ միջոցներով Սանթուրյանը կարող էր բարձ-  
րացնել իր դիրքը:

Սանթուրյանին նա համարում էր «տափաղություն»,  
միջոցների մեջ խտրություն չունեցող, մի կարյերիստ,  
բայց ո՞վ գիտե, նա գնաց Սանթուրյանի մոտ:

Յերբ ներս մտավ մեծ սենյակը, նկատեց, վոր սե-

ղանի մոտ, նստած էր մի ուրիորդ, վորին Մեկյանը ճա-  
նաչում էր— նա լուսբաթնի աշխատակից էր:

Սեղանի վրա անկարգ ու առատ սփռված էլին ու-  
տեեղեն ու խմիչքներ:

— Ա՛... բարեկ, բարեկ,— բացականչեց Սան-  
թուրյանը, վեր թռչելով տեղից.— Ինչդե՞մ ծանոթա-  
նաք ընկեր Նուշիկի հետ:

— Մենք արդեն ծանոթ ենք,— պատասխանեց Մեկ-  
յանը, ձեռք մեկնելով ուրիորդին:

Նստիր տեսնե՞ք, եղ ինչո՞ւ ծոմ պահող արեղայի  
նման նիհարել ես:

— Յես միշտ այսպես եմ յեղել, իսկ դո՞ւ, այ քո  
բանն ուրիշ ե,— ասաց Մեկյանը հիվանդոտ ժպիտով:

Համեմատելով իրեն Սանթուրյանի հետ, Մեկյանը  
ճնշվում էր, ինչպես ճնշվում է շատ կարճ մարդը շատ  
յերկար մարդու մոտ: Սանթուրյանի կլոր, ամբլած,  
թարմ դեմքն այնքան լիքն էր, վոր թվում էր, թե նրա  
ավելորդը թափվելու վրա յե:

— Մի ասա տեսնենք, վո՞նց ես ընկել այս աշխար-  
հը,— հարցրեց Սանթուրյանը:

— Եհ, հիմա ել կհարցնե՞ն, թե վո՞րտեղ ես. ուր  
քամին տանում է, ենտեղ ել գնում ես:

Մեկյանն իրեն դգում էր անհարմար դրության մեջ,  
վորպես մի ավելորդ հյուր, վորը խանդարում է նրանց  
ինտիմ ժամանցը:

Ուրիորդի աչքերում, նրա խանդարված չրթունք-  
ների վրա մի ամոթխած, մեղկ արտահայտություն  
կար: «Պատահական է սրանց հանդիպումը, թե՞ դուցե  
վաղուց են ծանոթ»— հարցնում էր նա ինքն իրեն, հան-  
կարծակի յեկած այս անսպասելի զուգադիպությու-  
նից:

— Դե, Մելյան, ինչո՞ւ յես հեռու քաշվել. մարդ պետք է կյանքի սեղանին շատ մտա և շատ հիմնավոր նստի:

Մելյանը մոտեցավ սեղանին: Նա գզում էր, վոր բաշականություն և պատճառում իր նախկին ընկերոջը: Սանթուրյանի դեմքն ասում էր.— Ի՞նչ լավ է, վոր յես սրանից ա՛վելի բարձր դիրք ունեմ, չնայած վոր մենք մի ժամանակ միևնույն նստարանի վրա հավասար նստած էյինք...

— Ընկեր Նուշիկ, գիտե՞ս, սա իմ դպրոցական ընկերն է. շատ լավ աղա յե, բայց մի քիչ «իդեալիստ» է, այսինքն՝ փասնգավոր գրության մեջ...

— Մի՞թե, — ասաց որիորդը, — ասանց մտածելու: Որիորդի համար անսպասելի յեր Մելյանի դալը: Նա մտածում էր, թե ի՞նչպես ցույց տա, վոր ինքը Սանթուրյանի հետ մենակ չի յեղել սենյակում և յեկել է միայն զործով:

Նրան Ղրայնացնում էր Սանթուրյանի «տանավարի» վերաբերմունքը Մելյանի ներկայությամբ, նրա՝ հզպացած իշխանավորի հայացքը, վորը կարծես ասում էր, թե Նուշիկը նույնքան զին ունի իրեն համար, վորքան է սեղանի վրա փռած ուտելիքը:

Որիորդն աչքերով նշան արավ Սանթուրյանին ու պասպ.

— Աչտոն այստեղ էր. ի՞նչ յեղավ...

— Դուրս յեկավ, շուտով կգա. յերեկ ներքև, գավթումն է:

— Յեթե չի դալու, հեռաձղենք զործը վաղվան... յես կպնամ...

— Լավ, ինչպես կուզեք:

Յերկուսին էլ ձեռք տալով, որիորդը հրածեչա տվեց ու դուրս գնաց:

Մելյանը սեղմեց որիորդի տաքացած, փոքր ինչ քրտնած մատները, ու մի տխուր զգացմունք իջավ նրա վրա: Առաջին տեսնելու որից նա մի տարրերինակ սեր էր ամուսն դեպի այդ որիորդը, սակայն միշտ քաշվում էր արտահայտել այդ սերը սովորական, «վոչ բանաստեղծական» ձևով: Այժմ, յերբ նրա առաջ պատկերացավ Սանթուրյանի և նրա կապը, նրա սիրտը ճմլվեց, կարծես իր փայլալուստ վարդը ցեխի մեջ էյին ձգել...

Սանթուրյանը մինչև դուրը ճանապարհ դրեց որիորդին, ու վերադարձավ:

— Նու, հիմա մենք կարող ենք աղաս խոսել: Բայց նախ պիտի ասեմ, վոր քո անտարբեր վերաբերմունքը դեպի այս սեղանը միանգամայն անսխրոնիցմ է մեր որերում:

Նա լցրեց բաժակները կոնյակով:

— Դե խմիր. ես, նախ մեր հանդիպման կենացը:

Այսպես նա մեկ-մեկու յետեից խմացնում էր Մելյանին ու ինքն էլ հետը խմում ու դրոճում, վոր ուտի:

— Մի պատմիր, տեսնեմ, ի՞նչպես ես ընկել ես դավառը, — հարցրեց Սանթուրյանը:

— Վոչ միայն ընկել եմ դավառը, այլև ընկել եմ խաթի մեջ:

— Խաթեն հենց այն է, վոր այստեղ ես բուն դրել

— Ինձ Ձեկա յեն կանչել և մեղադրում են...

— Քե՞ղ, մեղադրում... չե, բարեկամ, քեզանից հանցավոր չի դուրս գալ. դա վիրավորանք է բնության դեմ:

— Ինձ մեղադրում են, վոր ապորինի բաց եմ թողել 20 Փունս միեքը:

— Ի՞նչ... քսան Փո՞ւնս... ուրեմն քեզ այդքան չնչին գնահատություն են տալիս...

Սանթուրյանի արհամարհական տոնը դիպավ Մեկյանի ինքնասիրությանը:

— Սկզբունքի հարց ե, —ասաց նա նեղացած, — միևնույն ե, լինի քսան, թե հարյուր...

— Սկզբունք. ի՞նչ միամիտ մարդ ես յեղել. բայց մի բան կարող եմ ասել—դու ինքդ ես սկզբունքների յետևից ման գալիս, և այդ պատճառով ել սկզբունքները քեզ սղմում են և քո կյանքի բարիքները դեղատան կշեռքով են չափում:

Սանթուրյանը դեմքի ինքնահավան արտահայտությամբ յետ ընկավ աթոռին:

— Քսա՛ն Փունս... դա վիրավորական ե նույնիսկ... նկատվում ե գավառական փոքր մասշտաբը... բայց նախ և առաջ ինքդ ես մեղավոր.— ի՞նչ ունես այս գավառում, այս մանր-մեղ մարդկանց բամբասանքների մեջ...

— Մի՞թե քո կարծիքով մի ուրիշը չեր կարող ընկնել իմ դրության մեջ, հենց թեկուզ կենտրոնում:

— Մարտողության հարց ե, սիրելիս.— մեկը կարող ե սարեր մարսել, մյուսը՝ ճխլվում ե մի փոքրիկ ավազաքարի տակ... վտանգավորը վոչ թե հանցանքն ե, այլ հանցավորի թուլությունը: Յեթե դու վախնում ես քսան Փունսից, ուրեմն քո չափը քսան Փունս ե...

— Կասկածում եմ... ասքանը կասեմ, վոր ուժեղ քամին վոչ մի արանք չի թողնում առանց այցելության:

— Վոչինչ, քեֆդ լավ պահիր, յես կխոսեմ Չեկայի նախագահի հետ, լավ տղա յե, պատերազմի ժամանակ միասին ծառայել ենք: Իսկ հիմա շարունակենք մեր քեֆը: Սրդեն միտում ե. սղասիր մի լամպը վառեմ:

\*\*\*

— Յերեկ պաշտոնական գործերով ես յեկել,— ասաց Մեկյանը կամենալով փոխել խոսակցության նյութը:

— Համարյա թե... բայց քեզանից չեմ ծածկիլ— մի ուրիշ պատճառ ել կա.— յեկել եմ որխորդին ազատելու.— նա յել ձեր գործի մեջ խառն ե...

— Մի՞թե...

— Չարմանում ես, չե՞... ճիշտ ե, որխորդի դերը փոքր ե, բայց դիտես ելի, խառը ժամանակ ե, կարող են նապաստակին ել նայնել:

— Յեվ դու հույս ունես նբան ազատելո՞ւ:

— Իհարկե, գլխավոր «հերոսները» որխորդին մոռացնել կտան:

— Մի անհամեստ հարց.— ի՞նչ կազ ունես այդ որխորդի հետ:

— Միամիտ հարց ես տալիս. ի՞նչ կազ կարող ե ունենալ խելքը դլխին մարդը գեղեցիկ կնոջ հետ...

Մեկյանը կծիվեց ներքին ցնցումից. նա լուռ նայում եր առաջի սեղանին:

— Բայց ի՞նչու յես հարցնում:

— Հենց այնպես, գավառացու հեռաքրքրություն ե:

Մեկյանն անթարթ աչքերով դիտում եր Սանթուրյանին:

— Ի՞նչ ես նայում:

— Յես պարմանում եմ, թե սա ի՞նչ դադանիք է կան մարդիկ, վորոնց առաջ հեշտությամբ են բացվում բոլոր դռները, վորոնց ժպտում են հիմնարկների դանձապահներն ու քարտուղարները... Ել չեմ առում կանայք...

— Սիրելիս, յես կարող եմ քեզ հետ անկեղծ լինել.— Իմ քաղաքականությունը շատ հին է ու փորձված, իմ լուրերն են—«աշխարհս դմակ, մարդն դանակ».— և յես հենց այդ դմակից բռնած դնում եմ ու նրա հետ ել պտտվում: Առաջիկա «ռեֆորմները» շատ սիրալիր եյին հեաս, նույնիսկ փնտռում եյին ինձ: Յեթե աջողվի ամբանալ և այս նոր ռեֆորմում, այդ դեպքում կարող եմ ասել, վոր յես ցանկալի հյուր եմ բոլոր ռեֆորմների... բոլորի մատակարարն եմ, թեպես գլխավորապես մատակարարում եմ ինքս ինձ... Յես հայտարարել եմ ինձ անփոխարինելի սպեց, վորը կարող է քսանուչորս ժամում աշխարհիս բոլոր մթերքները ժողովել, ահա իմ մանդատը...

Նա հանեց ծոցից մի խոշոր մանդատ, վորտեղ հիշված եյին նրա լիազորությունները՝ մթերքներ դնելու վերաբերությամբ:

— Հեղափոխության ժամանակ յերեխայի նման ամենքին հավատում են,—չարունակեց նա—իսկ մարդկանց խորելու արվեստը շատ հին և կատարելագործված արվեստ է... տեսնո՞ւմ ես ինչ լիազորություններ են տվել ինձ: Սովորիք, և ձգտիք կարյերի.— դա յե մարդուս պերագույն նպատակը...

— Կարչերի մասին խոսք լինել չի կարող. յես այն մարդկանցից եմ, վորոնք առվի վրայից թռչելու հա-

մար շատ հեռվից են թափ բռնում, ուստի և միշտ վերելում են:

— Հա՛, հա՛... յերևի թռչելու ժամանակ մտածում ես.—թռչե՞մ... վա՛յ թե թրջվեմ... հիմա տեսնում եմ, վոր դու իսկապես կյանքի մարդ չես: Դու պիտի նախ աչառովես այս գավառից, վորպեսզի կարողանաս «թռչիք» ունենալ: Պրծա՛վ, յես քեզ տանում եմ հետս... լավ պաշտոն կունենաս:

Մեկյանն աննկատելի վարակվեց այդ հաջողակ ու փարթամ կյանքի հեռանկարով ու համաձայնվեց:

— Յես պատրաստ եմ քեզ հետ գալու, բայց նախ այս գործին պիտի վերջ տաս:

— Անհող կաց, վաղը կիտեսմ Չեկայի նախագահի հետ: Ճանաչելով քեզ, յես հավատացած եմ, վոր ըս գործը յերեակայությունեղ մեջ է... Դեհ, վերջուր բաժանը, քո կենտոցը. հույս ունեմ, վոր կթողնես վերացական աշխարհն ու կիջնես այս հյուսիսի ու նյութալի յերկիրը...

Կես դիչերից անց եր, յերբ Մեկյանը դուրս յեկավ Սանթուրյանի մտոց ու կոնյակի ազդեցությունից խանդարված քայլերով դիմեց պեպի իր սենյակը:

\*\*\*

Յերկու օրից հետո Սանթուրյանն ու Մեկյանն ուղևորվեցին ավտոմոբիլով դեպի կենտրոն:

Աշնան գով առավոտը, ազատության զգացումը, «նոր կյանքի» սպասելիքները լցնում եյին Մեկյանի սիրտը մի անսովոր ուրախությամբ:

Յերբ անցան գլխավոր փողոցով, Մեկյանը դարմայտով Չեկայի շենքի հանդես տեսքից. նրա առաջ գավառական անդորությունամբ քլուջում եյին հավերք:

Մեկյանը հիշեց իր կասկածներն ու վախը և ամա-  
չեց ներքուստ:

«Յես ինքս եյի դատապարտում ինձ. յես ինքս եյի  
իմ Չեկան, ավելի խիստ ու անողոք, քան իսկականը.  
ասում եր նա մտքում:

Սահուն եր փափուկ ավտոմոբիլի ընթացքը, սա-  
հուն եյին ու հեշտածին նրա մտքերն ու հեռանկար-  
ները: Ահա նա յերեակայում է, վոր դուրս է կանդնած  
մի ամբողջ հիմնարկի, կամ մի ամբողջ գավառի, ու  
վարում է գործը լուրջ ու խոհուն: Նրա շուրջը ան-  
սովոր յեռանդ է, վորի կենտրոնը ինքն է: Ամենածանր  
աշխատանքը այդպես թեթե է ընթանում, ինչո՞ւ...  
«Վորովհետև Մեկյանի հոգին ձգտում է բարձր թռիչ-  
քի»...

Ավտոմոբիլը կանգ առավ պտույտի մոտ, սայլերին  
ձանապարհ տալու համար: Մեկյանը նոր միայն սթափ-  
վեց իր մտազբաղ դրուժյունից և ուշադրութուն դար-  
ձրեց Սանթուրյանի վրա:

Տարրինսակ փոփոխության է յենթարկվել նրա  
դեմքը—ակոսվել ու այլայլվել. հոնքերը կուտակած  
նա սևեռել եր միտքը մի ինչ վոր ծանր հարցի վրա:  
Սաստիկ մտահոգված, նա հանեց ծոցի դրպանից մի  
հեռագիր ու սկսեց կարդալ:

Հետո պահեց հեռագիրն ու նորից ընկղմվեց իր  
մտածումների մեջ:

Կարծես գզալով իր վրա Մեկյանի հայացքը, Սան-  
թուրյանը դարձրեց յերեսը նրա կողմը և խոլուն ըս-  
թափվեց, գդալով, վոր սխալ է արել, ցուցադրելով  
դեմքին իր գաղտնիքը: Իր ներքինը քողարկելու հա-  
մար, նա անմիջապես դիմեց հարձակման:

— Հը, Մեկյան, — ասաց նա փոքր ինչ սղված ձայ-  
նով, — ի՞նչ ես շատ մտածում. չե՞ս կարողանում մո-  
ռանալ քո սիրելի գավառը. մի տես է, ի՞նչ հիանալի  
բնություն է... Ծավարչ, մի քիչ կամաց քշի, լիա-  
նանը այս տեսարանով, — ասաց նա մեքենավարին:

Բայց արհեստական ուրախությունը չէր կաշուձ  
նրան:

Մի քանի բոպե լուռ դիտելով դիմացի տեսարան-  
ները, Մեկյանը հանկարծ հիշեց իր գործը:

— Բայց դու ինձ չպատմեցիր իմ գործի մանրա-  
մասնությունները... Վերջացա՞ծ է, թե՞ չէ:

— Ճիշտն ասած, յես չկարողացա տեսնել Չեկայի  
նախադահին, բայց գործն աջողեցրի հեղկոմի նախա-  
դահի միջոցով: Պարզվեց և այն, վոր նրանք քեզ ճա-  
նաչում են ավելի լավ, քան թե ինքդ քեզ. իհարկե, լավ  
կողմից:

Սանթուրյանը հանկարծ լռեց, ու դեմքը խոփո-  
ռեց, ասես ինչ վոր անախորժ բան հիշելով: Նա նորից  
հանեց դրպանից հեռագիրն ու սկսեց կարդալ. Մեկ-  
յանն ակամա նայեց ու նկատեց ուսերեն դրած «ոե-  
վիդիա» բառը:

Ահա թե ի՞նչն է նրան այլայլում... այս բոլորի  
պատճառը մի հատիկ բառն է—«ոեվիդիա»... Այո,  
Սանթուրյան, գործերդ վատ են... Յեվ յես հենվում  
եմ այս մարդու վրա, վորը դեռ կենտրոն չհասած,  
տապալվում է...

Ավտոմոբիլը պտույտի մոտ յերկար սուլեց:  
«Ռեվիդիա»... կարծես հնչում եր սուլոցի հետ  
ու սուր ասեղներով ծակում ականջները:

Սանթուրյանը նորից սթափվեց:

— Ոհ, ինչ դեղեցիկ բնություն է, մի նայիր ե՞,  
ասաց նա շինծու ձայնով:

— Այո, լավ տեսարան է, — ասաց Մեկյանը, իսկ մտքում շարունակեց.

— «Այո, գեղեցիկ ընտելյուն, բայց... «ոսկիր-գիւղ»...

— Կյանքի փոփոխությունը քեզ համար մեծ նշանակություն կունենա, — ասաց Սանթուրյանը, — շուտով կմտնես նոր շրջան... դու կլինես իմ քարտուղարը... դիտե՞ս, լինում են մի շարք գրություններ, յերբ անհրաժեշտ է մոտ մարդ... կան բաներ, վոր պետք է հայտնի լինեն միայն ինձ և քեզ... այդ դեպքում դու ինձ պետք է աջակցես...

«Կոմբինացիա»... անցավ Մեկյանի մտքով: Ուրեմն նա դեռ հույս ունի շարունակելու իր «իշխանությունը» և ինձ էլ իրեն քարտուղար է անում...

— Հետո մի ուրիշ հարց էլ կա... իբրև դադարիք պիտի առնեմ, վոր որիսորդի գործը կարող է բարդանալ, յեթե բացվի մի հանդամանք... անհրաժեշտ է՝ վոր դու յեյ նրան ոգնես... մանրամասնությունները չեմ ասում, հետո կխոսենք...

Մեկյանը հաղիվ էր գսպում ինքն իրեն. մի ատելություն, սուր դանակի նման կտրելով, ներս ընկավ նրա մեջը:

«Ուրեմն սա գենը է դարձրել որիսորդին և այժմ էլ ինձ է ուզում կապել իր մութ գործերը հետ...»

Հանկարծ նա բարձր ձայնով դիմեց մեքենավարին.

— Կանգնե՛ք, յես իջնելու յեմ այստեղ:

Մեքենավարը յերեսը կիսով չափ յես դարձրեց ու թեթև դանդաղեցրեց ընթացքը, սպասելով Սանթուրյանի կարգադրությանը:

— Ի՞նչպէս թե իջնելու, — դարձացած հարցրեց Սանթուրյանը:

— Մեր ձանապարհները իրար չեն բռնում, ինչպէս յերևում է քեզ ուրիշ տեսակ մարդիկ են հարկավոր:

— Յերեխայություն մի անիլ, ի՞նչ էս ասում, նստիր տեղդ:

— Չե՛, յես պիտի իջնեմ:

— Ի՞նչ պատահեց քեզ:

— Վոչինչ, չեմ ուզում հետդ գալ:

Սանթուրյանը հաղիվ էր գսպում էր դայուլթը, և ուզենալով խայթել Մեկյանին, ասաց.

— Գիտե՞ս ինչ, դու նման էս այն գրագրին, վորին բարձր պաշտոն է յին առաջարկում, իսկ նա ասում էր, — «չե՛, ավելի լավ է, ինձ մի արտագրելու բան տրվե՞ք»...

— Իսկ դու նման էս այն անանկացած ազնվականին, վորը հյուրերին հրավիրում է իր կարվածքն այն ժամանակ, յերբ այդ կարվածքն արդեն անուրդով վառաճված է...

— Ձուր էս կարծում... դա քո յերեվակայությունն է... յես քեզ չեմ աղաչում, քո կամքն է... միայն այստեղ անհարմար է, մոտակա գյուղում կիջնես:

Մեկյանը լռեց:

— Շափարչ, քչիր, գյուղում կկանգնեցնես...

\*\*\*

Յերբ նրանք կանգ առան գյուղի կենտրոնում, գյուղխորհրդի առաջ, այնտեղ կանգնած էր մի ուրիշ ավտոմոբիլ: Իջնելուն պես Սանթուրյանին մոտեցավ գինվորական խակին հազած մի յերիտասարդ, կողքին ատրճանակ կապած: Նա սառը, պաշտոնական տոնով հարցրեց.

— Դո՞ւք եք Սանթուրյանը:

— Այո, յես եմ :

— Հետեւեցեք ինձ :

— Ի՞նչ կա :

— Սյնտեղ, գրասենյակում կհայտնեն :

Սանթուրյանը հասկացաւ հենց առաջին հարցից, վոր իրեն «Ձեկա» են տանում, ու ցնցվեց, բայց ամեն կերպ աշխատում եր ծածկել իր հուղմունքը, մանավանդ Մելյանի ներկայութեամբ : Հպիւմ յերկու քայլ արած, նա հիշեց, վոր պիտի հրատեչտ տա Մելյանին և ասաց իր սովորական ասլոբով :

— Դե՛, գնաս բարով. յես քո մասին կհոգամ. ամեն ինչ կասեմ, դու կարող ես ասպահով լինել...

Մելյանը դառը ժպտաց. — «Դնում ե խեղդվելու և ինձ ուզում ե ազատել խեղդվելուց... այ քեզ կատակերգութուն»... մտածում եր նա, հետեւելով Սանթուրյանի քայլերին :

Յերխասարգը, շատ չանցած, նորից դուրս յեկաւ, Սանթուրյանի և մի ուրիշ աշխատակցի հետ : Նրանք յերեքով նստեցին ավտոն ու դնացին դեպի յերկաթուղու կայարանը :

Մի քանի րոպե Մելյանը տխուր հեզմանքով նայում եր հետեւից, մինչև վոր ավտոն թաղնվեց պտույտի յետեւը :

Այս մտադրաղ վերցնելով իր փոքրիկ կապոցը, արագ քայլերով դնաց նորից դեպի դավառական քաղաքը :

Գնում եր անարթինակ թեթեւութեամբ, կարծես նոր եր ազատվել ինչ վոր կաշկանդող, ծանր շղթաներից : Նույնիսկ ուրախ եր, վոր կտուք չեր հանդիպում և ստիպված եր վոտով դնալու :

«Զղվելի չե՞ր... ուզում եյի կապել կյանքս անց-

յալի դանդրենով վարակված մի կարյերիստի հետ... և ո՞ւր եյի ձգտում, ի՞նչ հանդիստ հանդրվան եյի փնտրում պատասխարվելու համար. — ո՞ւմնից, ինչի՞ց... նոր կյանքի՞ց...

«Այո, իմ մեջ ել կան հնի նեխված տարրեր... ժամանակ չե՞ վերաքննելու... ահա թե ո՞ւմն ե հարկաւոր սեվիլիան... ի՞նձ, ի՞նձ...

Գնում եր, հետզհետե արագացնելով քայլերը, ու իր մտքերն ել արագ հետեւում եյին իրար : Քայլում եր, տարված իր թափով : Առջևի դաշտերը, պուրակները, կարծես շտապով անցնում եյին ու կրկնում նրա հետ :

— Ռեվիլիբ'ա, Ռեվիլիբ'ա...

1929

## ՀԱՐՄԱՐՅԱՆԻ ՀՈՒՂԱՏԵՏՐԻՑ

### ՀՈՒՂԻՍ 18.

Ամառն է—չողի, փոշու և քաղաքի ամայութեան սեղոնը: Կնոջս ու յերեխայիս սպարկել էմ ամառանոց, մնացել մենակ:

Բնակարանս ասես շատ վաղուց մարդու յերես չի տեսել ու քարացել է իր սարք ու կարգով, նույնիսկ իրեղենների վրա նստած փոշիով: Ամեն ինչից յերևում է, վոր Մարդոյի ձեռքը բալական ժամանակ չի դիպել:

Ճաշից հետո դուրս եմ դալիս պատշգամբ ու նրստում մի հին, խարխուլ բաղկաթոտի վրա, վորը ժառանգություն է մնացել տանտիրոջից: Չարմանալի բազկաթոտ է—հենց վոր նստում եմ վրան, իսկույն ընկնում եմ անուրջների—յերազների մեջ ու վրաս իջնում է ներդաշնակությունը—«հարմոնյան»...

Յես, Հարմարյանս, շարունակ փայտաշուք եմ մեջըս այդ Հարմոնյան, վորը յերևում է աչքերիս վորպես անվրդով մի կյանք, փափուկ կահավորված բնակարանում,—վարդադույն լույսերի ու յերազային յեբաժշտութեան մթնոլորտում... վորտեղ իշխում է իմ պաշտելի, իմ չքնաղ Մարդոն...

Պատշգամբիս առաջ մի թոքախտավոր, վիրք ձգած թիկնի յե, բայց յես յերևակայում եմ նրա տեղ հովասուն անտառ, աղբյուրներով, թռչուններով... Ընկնում եմ մի յերջանկութեան աշխարհ, ուր վոչ ամառն է խայ-

թեւ, վոչ ձմեռը, ուր մարդիկ օպրում են առանց պարբարի...

...Բայց հանկարծ սթափվում եմ, և իմ ջնաշխարհիկ հարմոնյան խանդարվում է... Դիմացի բակից կանչում է աքաղաղը, թեկերը սպանալից թափ տալով, նրան պատասխանում է մեր բակի աքաղաղն իր գոռոց ու սհեղ ձայնով, և ահա սկսվում է նրանց տարրերնակ մենամարտը... Թվում է, թե կովի վոչ մի առիթ չեր կարող լինել, քանի վոր յերկու բակերը բաժանված են իրարից բարձր, տախտակե ցանկապատով. սակայն որակյան քա՛նի անդամ աքաղաղները մոտենում են ցանկապատի մեջ մնացած մի նեղ արանքի, վորից հաղիվ անցնում են նրանց գլուխներն ու սկսում են կատաղի կռիվն իր բոլոր կանոններով:

Նայում եմ աքաղաղներին ու ինքս ինձ հարց տալիս—կարո՞ղ է արդյոք ներդաշնակություն, հարմոնյա լինել այս կյանքում, յերբ նույնիսկ իրարից բարձր ցանկապատով բաժանված, իրար հետ վոչ մի առնչություն չունեցող արարածները կովում են այնպիսի թափով, կարծես աշխարհս պիտի բաժանվի նրանց մեջ...

### ՀՈՒՂԻՍ 22.

Յես, Հարմարյանս, իսկական հայ եմ,—ծնվել եմ Արարատյան դաշտի Հնաչեն գյուղում: Հայրս քահանա յեր, այն հին քահանաներից, վորոնք ուսում—խմում էյին յոթը մարդու չափ ու քնում այնպիսի խոմփոցով, վորից դողդողում էյին պատուհանների ապակիները:

Սակայն բնութեան թարս քմահաճուքով, յես, հորըս թողած,—ժողովանք եմ մորս վտիտ մառմինը: Պետք է խոստովանեմ, վոր յես աշխարհ եմ յեկել կիտակենդան, անձայն, և միայն տատմոր յերկար թափ

տալուց հետո ուշքի յեմ յեկիլ ու փոշտացել: Կարող եմ  
ասել, վոր այդ փոշտալն ու նրա հետ հարո. թյուն սո-  
նելը մեակ նշանավոր հեղափոխական ազատն է յեղել իմ  
կյանքում:

Դպրոցում յես «որինակելի» աշխնքն դժբախտ ա-  
շակերտներին եյի: Ուսուցիչները շատ անգամ աւում  
եյին չար աշակերտներին.

— Ա՛յ, որինակ առեք Հարմարյանից.—տեե՛ք,  
ի՛նչ խելոք է նստած...

Այդ հաճախ կրկնվող խոսքերն առիթ եյին ուրիս  
չարերին ավելի մեծ թափով բարձելու գլխիս ծաղրա-  
կան անուններ—նրանք յետեիցս կանչում եյին վանկերը  
ձգելով—«Ար-հա-մար-յան» ու հաճախ դմփում եյին:  
Ինչ ասել կուղի—այդ ծաղրն ու դմփոցը ավելի յե  
ազդում, քան ուսուցչի դոփասանքը.—ավելի կասեմ—  
յես ուրախությամբ կուգեյի չար լինել, նախանձում  
եյի նրանց Այդպիսով պարզվում է, վոր յես դեռ ևս  
դպրոցական հասակում նահասակվել եմ «առաքինու-  
թյանս» պատճառով:

Դպրոցն ավարտելուց հետո, յես ինչպես ասում են,  
կյանք մտա, աշխնք սկսեցի պաշտոնների շարանը: Մի  
առ մի նկարագրել, թե ինչպես յեղել եմ ուսուցիչ, քար-  
տուղար, վարիչ և այլն—միանշամա՛յն ճանճրալի յե:  
Սակայն, յես նախելով դեպի իմ անցյալը, նկատում եմ  
անտեղ յերկու աչքի ընկնող կեանք, վորոնք խոտում են  
հիշողությանս հետ. դրանցից մեկը հեղափոխությունն  
է, մյուսը—Մարգոյի յերեան գալը:

Փետրվարյան հեղափոխության սկզբին արյանս  
ոսկավաթիվ կարմիր բշտիկները շարժվեցին. վողեո-  
րությունս այստեղ հասավ, վոր ճառ արտասանեցի մեր  
հնաշենցիների հայրենակցական ժողովում: Բայց յերբ

յեկավ խորհրդային իշխանությունն ու ամեն ինչ սկսեց  
յերերալ, յես վախեցա ու կրիայի նման գլուխս պատ-  
յանիս մեջ առնելով, մնացի սպասողական դրության  
մեջ:

Սմեն մի ցնցումից հետո ասում եյի ինքս ինձ—«ա-  
հա այստեղ հեղափոխությունը կանգ կառնի, կհանդու-  
տանանք», բայց գալիս եր մի նոր ավելք, ու կարծես նո-  
րից սկսում ամեն ինչ... Վերջ ի վերջո յես համոզվեցի,  
վոր հեղափոխություն ասածը—շատ անհանգիստ բան  
է և չի սազում Հարմարյանին...

Քանի վոր բանը հասավ հեղափոխության, ընտան  
կլիններ հարց տալ, թե վո՞ր կուսակցությանն եմ պատ-  
կանում: Այդ կողմից յես մի յերջանիկ անսրբություն  
եմ—այսպես կոչված անկուսակցական եմ... յես ընտ-  
րել եյի ինձ համար միջկուսակցական մշուշային մի գը-  
րություն, վորը շատ հարմար է գալիս ինձ: Այդ է պատ-  
ճառը, վոր յերբ վեճի յեմ բռնվում ընկերոջս—Կորեկ-  
յանի հետ, նա սովորաբար ասում է, վորպս յեղրակա-  
ցություն.

— Քո հայացքները պարզելու համար անհրաժեշտ  
է մի հանձնաժողով հրավիրել...

Այնուամենայնիվ պիտի ասեմ, վոր յես ընդունում  
եմ սոցիալիզմը, վորպես ապագայի մեծ հայրմոյս...  
բայց յես վախենում եմ այդ մեծ հարմոյսայի ճանա-  
պարհին կորցնեմ իմ փոքրիկ հարմոյսան—իմ ընտանե-  
կան իգելիան, իմ Մարգոյին...

Մարգոյի յերեան գալն իմ կյանքի հորիզոնում մի  
կատարյալ հեղափոխություն եր ինձ համար: Յերեք ա-  
միս սիրահարված եյի և գտնվում եյի «վերացական» դը-  
րության մեջ: Տարրինակ ցանկություններ եյին գալիս  
մեջս—ինչպես հին բանասանդճներն եյին ասում—չսա-

վառնել ջինջ յեթերում»... «ննջել բնության ծոցում»...  
«գրկախառնվել անհուն տիեզերքի հետ»...

Վոզեորությունս այնքան մեծ էր, վոր նույնիսկ բանաստեղծություն գրեցի,—նվիրված Մարգոյին...  
Նրա առաջին տողերը մինչև այժմ մնացել են հիշողությանս մեջ—

Ո՛վ Մարգո,  
Մարգո,  
Միրում եմ քեզ  
Խոնարհ ու հեզ...

Մի օր ել, այդ վերապայ տրամադրության տակ, ամառանոցի փողոցով անցնելիս, տեսնելով մի հորթ, բուն կարոտով համբուրեցի նրան...

Իմ ընկեր կորեկյանը, չունենալով իր ներսում հարմոնիա, սիրահարությունը համարում էր խելագարություն, իսկ հորթին համբուրելը—հայրական դպրոժունքների արտահայտություն:

Այո, Մարգոն...

Յես չմ կարող հանգիստ կերպով արտասանել այդ անունը... Այժմ նա իմ կինն է, և պարզեւել է ինձ Սեդիկին... Յես շարունակում եմ սիրել նրան, թեպետ և վոչ առաջի բուն «եկացեաներով»—վրասնավորներով ու հորթերին համուրելով, բայց նա կազմում է իմ փոքրիկ իդիլյան, վորի մեջ յես զգում եմ ինձ—ինչպես բանաստեղծներն են ասում «յերջանկության վորրանում»...

ՀՈՒԼԻՍԻ 26.

Այսօր ձիշտ վոր ձախլիկ սր էր:

Հենց առավոտից զօրծս թարսվեց: Անցյալ յերեկոյան կոչիկներս հանձնել էյի նորոգելու և «լուրջ» պատ-

վիրել կոչկաւարին, վոր բերի այսօր, դործի գնալուց մի ժամ առաջ:

Առավոտը վեր կացա, թեյ խմեցի: Պատրաստվեցի պնալու, բայց կոչկաւարը դեռ չկար: Նշանակած ժամանակն անցավ. արդեն պարզ էր, վոր պիտի ուշանամ: Սկսեցի ջղախնանալ.—դուպլաները հազիս անմխ քայլում էյի սենյակում ու թունդ խոպեր առաքում կոչկաւարի հասցեյին:

Վերջապես, յերբ ջղերս արդեն կապը կտրել, վերվեր էյին թուչում, դուռը հանկարծ բացվեց ու ներս մըմտավ կոչկաւարը: Յես արդեն պատրաստվել էյի շանթ կայծակ թափել նրա գլխին, բայց մի ակնթարթում չըգիտեմ ինչպե՞ս յեղավ, վերցրի կոչիկներս ու ասացի մեզմ: Հարմարյանին հատուկ ձայնով.

— Ծնորհակալ եմ...

Կոչկաւարը նայում էր զարմացած: Նա ուզում էր պատճառարանել, թե ի՞նչու յե ուշացել, բայց յես լուռ ցույց տվի մատով սեղանի անկյունը, վորտեղ դրած էր փողը: Նա վերցրեց և, շորհակալություն հայտնելով, դուրս գնաց:

Յերբ կես ժամով ուշացած ներս մտա մեր հիմնարկը, քորտուղարը նայեց ինձ դեմքի մի առանձին արտահայտությամբ, վորը նշանակում էր և նկատողություն և մի ներքին ուրախություն: Նա հանեց ժամացույցը, նայեց ամբլի յերկար, քան թե անհրաժեշտ է, ու կարծես քթի տակ նշանակեց իմ ուշանալը: Թվում էր, թե նա ասում էր.—«ընկեր Համբարյան, մենք ի նկատի կունենանք ձեր ուշանալը, վորպես «նյութ», յերբ կգա հօրմար մոմենտը»...

Ինձ համար պարզ է, վոր նա ինձ ասում է, քանի

վոր յես նրան խանդարում եմ... նա ուղում է ինձ «կըր-  
ճատել», իմ պաշտոնը միացնել իրենին, իսկ հետո այդ  
առիթով ավելացնել իր ոտճիկը:

Յես, իհարկե, աշխատում եյի ցույց տալ, վոր ինձ  
համար վոչ մի նշանակութուն չունի նրա մեծ զթի  
«արտահայտութունը». բայց պետք է խոստովանեմ—  
այդ ինձ դժվարությամբ եր աճողվում—կյանքում դե-  
րասանութուն անելն այնքան ել հեշտ բան չէ:

Հաղիվ մի ժամից հետո, յերբ հանդատացել եյի ու  
խորատուղվել գործի մեջ, մի նոր անակնկալ դարձյալ  
ինձ տեղահան արեց: Հանկարծ նկատեցի սեղանիս վրա  
մի թղթի կտոր, վորի վրա գրած եր—

«Հավը չի կարող թռչել, Հարմարյանը չի կարող  
կովել»...

Անտպատելի ալդ գրութունից այնպես ցնցվեցի,  
ասես ինձ ապտակեցին: Դեմքս վառվում եր, ներսս  
փոթորկվում, վրեժի կանչում: Առաջին րոպեյին թը-  
վաց, թե քարտուղարի գործն է այդ, բայց շատ չան-  
ցած—կանգ չուս կոմյերիտ Սարգարյանի վրա—նա յի  
սիրում այդպիսի անտեղի հանաքներ...

Վճռեցի առայժմ վոչնչով ցույց չտալ, եթ կարդա-  
ցել եմ այդ «հավաքանութունը», սակայն իմ դժբախ-  
տութունը դրանով չվերջացավ. մի ժամից հետո մոտ  
յեկալ Սարգարյանը, արմունկներով հենկեց սեղանիս  
ու ասաց ժպտալով.

— Ընկեր Հարմարյան, դուք չափից դուրս շատ եք  
աշխատում, կարծես ուղում եք մի շարաթվա գործը  
մի որում կատարել... Զե՞ վոր դրանից ձեր որդանիդ-

մը կարող ե թուլանալ և կորցնել իր կովելու ընդունա-  
կութունը...

Նա չեշտեց «կովելու» վրա, անշուշտ, հիշեցնելով  
գրածի մասին: Յես թեպետ խաթվեցի, բայց աշխա-  
տում եյի ցույց չտալ Ղեմքիս:

— Վոչինչ, ասացի,—ներս ընկած ձայնով,—մի  
բիչ վոր ավել աշխատենք, մեզանից բան չի սրակսիլ...

Սարգարյանը լայնեբես նայում եր, իսկ յես հիմար  
գրության մեջ եյի,—չիոթվում եյի, չիմանալով ի՞նչ  
անել:

Ապա մոտեցավ մատենավարուհուն, ինչ վոր քըշ-  
վեցայ ականջին, վորից հետո սկսեցին ծիծաղել զսուբ-  
ված, ցածր ձայնով: Զգում եյի, վոր ինձ վրա յեն ծի-  
ծաղում, բայց լուծում եյի ու մտքումս սպառնալիքներ  
տալիս.—

«Յերկուսիդ վրեժն ել կհանեմ մի որ,—ասում եյի  
մտքումս. «յես ձեզ ցույց կտամ, թե ո՞վ եմ յես»...

(կգա՞ արդյոք այդ որը—հարց եմ տալիս այժմ,  
գրելուս մոմենտին, և նայելով «հոգուս պարունակու-  
թյանն» ասում եմ.—չա՞տ այդպիսի որեր ե նշանակել  
Հարմարյանը ու հետո մոռացել...):

\*\*\*

Ո՞վ կին, ի՞նչ է ջո անունը.—վերջ է վերջս կին...  
Հարմարյանի ոճորիզմերից

ՈԳՈՍՏՈՍԻ 10.

Մի շարաթ է չեմ գրել...

Այնքան փոթորկալից եյին անցած որերը, վոր  
Հարմարյանից ուժեղ մարդիկ ել կկորցնեյին հավասա-

բակչուութիւնը: Այժմ, հանդարտութեանց հետո, նորից  
ձեռք եմ առնում գրիչս:

... Այդ ուրը մեր հիմնարկում սովորական որ եր,  
և վոչ մի նշան չեր ցուցց տալիս, թե Հարմարյանի դժ-  
խին դժբախտութիւն է իջնելու:

Ժամը մտա յերկուսին հանկարծ սաանում եմ մի  
նամակ, կապույտ ծրարի մեջ, կանացի ձեռքով հասցե-  
ագրած:

Մրարը բացելով, նկատեցի, վոր անանուն նամակ  
և... ու տխրեցի սիրտս լքլքալով կարգալ:

— «Ընկեր Հարմարյան, — գրում էր անհայտը, —  
մինչդեռ դուք այրվում եք քաղաքի չողից, քայլում եք  
փոշոտ փողոցներով ու քաղցր յերպներ տեսնում ձեր  
պաշտած Մարգոյի մասին, — նա, ձեր իղեպակահան Մար-  
գոն, այստեղ յերջանիկ ժամեր և անցկացնում իր «հո-  
գու հասորի» հետ, ամատանոցի գոլ ու հովի, թարմ  
կանաչների ու բուրավետ ծաղիկների մեջ...»

«Նա» գալիս է ամեն որ և Մարգոյին մենակ է գլա-  
նում (յերեխային ուղարկում և հարեանուհու մոտ),  
իսկ այնուհետեւ... իմ գրիչն անգոր և նկարագրելու,  
թե ի՞նչ յերանափոտ ժամեր են անցկացնում միասին,  
ձեռք ձեռքի, շրթունք-շրթունքի...»

«Նամակս թողնում եմ անտորադիր... (ի՞նչ կա-  
րիք կա խոսովելու ուրիշի ընտանեկան գործե-  
րում...):»

... Այս բոպեյիս ել, յերբ արդեն մի շարաթ է ան-  
ցել, հուզմունքից գրիչս դուրս է ընկնում ձեռիցս...  
Իսկ այն ուրը այնպես չճեցի, կարծես սենյակի առաս-  
տաղը փուլ յեկալ գլխիս: Թվում էր, թե իսկույն վայր

կընկնեմ, ընդմիշտ հրաժեշտ կտամ կյանքիս, բայց այդ-  
պես չեղավ (բոս յերեկույթին, մա՞մնիս մեջ բավական  
հակաթույն է յեղել այդպիսի կատասարովիկ գրու-  
թիւններին դիմադրելու համար):

Յերկար նստած ելի անշարժ, արձանի պես ու նա-  
յում ելի առջևս թափված թղթերին, վոչինչ չնկատե-  
լով: Ներսս ալեկոծվում էր, խելագար տեսողով բռնիկ-  
ված, ու մի ձայն կանչում էր ականջիս — վե՛րջը, վե՛րջը  
և գալիս քո յերջանեկությանը, քո հարմարյանի...  
գուցե և կյանքին...»

«... «ի՞նչ... Մարգոն ինձ դախձանո՞ւմ է...  
ստում ելի ինքս ինձ... ուրիշի՞ն է սիրում... Չե՛, սա  
աշխարհի վերջն է... վրե՛ժ, ստեղծի՛ վրեժ...»  
«Մարգո, դու խորտակեցիր իմ կյանքը». բայց իմա-  
ցիլը, վոր յես ել մահվան դիրկը կենեամ քեզ — քո նոր  
«սիրո առարկայի» հետ... (Այս ասելիս յես յերեկու-  
կայում ելի ինձ թատրոնական հերոսի դերում, — սու-  
րը ձեռիս, վրեժի թույնը կրծքումս...):»

Ապստեցի մինչև պարագմունքների վերջը ու ներս  
մտա կառաարչիլի առանձնասենյակը: Կարծես յերազի  
մեջ ելի. խոսելիս ձայնս այնպես տարրինակ էր հըն-  
չում, ականջներս ծակում, ասես իմ ձայնը չէր, այլ մի  
ուրիշ, ոտար մարդու...»

Ասածիս միտքն այն էր, վոր կիսն ու յերեխաս հի-  
վանդ են, նրանց պահող չկա, անհրաժեշտ է դնալ ա-  
մառանոց դռնն յերեք որով:

Կատավարիչը համաձայնովից: Այդպիսիով ընկ-  
նված դեմքիս, ասաց:

— Վոչինչ, ընկեր Հարմարյան, շատ միջ մտածիլ. հիվանդութուն ե կզա ել, կանցնի ել...

Անմիջապես զնացի տուն, վերջրի պայուսակս ու ճանապարհ ընկա յերկաթուղով:

Վաղոն նստելով, կարծում էյի, թե փոքր փոքր ինչ կցրվեմ, բայց ընդհակառակը,—ջրերս սկսեցին սատանի պար... թվում եր թե շարունակ ընկնում էյի ակների տակ, ապա նորից դուրս գալիս, նորից գլորվում...

Մոտս նստած մարդիկ իրար հետ զրուցում էյին, սրախոսում, իսկ յես յերևակայությանս մեջ արյունարբու վաղր էյի դարձել.— շարունակ մտածում էյի սպանության մասին: Մեկ պատկերացնում էյի, թե ինչպես գնում եմ ամառանոց, ներս եմ մտնում... և տեսնում «նրանց» միասին, ու յերկուսին ել տեղնուտեղը սպանում... կամ սպանում եմ սիրեկանին, իսկ Մարգոյին թողնում, վոր կակձա ինձ նման...

«Գուցե և այսպես կլինի»—մտածում էյի: Իջնում եմ ամառանոցում, վոր մի նշանով չեմ ցույց տալիս, վոր մի բան զիտեմ, բայց գաղտուկ առաջ եմ տանում իմ հետախուզումը, պատելով Մարգոյի շուրջը անյերևույթ ցանցով: Վերջապես մի որ բացում եմ դաղտները... Մարգոն դալով, վոր ցանցի մեջ ե, թպրտում ե ու հուսահատորեն ընկնում, արցունքներով վողողում վտաներս, աղերսում, վոր ներեմ: Բայց յես անողոր ինկվիզիտորի սառնասրտութուն եմ սրահարանում,—վո՛չ մի գուլթ, վո՛չ մի զիջում չեմ ցուցադրում դեմքիս, միայն մտածում եմ իմ «գիվային» վրեժի մասին...

Մինչև գիշերվա կեսը այսպիսի սարսափելի տեսարանների մեջ շուռ ու մուռ դալով վերջապես քնեցի ու ընկա ավելի սոսկալի արյունալի յերազների մեջ.— սուրբ ձեռիս անցնում էյի անթիվ «դավերի» միջից ու մի սպանութունը հաղիվ վերջացրած, մյուսին եյի դիմում, թողնելով յետևիցս դիակների շարքեր...

\*\*\*

Առավոտը դարթեցի նախավերջին կայարանում, հոգնած ու ջարդված, սոսի ամբողջ գիշերը ծանր քարեր էյի կրել: Տեղ հասնելով, դուրս յեկա կայարան: Սառը, խոնավ ողից ուշքի գալով, կառք նստեցի, ու նոր միայն հիշեցի, վոր ասրճանակ չունեմ...

«Սպանել ես ուզում, և զենք չունե՞ս... մտածում էյի յես, յերբ կառքն անցնում եր ամառանոցի յերկար փողոցով.— դա միանգամայն ծիծաղելի յե... ուրեմն քո սպանելու ծրագիրը հենց այնպես, ի միջի այլոց ե»...

Յերբ կառքը կանդ առավ և յես իջա ներքև, հանկարծ մի սարսուռ ինձ կծկեց.— «Իսկ յեթե ներս մտնեմ ու տեսնեմ Մարգոյին նրա հե՞տ...»: Անցավ մտքով:

Մի քանի վայրկյան յես չզիտեյի ի՞նչ անեմ... Նույնիսկ մի անհեթեթ միտք ծագեց.— անմիջապես նստել կառք և գնալ կայարան, թաղնվել այնտեղ ու հետևյալ դնացքով վերադառնալ քաղաք...

Կառապանի ձայնից սթապվեցի. նա հանձնեց ինձ պայուսակս: Փողը վճարեցի ու դարձյալ մնացի տատնամունքի մեջ.— գնա՞մ, թե չընամ:

Նորից հիշեցի, վոր ասրճանակ չունեմ, հիշեցի իմ արյունարբու ծրագիրներն ու հեզնանքով ասացի մըտ-

քումս.—«խոստովանիր, Հարմարյան, վոր դու տոեղծ-  
ված չես արապիքական մամենտներ լուծելու հա-  
մար»...:

Վերջապես նկատելով, վոր դիմացի ամառանոցից  
յերկու որիորդներ դիմում են ինձ, յես անհարմար ըզ-  
գացի կանդներուց և ներս մտա մեր ամստանոցի պար-  
տեղը:

Հազիվ մի քանի քայլ եյի արել—հանկարծ աչքերիս  
յերևաց Մարդոն—Սեղիկին գրկած... Կարծես մի հըս-  
կայական բեռ իջալ ուսերիցս. ուրախացա, վոր կարող  
եմ առայժմ չմտածել սպանության մասին...

Իսկ յերբ Մարդոն մոտեցալ ինձ, մի տարրերնակ  
հրաթափություն յեկալ վրաս.—յես յերևակայում ե-  
յի, թե նա կկանգնի ատծա մի սուսնձին, «դիվային-  
դավադրական» դեմքով, «սև գաղտնիքից» աչքով աչ-  
քեցով... Բայց դրա տեղ իմ առջև յերևաց սովորական  
բնտանեկան Մարդոն, ամոթխած դեմքով, նույնիսկ մի  
տեսակ խեղճացած, ինչպես լինում են սովորաբար յեր-  
կար ժամանակ ամուսիններից դատված կանայք:

Մայր ու յերեխա ժպտալով, բացականչելով դա-  
լիս եյին պարտեզի ճառուղիով: Յես համբուրեցի Մար-  
դոնին, գրկեցի յերեք տարեկան Սեղիկին, համբույր-  
ներով շնչեցնելով նրան, ու դգացի, վոր մի վայրկյա-  
նում իմ սպանության դիտադրությունը թռչնեց աչ-  
նան տերեւների նման:

«Գուցե թյուրիմացություն և...» անցալ մըտ-  
քովս.—«մի թեթե համակրանք, քնկերական վերաբեր-  
մունք կարող էյին սիրո տեղ ընդունել... կամ գուցե  
մի ինտրիգ և «թնամու» կողմից—մեզ իրարից բաժա-  
նելու նպատակով»...

Սյուպես մտածում եյի, գուրգուրալով յերեխայիս  
ու ցրված ուշադրությամբ լսելով Մարդոնին, վորն  
աշխույժ շաղակբատում էր այնպիսի անմեղ ու միա-  
միտ անոնով, վոր չէր կարելի կատկածել, թե նրա մեջ  
կա վորեւէ կեղծիք կամ դավաճանություն:

— Եղ ի՞նչպես կարողացար գալ, Գուրգեն. մի՞ թե  
արձակուրդ ես ստացել,—հարցրեց Մարդոն քնքջորեն:

— Չե, ենպես, կարգից դուրս եմ յեկել. յերեք ու-  
րով արձակուրդ եմ վերցրել, շատ եյի կարոտել Սեղի-  
կիս...

— Իսկ ինձ չե՞...

— Քեզ ել, իհարկե:

— Գիտե՞ս, Գուրգեն, Սեղիկը շատ և ավերում ա-  
տանց թեզ. շարունակ թո անունն է տալիս:

«Յեթե իսկապես հանցաւոր ե»,—մտածեցի յես,—  
«ապա լալ տակտիկ և բանեցնում,—յերեխային և մեջ  
զցում, վորպեսզի փափկացնի ինձ»...

— Ուրիշ ի՞նչ կա. քաղաքում շոգ ե՞... վո՞նց են  
մերոնք... վրա յեր տալիս Մարդոն, յերբ մենք արդեն  
տանն էյինք:

— Աներևակալելի շոգ է,—ասացի յես,—չգիտեմ,  
ինչո՞ւ չափազանցելով շոգի աստիճանը:

— Գիտես, Գուրգեն, շատ դժվար է առանց քեզ...  
Մյուս տարի ինչ էլ լինի,—առանց քեզ վոչ մի տեղ չեմ  
դնալ: Հիմա չեմ, ճիշտն ասած, յերեխայի պատճառով  
եմ ետեղ, թե չե մի րոպե չեյի մնալ...

«Մա ել հավատարմության հավաստիքներն են»...  
մտածում եյի յես. «ինչպես և շեշտում «առանց  
քեզ»-ը... յեթե ճրագրված և տանում գործը, ապա  
պետք է ասել, շատ աջող ե»...

— Հետո, Գուրգեն, մի ուրիշ բան ել կա... կո-  
կետորեն, խոսված յերեկայի նման ասաց Մարգոն,  
իր գեղեցիկ, սև աչքերը ստատացնելով. (ո՛ր, այդ աչ-  
քերի առաջ յես հանձնեցի համարյա բոլոր դիրքերս)—  
չարունակ անհանդիստ եմ. ասե՞մ... ինչո՛ւ... մտա-  
ծում եմ... Թե իմ Գուրգենն ուրիշ կանանց հետ է ման  
գալիս, նրանց է սիրում...

Ու յերկու ձեռներով բռնելով գլուխս, Մարգոն խո-  
րը նայեց աչքերիս...

— Ասա, Գուրգեն, իսկի ուրիշներին չե՞ս սիրել...

— Ի՞նչ ես ասում, Մարգո... մի՞թե յես ինձ թույլ  
կտամ...

— Այժմ յան տղամարդիկ ուրիշ տեսակ են... գու-  
ցի դու յել նրանցից վարակիվել ես...

— Իսկ կանա՞յք... մի՞թե նրանք սպիտակ են:

— Հա, իհարկե, այդպիսի կանայք ել կան, բայց  
նրանք գծից գուրս են...

Ու կամենալով խոսքը փոխել, շտապով վրա բե-  
րեց.

— Ձե, Գուրգեն, յես քո աչքերից տեսնում եմ, վոր  
դու ինձ սիրում ես, ուրիշ տղամարդկանց նման չես:

Ասաց ու համբուրեց չրթունքներս այնպիսի գուր-  
գուրանքով, վոր շատերը կհամարեյին այդ տեսարանը  
**մեր ընտանեկան յերջանակության գագաթնակետը...**

Յես շարունակում եյի իմ «ներքին» մտքերի թելը—  
«ինքը նախահարձակ յեղավ, վորպեսզի կասկածներս  
թուլացնի»—ասում եյի ինքս ինձ. «Իսկ աչքերիս խորը  
նայեց հետախուզելու նպատակով—արդյոք լուրջ կաս-  
կածներ չունե՞մ իր դեմ... սա յել լավ տակտիկ ե՞»...

— Բայց ինչո՞ւ, Գուրգեն, եզպես դունատ ես, աչ-  
քերդ դեղնած... ու մի տեսակ ցրված ես...

— Վաչինչ. հոգնած եմ... դեչեբս չեմ քնել—վա-  
զոնում տեղ չկար...

— Այո, յես մոռացա, վոր նախաճաշիկ սխալ տամ  
Սեդեկիս... հանկարծ խոսքը կտրեց Մարգոն ու յերե-  
խային ինձ հանձնելով, սկսեց զբաղվել նախաճաշի  
սպասարաստութՅամբ:



Նոր եր Մարգոն կաթը դրել կրակի վրա, յերբ  
ներս մտավ ուսանող Գարիկը, ամառային, խորը դե-  
կորտեյով բլուզ հագած:

— Բարե ձեդ, —ասաց նա շփոթվելով, ըստ յերե-  
վույթին հանկարծակի դալով ինձ տեսնելուց:

Մարգոն իսկույն մոտեցավ նրան:

— Բարե, ընկեր Գարիկ, —ասաց նա կեղծ-քաղա-  
քավարի տոնով. — յերևի յեկել եք նամակ ուղարկելու  
Գուրգենի ձեռքով հա՞մ...

— Այո, նամակ ուղարկելու: Յե՞րբ եք գնում, —  
դիմեց նա ինձ:

— Յերկու սրից հետո, —սպաստախանեցի սառը,  
սրալառնական տոնով:

«Յերևի սա յե Մարգոյի սիրելին», մտածեցի ու մի  
ակնթարթում կասկածի ալիքները ներս խուժեցին  
մեջս: Յերեխային ցած դրի ու աչքի տակով շխտում  
եյի Գարիկին: Նա մեր ծանոթն եր. քաղաքում ել յեր-  
բեմն գալիս եր մեր աուն, բայց յերբեք կասկածի ա-  
բեմն չէր ալիլ: Իսկ այժմ... ո՞վ գիտե... ամառանո-  
ռեթ չէր ալիլ: Իսկ այժմ... միայնակ... յերկու-  
սով... Ո՛ր, դժոխք...

— Ի՞նչպէս և ձեր մայրիկը, — հարցրեց Մարգոն, աշխատելով «լուծել» լարված դրութիւնը:

— Կա՛մ և, — պատասխանեց Գարիկը կարծրած ու չփոթեցիւ աշակերտի նման:

— Նստե՛ք, ընկ. Գարիկ:

— Վոչ, շտապում եմ, գործ ունեմ... ուրեմն ընկ. Գուրգեն, վաղը կրե՛րեմ նամակը. ցտեսութիւն:

— Յը:

... Գուցէ և կապ կա սրանց մեջ, — ասում է յի ինքս ինձ, բայց ի՞նչ կարող եմ անել... արդեն ուշ է — աչժամ հեշտութեամբ կարող են ծածկել ամեն ինչ, նույնիսկ կինդան վրաս, իմ գնալուց հետո... Ձե, Հարմարյան, բո բանը չի կնոջդ սիրականին բռնելը — յեթե ուզում է յիբ մի լուրջ գործ տեսնել — պիտի վորոչ ծրագրով շարժվելիք, «ստրատեգիայի» և «տակտիկի» մասին մտածելիք...

— Սրանք ել ժամանակ են գտել նամակ հանձնելու, — ասաց Մարգոն, շատ դժգոհ տոնով. — կարծես չեն կարող պատուով ուղարկել... Գարիկի մայրիկին հարցում եմ, թե չե կոպիտ պատասխանով յետ կրդարձնելի:

Յես վոչինչ չպատասխանեցի և աշխատում է յի ցույց տալ, թե յերեխայով եմ դբաղված, բայց գաղտնազողի դիտում է յի Մարգոյին: Շարժումներից յերևում եր, վոր ջղայնացած է, ցրված. — ամաններն իրար վրա յեր ձրում անտեղի աղմուկով ու մի գործ մշուսի հետ խառնում: Շուտ-շուտ յերեան իմ կողմն եր անում, իբր յերեխային նայելու համար, բայց ամենի դբաղված եր ինձ դիտելով:

Յերկուսս ել մտադրազ է յինը, յերկուսս ել տանը-

վում է յինը — յետ այն հարցից, թե կա՞ արդյոք կապ Մարգոյի և Գարիկի մեջ... իսկ Մարգոն — ինձ թվում էր՝ մտածում եր — «չիտե՞մ արդյոք «այն բանը», թե չե»...

Մի հանգամանք վորոչ չափով հանդատացնում եր ինձ — Գարիկն ինձ թվաց շատ անհետաքրքիր, շարուն դեմքով, անտաղանդ քիթ ու պոռնոզով... Միակ բանը, վորի վրա դուցե վարելի լիներ ու շաղրութիւն դարձնել — դա նրա դանգուր մազերն է յին:

Յերեխային կերտելիլիս Մարգոն հայտնեց ինձանից չեք հեռացնում:

— Գուրգեն, ի՞նչու յետ տխուր. դուցէ մի բան և պատահել, ինձանից թազցնում ես...

— Ձե, վոչինչ չի պատահել... Միայն հոգնած եմ... Գիշերս չեմ քնել...

— Յես դիտեմ, Գուրգեն, յերբ հոգնած ես լինում, եղպես չես փոխվում... չե, յետ նկատում եմ, մեջդ ինչ վոր բան կա... ասա՛, մի ծածկիք, թե ինձ սիրում ես...

— Ասում եմ, վոչինչ չկա:

Ձրում է յի, վոր Մարգոն դիտի յե ընկնում իմ կատկածները վերաբերութեամբ և իր կոնայի համատութեամբ ուզում է դուրս քաշել դատնիքս: Յերբ նո նորեց թախտնձեց, յետ տեղի տվի:

— Ի՞նչ ասեմ, Մարգո, դիտես ելի... յերբեմն լինում են այնպիսի դրութիւններ... հիմնարկութեամբ մեջ հաճախ ծաղում են ինտրիգներ...

Մարգոն վեր թռավ տեղից:

— Ձլինի՞ թե կրճատել են քեզ:

— Ձե, եղպես բան չկա:

— Ե՛հ, ուշադրութեամբ մի դարձնել... ինտերիզներ միշտ կլինեն...

Մարգոն այժմ ավելի հանգիստ եր... յերևում— գուցե նա բուսական հավատաց, վոր «գործը» իրեն չի վերաբերվում... կամ գուցե նրան հանգստացնում եր այն, վոր յես այդպես հեշտութեամբ սկսեցի տեղի տալ և ծայրը բացել,— մի փոքր պատուհան բանալով դեպի իմ ներսը, նա հավատացած եր, վոր շուտով մնացածն ել կբացվի: Հետո նա սլիտի նկատեր, վոր յես այնքան ել չարացած չեյի, վոր անկարելի լիներ հաշտվելը...

— Հիմա մեր մասին մտածենք,—ասաց Մարգոն ժպտալով.— շուտով նախաճաշը պտտրաստ կլինի:

Նախաճաշը յեկավ ու յես մեծ ակորթակով կերա: Ինքս ել գարմանում եյի, թե ինչպես «այդ դրութեան մեջ» ցուցադրում եմ այդպիսի ակորթակ, բայց փաստ եր և Մարգոյին ել շատ հաճելի.— նա ել իր կողմից նըպաստում եր իմ «հիմնավոր» ուսուցում:

Յերբ աշխարհահռչակ Դրեյֆուսին հարցրել եյին, թե ի՞նչպես է նա կարողացել դիմանալ այդքան ստանձանքներին, նա պատասխանել եր.—

— Ամեն պարագայում, ինչ ել լիներ, յես շատ լավ ջնում եյի, դա ինձ փրկում եր...

Յես ել կարող եմ ասել—ամեն պարագայում լավ ուսում եմ, և դա ինձ փրկում ե...

Ուսուցում վրա տրամադրութեամբ ել բարձրացավ. նույնիսկ սկսեցի սրախոսել, ծիծաղել:

Մարգոն, տեսնելով, վոր մոռալ ամպերը քաշվեցին ճակատիցս, և սովորական ընտանեկան հունի մեջ ընկա, ինքն ել թե առավ և սկսեց առջևս փոռել իր ամ-

բողջ հմայքի փունջը.— գլուխը քնքշորեն թեքում եր, աչքերը կոկետորեն ինձ դարձնում, գաղտնի ցանկութեամբ ներշնչում, անտես թելերով ինձ պատում: Յերեխային խաղացնում եր,—բարձրացնում, համբուրում, հետո ինձ տալիս, վոր յես ել համբուրեմ:

Յես աննկատելի կերպով անձնատուր յեղա ընտանեկան իդիլային:



Յերեկոյան թեյից հետո յես ու Մարգոն միասին ջնացրինք Սեդիկին: Նորից աչքիս առաջ եյին Սեդիկի «թաթիկներն» ու «տոտիկները», նորից լսում եյի նրա մանկական թոթովանքը, շնչում նրա մարմնի կաթնահոտ բուրմունքը: Յերեխային ջնացնելուց հետո Մարգոն թիկնեց մահճակալի վրա մի առանձին գեղեցիկ պողպատով:

Նա իր նազովի մարմնով, կրակոտ աչքերով և տենչող շրթունքներով, այնպիսի հրապույր եր ստեղծում, վոր յես ինքս ինձ կորցնում, հալվում եյի նրա առաջ:

Յեվ յես ամբողջ եյութեամբ անձնատուր կլինեյի Մարգոյի սիրուն, յեթե այդ բուսական հանկարծ չհիշեյի Գարիկին.— «ո՛վ դիտե, —անցավ մտքովս— գուցե Մարգոն այս նույն պողպատի հրապույրում է Գարիկին, և նա համբույրներ է քաղում այդ վառ շրթունքներից... ո՛ր հրեշավոր յենթադրութեամբ...»

Սկսեցի քայլել սենյակում: Մի կողմից ինձ ալեկոծում եր «հրեշավոր միտքը», մյուս կողմից դրավում, քաշում եր Մարգոն իր դիցուհուն հատուկ հրապույրներով: Յես ասում եյի մտքուժամ— «տես, Հարմարյան,

չմոռանա, ինչի համար ես յեկել... Իմացիր, վոր Մարգոն կաշխատի իր հմայքներով քեզ պատել... դու պիտի ամուր կենաս, չենթարկվես, չհանձնես զենքերդ, ցուցադրես քո տղամարդութունը»...

Մակայն հե՛լ չոտ ե տանել... Մարդոյի ճշողական ուժն այնքան մեծ եր, վոր յես զողողուլում եյի... Այդ բոպէլին մեջն հարլեց, չքոցալ Հարմարյանի կամքը. զգում եյի միայն, վոր մի ուժ տանում ե ինձ զեպլի յերջանկութուն... Ինքնամոռացութեան մեջ յես մտեցա Մարգոյին... ու ինքն ել չեմացա, թե ինչպես ընկա նրա գիրկն ու հարկեցի անուշ շրթունքներին... և այդ մոմենտին արցունքները հորդառատ նկսեցին թափվել աչքերիցս:

Ո՛վ Հարմարյան, վո՛րքան սանախմենտալ ես յեղել դու, վո՛րտեղ մնաց քո «ստրատեղիան», քո վրեժը...

Յերբ Մարգոն նկատեց, վոր արտասուում եմ, վեր թռալ ու նայեց աչքերին.

— Գուրգեն, լա՛ց ես յինում... Ի՞նչ ե պատահել, կնչո՞ւ յես թագցնում ինձանից...

Նա վախեցած նայում եր ինձ, իսկ յես այլելի եյի ուժեղացնում լացս: (Այս բոպէլիս, գրելու ժամանակ յես մտածում եմ—զուցե Մարգոն վո՛չ թե վախենում եր, այլ ուրախանում, տեսլով մտքում—«սա լավ նշան ե—անձրե ե գալիս, ուրեմն շուտով հաչտութեան ծիրան կկապվի»)...

— Գուրգեն, ի՞նչ ե սրտահեղ... Մի՞թե յես քո Մարգոն չեմ,—ասա, մի տանջիր ինձ...

Յերբ նա մի քանի անգամ այլպես թախանձեց, յես

չուս հանեցի ծոցիս կապույտ նամակը ու ձեռքիս դանդալ շարժումով ձեռքի նրան:

— Մա ի՞նչ ե,—ասաց նա ձայնը խղիւժ ու արագութեամբ վեր թռչելով տեղից, մոտեցալ լամպին:

Մասները զողողալով, դեմքն այլայլված, նա բացեց ծրարն ու շունչը պահած սկսեց կարդալ ազասութեամբ:

Վերջացնելով, նա մի կողմ շարտեց:

— Ի՞նչ լքութուն... ասաց ու նվազած ընկալ աթոսին, ձեռքը ճակատին դնելով: Ապա ջղաձգորեն բուռնցքները սեղմելով, շարունակեց.

— Ոձե՛ր, կարիճնե՛ր... Ի՛նչ կեղտոտ միջոցների յես դիմում մեր ընտանեկան յերջանկութունը խորտակելու համար...

Ապա սկսեց հեկեկալ այնպես ուժգին, վոր յես ամեն ինչ մոռացած, վեր թռա տեղիցս:

— Իմ անարատ անունը ցեխի մեջ են ձգում... ասում եր նա հեկեկալով,—իմ անբիծ սերը ապականում... և դու, Գուրգեն, հալատո՞ւմ ես... այո, դու հենց այս նամակի պատճառով ես յեկել... ստուգելու Մարգոյին... Ո՛ր, յես այլևս մոռիկ մարդ չունեմ...

Մարգոն շարունակում եր հեկեկալ, իսկ յես, գլուխս կորցրած, կանգնել եյի նրա առաջ ու չդիտեյի ի՞նչ անեմ:

Հանկարծ նա թեք ընկալ աթոսին ու շնչասպառ ասաց.

— Ո՛ր, յես չեմ կարող դիմանալ... յես կմեռնեմ... Մկալեց այնպիսի հիստերիկային դրութուն, վոր յես կատարելապես պանիկի մեջ ընկա: Մի կերպ տեղա-

փոխելով Մարգոյին մահճակալի վրա, չոքեցի առաջն  
ու գրկած մեծ ճիգ էյի դործ դնում ուչքի բերելու հա-  
մար :

— Մարգո, հանգստացիր, —ասում էյի յես ջնջույշ  
աղերսանքով, — յես քեզ սիրում եմ... պաշտում եմ...  
չեմ կասկածել յերբեք... իսկ նամակը ցույց տվի, վո-  
րովհետև քեզանից չեմ թաղցնում...

Այսպես յերկար աչխատում էյի ուչքի բերել Մար-  
գոյին. փաղաքշում էյի, շոյում մաղերը, համբուրում  
ձեռքերը, բայց Մարգոն յերեսը թաղած բարձի մեջ—  
չարունակում եր հեկեկալ :

Յես բոլորովին փափկել, «կաթուկ» էյի դարձել ու  
դառնորեն փոշմանում էյի, վոր ցույց տվի չարաբաս-  
տիկ նամակը :

— Ներիր, Մարգո, ներիր, — չարունակում էյի  
յես, — ներիր քո Գուրգենին... յես չեյի յենթադրում,  
թե քեզ վրա այդպես կազդի... Աղաչում եմ հանդարտ-  
վիր... յես քեզ առաջվանից շատ եմ սիրում...

(Ով Հարմարյան, խոստովանվիր, դու այդ կետին  
եյ հասար, վոր փոխանակ սպանելու Մարգոյին, ներո-  
ղություն էյիր հայցում նրանից) :

Մարգոն վոչինչ չեր պատասխանում, բայց նկա-  
տում էյի, վոր իմ «ներիր»-ների ազդեցության տակ  
հետզհետե հանգստանում է : Կարծում էյի, հենց այդ-  
պես նվաղած կընի, բայց հանկարծ գլուխը բարձրաց-  
րեց ու արագիկ հայացքով նայելով ինձ, ասաց .

— Գուրգեն... ասա... հավատո՞ւմ ես այդ նամա-  
կին...  
[նկար]

— Վո՛չ, վո՛չ, յերբե՛ք... դա մի կեղտոտ զրպար-  
տություն է...

— Ո, յեթե իմանամ, վոր դեթ մի բույե դու կարող  
ես հավատալ, յես ինձ կսպանեմ...

Նորից սկսեցի հանգստացնել, համբույրներով ծած-  
կելով դեմքը : Սկզբում Մարգոն թույլ կերպով դիմա-  
դրում եր, իսկ հետո ինքն ել սկսեց համբուրել... և շատ  
չանցած—մենք ընկանք այնպիսի բուռն սիրային տենդի  
մեջ, ասես նոր էյինք սիրահարվել...

Այդ յերջանիկ բովի մեջ յես հալվեցի, մոռացա ա-  
մեն ինչ. ու յեթե այդ մոմենտին մեկն հիշեցներ, թե  
յեկել եմ «դավաճան» Մարգոյին սպանելու, անշուշտ  
յես հենց այդ ասողին կսպանեյի...

... Անմոռաց, յերջանիկ բույեներ, ժամեր էյին...  
վորջ դիշերը մի անուշ յերազ դարձավ, մի աննման  
«հարմոնյա»...

(Սակայն այժմ, յերբ անցել են որեր, յես հարց եմ  
տալիս— ո՞վ կարող է հասկանալ կնոջ «Փանդերը»...  
ո՞վ կարող է ասեղի ծայրով բաժանել իրարից կնոջ  
կեղծն ու անկեղծը : Յես, Հարմարյանս, անդոր եմ այդ  
հարցում... Ախ, Մարգո, դու կին ես... դու միաժամա-  
նակ իմ յերջանիկության ու տանջանքի աղբյուրն ես...)

\*\*\*

Յերկու որ անցկացրի ամբողջովին տարված սիրո ջըն-  
քանքով : Յես ընկել էյի այնպիսի անուշ հովվերգու-  
թյան մեջ, վոր մեր ուսցիոնալ դարում նույնիսկ հո-  
վիվները չեն վայելում և վորի նկարագրությունն իմ  
գրչի ուժերից վեր է :

Այն դժբախտ կապույտ նամակի կոշմարը մենք

վճռեցինք ընդմիջա մտապության տալ, այլևս նրա մասին չխոսել:

Ամեն ինչ լավ կընթանար, և «հարմոնյան» ընդմիջա կթեալութեբ ինձ, յեթե յերկրորդ ուրը, յերեկոյան մեզ չհանդիպեր Գարիկը:

Նա մոտեցավ մեզ, վերադառնում էլինք զբոսանքից:

Նրան տեսնելուն պես վերքս նորոգվեց, կասկածները նորից շարժվեցին մեջս: Բայց յես ի մի հավաքելով Հարմարյանի սառնասրտությունը, կարողացա ինձ պահել հանդիստ: Մենք միասին գնացինք տուն ու թեյի ժամանակ շարունակեցինք մեր զրույցը զանազան հարցերի շուրջը: Ի միջի այլոց Գարիկը պատմեց իր մի ծանոթի մասին, վորի կնոջ հետապնդելիս և յեղել իր ընկերը. յերբ վերջինս նկատողություն և ստացել այդ առթիւ, նա պատասխանել և.

— Ի՞նչ, դու քո կնոջը սեփականությո՞նք ես համարում...

Առիթից ողտվելով, Գարիկն սկսեց մեձ ասլոմբով, մաղերը թափահարելով խոսել կնոջ աղատաբժան մասին:

— Կինը պիտի անպայման աղատ լինի... Նրա առաջ չպետք և լինի վոչ մի խոչընդոտ վոչ ծնողները, վոչ ամուսնու կողմից...

Յես համեստ կերպով առարկցի:

— Դա շատ անորոշ և անպայման աղատությունն անհասկանալի յե... կան անխուսափելի կապանքներ, պարտականություններ, վոր գնում են կնոջ վրա բնությունը և ընտանիքը... որինակ, Ի՞նչպես ևք դուք վրձում յերեխաների հարցը...

Գարիկն իմ այս խոսքերի վրա ավելի թե առավ ու մի ամբողջ դասախոսություն թափեց գլխիս կնոջ առջամ կայության մասին, կրկնելով այն, ինչ շատ անգամ կարգացել ու լսել էլի:

— Դա ապագան և, — ասացի, — իսկ մենք խոսում ենք ներկայի մասին...

— Ի՞նչպես թե ապագա յե. դուք ընդունո՞ւմ ևք կոմմունիզմը, — հարցրեց նա շեշտակի.

Յես ընդունում եմ կոմմունիզմը... վորպես ապագայի... (քիչ մնաց ասելի— «ապագայի հարմոնյան», բայց ինքս ինձ զսպեցի և պահեցի լեզվիս ծայրին):

— Դա ի՞նչ կրոնական վերաբերմունք և. դուք կոմմունիզմը դարձրել ևք հանդերձյալ կյանք, ինչպես քրիստոնեյությունն եր անում... Ձեր ուղղումները տանում են կանանց հարցը դեպի բուրժուական հասարակակարգը, յերբ կինը տղամարդու սեփականությունն եր համարվում:

Կարծես գլխիս փայտով խիեցին: Յես սկսեցի առարկել, թե ինձ սխալ և հասկացել, բայց տպավորությունն այն եր, վոր Գարիկն և հաղթողը, նա յե կանգնած նոր տեսակետի զրահագնացքի վրա...

Մարդոն զգույշ քաղաքականություն եր վարում. — նա չեր մասնակցում վեճին: Յես յերկու անգամ նկատեցի, վոր նա դադտագողի ժպիտ նետեց Գարիկին ու իսկույն դեմքը դարձրեց իմ կողմը, ժպիտը փոխելով «պաշտոնական-ամուսնականի»:

Նա այնպես հանդիստ-դիջողական արտահայտությամբ եր նայում ինձ, կարծես ասում եր—

— Թեպետ դու հին տեսակետն ես պաշտպանում,  
բայց յես չեմ չարանում:

Յերբ Մարգոն նկատեց, վոր վեճը յերկարում է,  
նա միջամտեց.

— Իմ կարծիքով չարժե այդ շարուն հարցի շուրջը  
յերկար խոսել, մանավանդ վոր յես նկատել եմ—տղա-  
մարդիկ յերբեք լուրջ չեն խոսում կանանց մասին. ուս-  
տի, իբրև կին, առաջարկում եմ այդ հարցն որակար-  
դից հանել...

Բուպեյայես տիրեց լուսթյուն, վորից ողտվելով,  
Մարգոն փոխեց խոսակցությունը:

— Ընկեր Գարիկ, ինչո՞ւ ձեր քույրը չի յերևում:

— Նա այժմ դրողված է. արդեն ստացել է իր ու-  
ղած գրքերը և պատրաստվում է քննության...

— Իսկ ձեր յեղբոր—Վաղիկի վուտքը լավացա՞վ:

— Այո, բանից դուրս յեկավ, վոր բժիշկները չեն  
հասկացել... Մի հասարակ բան է յեղել...

Յերևի դալով Մարգոյի գործելակերպից, վոր իր  
յելույթն անտեղի յեր, Գարիկը վեր կացավ և հրածեչտ  
տալով, դուրս դնաց, վոչ մի խոսք չասելով իր ուղար-  
կելիք նամակի մասին:

Գարիկի զնալուց հետո յերկար ժամանակ տրամա-  
դրությունս յետ չեր դալիս: Յերևիոն համարում էյի  
թունավորված, մեր ընտանեկան հարմոնյան խանդար-  
ված... Նորից յերկինքը մթնեց աչքերիս ու կասկած-  
ներն սկսեցին ասեղների նման մարմինս ծակծկել:

«Այո, Մարգոն նրան սիրում է... մրմնջում էյի  
յես,— նրա թաղուն սիրաժպիտ հայացքներն այդ էյին

ասում... պարզ է... Գարիկը տիրել է նրա սիրտը... Իսկ  
յես մի կողմնակի մարդ եմ...»:

Հետո—մի ուրիշ «կետ» էլ եր ինձ դադում... Հո-  
գուս խորը ծալքերում յես դդում էյի, վոր Գարիկը ճիշտ  
էր ասում—ինձ կարծես սիրելի յե հին տեսակետը... Ա-  
մեն անդամ, յերբ լսում եմ կանանց աղատադրման մա-  
սին, թվում է, թե Մարգոյիս պիտի խլեն ինձանից, և  
սկսում եմ մտածել մի ամուր, անբաժանելի կապ ստեղ-  
ծելու մասին... Ներկա դրությունը, յերբ կինը աղատ  
ծելու մասին... Ներկա դրությունը, յերբ կինը աղատ  
կերպով կարող է բուժանվել ամուսնուց—վախեցնում է  
ինձ, վորպես սպառնալիք իմ ստեղծած հարմոնյայի  
դեմ:

...Այս ճախորդ տրամադրության մեջ յես Գարիկի  
զնալուց հետո սկսեցի հարձակվել նրա «անհեթեթ» հա-  
յացքների վրա: (Այսպես է միշտ Հարմարյանը—նա  
հարձակվում է իր ախոյանի վրա, յերբ վերջինս բացա-  
կայում է...):

Մարգոն այժմ բացարձակ ինձ եր պաշտպանում:

— Գուրգեն, դու ուղղակի ինձ դարձացնում ես...  
Չե՞ վոր Գարիկը մի անփորձ տղա յե և դադավար չունի  
ընտանեկան կյանքի մասին... Արժե՞ արդյոք ուշադրու-  
թյուն դարձնել նրա միամիտ դատողությունների  
վրա: Թո՛ղ այդ փիլիսոփայությունը, արի մեր Սեդիկին  
քնացնենք... սա յե մեր յերջանկությունը... Ես հյու-  
րերը ուղղակի ցավ են—միշտ խանդարում են մեր իղիլ-  
լիան...

Մարգոյին բերանում այնպես լավ հնչեց այդ «ի-  
ղիլլիան», վոր յես ամեն ինչ մոռացա. նորից հեռացան  
ամպերն ու ընկա ընտանեկան յերջանկության մթնոլոր-  
տը: Սեդիկին քնացնելուց հետո Մարգոն եքսպրոմտով

ընթրիք պատրաստեց, վորը կերանք իրար անընդհատ հյուրասիրելով, ապա սկսեցինք սիրտ-սրտի զրուցել: Իսկ այնուհետև—կուպեյի բանաստեղծական վոճով դրել—«յերջանկութեան թեկերով մենք սավառնեցինք դեպի յերազների աշխարհը»:

\*\*\*

Առավոտը վեր կացա թարմացած, յերջանիկ տրամադրութեան մեջ: Ինձ թվում էր, թե այսուհետև մըլտապես հաստատվել եր վաղուց յերազած հարմոնյան ու այլ ևս վոչ մի ամպ չի կարող մթաղնել իմ յերկինքը...

Նախաճաշելուց հետո պատրաստվում եյի կայարան դնալու, յերբ յեկավ Գարիկը, հետը բերելով նամակը:

Յես նրան ընդունեցի բարեկամաբար ձեռքը սեղմելով ու վոչ մի թշնամանք չեյի դրում նրա դեմ: Բոլորս միասին դուրս յեկանք փողոց, վորտեղ ինձ սպասում էր կառքը: Յերկար համբույրներ տալով Մարգոյին ու Սեդիկին, յես այնուհետև առանձնապես դաացված պինդ սեղմեցի Գարիկի ձեռքն ու... հանկարծ, ինքս ել չգլտեմ թե ի՞նչպես յեղավ... համբույրվեցի նրա հետ...

Այդ բոսիւյի դիմացի ամառանոցից լսից կանացի բարձրաձայն ծիծաղ, վորն ավելի ճիշ կարելի յեր համարել: Ծիծաղը նորից կրկնվեց, ավելի բարձրաձայն, բայց Մարգոն խիզոնն ու շաղբութունս դրավեց իր կողմը: Յես նկատեցի նրա դեմքին մի դստված կատաղութուն, վորը նա ամեն կերպ աշխատում էր քողարկել: Հանելով ծոցից «կապույտ» նամակը, նա մեկնեց ինձ, դեմքին շինծու ժպիտ ձևացնելով, ձեռքը կոկետորեն շարժելով:

— Գուրդեն, վերցրու այս նամակը, քեզ պեսք կգա...

Այդ մոմենտին յես մի անմեղ բան համարեցի այդ քայլը, վորպես մեր հաշտութեան և սիրո մի նոր նվաճում, բայց այժմ կարծում եմ, վոր Մարգոն այդ արավ դիմացի որիորդներին դադելու համար, իրրև պատասխան նրանց ծիծաղին: Նա դրանով ասում էր—«այս անոնիմ նամակը յերևի դուք եք գրել, բայց տեսեք—նա իմ ձեռքին ե և յես շատ հանդիստ, նույնիսկ խնդարով վերադարձնում եմ իմ ամուսնուն, վորը վոչ մի ուշադրութուն չի դարձնում ձեր խժրժանքի վրա և շարունակում ե սիրել և պաշտել ինձ»...

Կառքը շարժվեց: Անցնելով ամառանոցի յերկար փողոցով, յես վերհիշեցի այն մոռյլ տրամադրութեանը, վորի մեջ գալիս եյի քաղաքից ու ինքս ինձ հարց տվի—«Հարմարյան, ի՞նչպես յեկար և ինչպես ես դրտում... յեկար կատարութեան սպանալիքներով, Մարգոյին սպանելու մտադրութեամբ և դնում ես այնպես խաղաղ, ասես վոչինչ չի պատահել... խոստովանվիլ, Հարմարյան, ճիշտ չե՞ր գրել Մարգարյանը քո մասին—հավը չի կարող թուշել, Հարմարյանը չի կարող կրուվել»...

Սակայն այդ բոսիւյի մեջս խոսեց հոգուս «ներքին պարունակութունը»—«Հարմարյան լռի՛ր և լռի՛ր... ասում եր ներքին ձայնը,—քո կյանքի հարմոնյան հաստատվել ե և քեզ մնում ե միայն պահպանել և պաշտպանել նրան...

Լուիլ:

Քաղաք վերադառնալով, յերեք օրից հետո նորից նամակ ստացա նույն կապույտ ծրարով . . .

«Ընկեր Հարմարյան, գրում եր իմ անանուն թղթա-կիցը, մինչև այժմ յես այն կարծիքին եյի, թե յերջան-կությունը յերկուսով ե լինում . . . վորքա՛ն միամիտ եմ յեղել . . . յես չգիտեյի, վոր յերեքով շատ ավելի համով ե լինում . . . յերբյակ համբույրներով . . . յերբյակ սըր-տարուղիս դեղումներով . . .

Չամադանց ուրախ եմ այս գյուտի համար, վորի չը-նորհողը դուք յեղաք . . . կաշխատեմ ամեն կերպ հետեել ձեր յերջանիկ օրինակին» . . .

«Ձեր բարեկամ—  
Յերեք կետ ( . . . )

«Իմ հասցեն— լուսնի վրա, հանդած հրարխի մոտ . . .

«Հ. Գ.—Յեթե նորից դալու լինիք ամառանոց, կույրի ակնոցներ դրեք ձեր աչքերին.— դա անհրաժեշտ ե լիակատար յերջանկության համար . . .

Նույնը»:

Կարդացի ու նորից ալեկոծվեց սիրտս, նորից ա-ռաջս բացվեց անդունդը . . . Յես զգում եյի, վոր կապույտ նամակի մեջ թույն կա, այդ պատճառով ել ստանալով հիմնարկում, իսկույն չբացեցի ծրարը, այլ պահեցի մոտս տանը կարգալու համար:

Քայլում եյի սենյակում ու անդոր ցատումի ալիքներ ուղարկում տարածության մեջ:

«Ո՛ր, թույն ե, թույն ե Մարգոն ամբողջովին, —ա-ռում եյի ինքս ինձ.— Ի՛նչ դիվային նենդությամբ նա

կարողացավ վոչ միայն ճարպիկորեն քողարկել դաժա-ճանությունը, այլ և ավելի սիրելի դառնալ իմ աչ-քում» . . .

Ու նորից կանչում եյի մտքումս— «սպանել, սպանել Մարգոյին . . . հետո ինքս ինձ . . . վե՛րջ տալ ամեն ին-չին» . . .

Բայց քանի քայլում եյի, այնքան ավելի յեր ուժե-ղանում «հոգուս պարունակությունից» յեշնող մի ձայն, վորն ասում եր— «Հարմարյան, պետք ե ի նկատի առ-նես, վոր կարող ես սխալվել Ոտելլոյի նման և զրկվել զո Մարգոյից . . . Ինչո՞ւ սպանել . . . Ձե՞ վոր հենց այդ նե թշնամիները, նամակ գրողները— տեսնել ցանկանում զո թշնամիները, նամակ գրողները— տեսնել ատրճանակը ձեռիդ . . . Ուղում են սպանություն, հուզիչ ատրճանակը— զո յերջանկությունը կործանելու հա-տեսարաններ— զո յերջանկությունը կործանելու հա-մար . . . Վո՛չ, դու չպետք ե ընկնես այդ վորոգայթի մեջ . մի՛ թե վայել ե Հարմարյանին ատրճանակով վճռել հար-ցը, այս սոցիալիստական դարում . . . Ի՛նչու սպանել, քանի վոր կա խաղաղ միջոց, որինակ— բաժանվել Մար-գոյից, յերեսային ել թողնել նրա մոտ» . . .

Բայց հենց վոր պատկերացրի այդ բաժանումը, զղացի խորապես, վոր աչքերս պատվում են սզավոր ամ-պերով: Ահա յերևակայում եյի— Մարգոն, Սեդիկն ինձ հետ չեն . . . Յես մենակ եմ, ախուր վորպես մի բու . . . կոր ծանվում ե իմ յերջանկությունը և յես ախուր խորհրդա-ծում եմ— կարո՞ղ եր արդյոք գտնվել մի նոր Մարգո, վոր վերականգնի նորից իմ հարմոնյան . . .

Վո՛չ, վո՛չ . . .  
«Ուրեմն, յեթե չես ուզում բաժանվել, — շարունա-կում եր ներքին ձայնը, — կնշանակի ընդունում ես Մար-գոյին այնպես, ինչպես վոր կա . . .

—Յևս դիտեմ միայն, վոր չեմ կարող բաժանվել Մարգոյից—ասում եմ ինքս ինձ:

Այս վճռին հանդերձ, յես արագացրի քայլերս, և վերովհետև կես դիշերից շատ եր անց, հարեանս սկսեց թխթխկացնել միջանկյալ դուռը, վորպէս բողոք իմ ամսկալի քայլելու դեմ:

«Յեթե քո կիներն այդպէս լինեց, —ասացի մտքումս, —կտեանն յինք թե ինչպէս յերկու դուռք կոչիլ կամաշէ յեր քայլելով»...

Ո՛, յերբե՛ք, յերբե՛ք, չեմ բաժանվիլ իմ Մարգոյից, կրկնում եր մի ձայն իմ ներսում, յերբ յես անկողնում պառկած յերազում ելի նրա մասին:

#### Ո՞ՐՈՍՏՈՍԻ 20.

Նորից նստում եմ պատշգամբում, իմ հին բազկաթոռի վրա ննջում—անբջում եմ...

Մտախ մեջ խաղաղություն և տիրում... ել չի տատանվում իմ իդիլլիան.—Մարգոն դարձյալ իմ անբաժան կիներն է...

Նստած բազկաթոռի վրա նորից վերանում եմ մտքով դեպի այն աշխարհը, ուր վարդապույն յերազն է իջեալ, ուր Մարգոն, վորպէս սիրո գիցուհի, առաջնորդում է ինձ դեպի յերջանկության տաճարը...

Բայց հենց այդ մտապայտության մոմենտին բազում կանչում է աքաղաղը, թեև ըր պատճառից թախ տալիս, նրան պատասխանում եմ զիլ կանչով իր ախոյանը հարեան բակից, և ահա սկսվում է աքաղաղների մենամարտը—բարձր ցանկապատի նեղ արանքից, վորից հազիվ են անցնում նրանց դլուխները:

Նայում եմ աքաղաղներին ու նորից հարց տալիս

1020  
ինքս ինձ—կարո՞ղ ե լինել ներդաշնակություն—հարմոնյա—այս կյանքում. յերբ նույնիսկ իրար հետ վոչ մի աննչություն չունեցող արարածները կատաղի կռիվ են մղում իրար դեմ...

Արդյոք թյուրիմացություն չե՞ իմ խաղաղությունը... իմ փոքրիկ հարմոնյան, վորը մի փոքրիկ նափակ է դուռ ալիքների մեջ... առադասաները պատատու եմ և դուռ ալիքների մեջ...

Արդյոք ժամանակը չե՞ յերես դարձնելու դեպի այն մեծ Հարմոնյան, վորի ալիքների մեջ եմ յես... վորին ձգտում է մարդկության ծով-բազմությունը...

... Բայց այդ հարցին յես չեմ պատասխանում. նորից ննջում—անբջում եմ... մի քնքույշ շղարշ է իջնում «հողուս պարունակության» վրա ու պարտւում ինձ հարմոնյայի յերազներով...



Յ Ա Ն Կ

	Եջ
Կարփր հասնացուն . . . . .	3
Մոզական օրջանում . . . . .	33
Տեպիլ . . . . .	46
Փուշ Աբելլ . . . . .	60
Ճամբին . . . . .	82
Լույսեր . . . . .	106
Հազար գլխանի . . . . .	118
Շեմփին . . . . .	156
Հարմարյանի հուշատետրից . . . . .	174

---

ՀՀ Ազգային գրադարան



NL0328781

2 1327